2282

5246

Սանամյան Հ

Աարկամագին տարեցույց

1921

Պոլիս

1920

059
Ս-24

digitised by A.R.A.R.@

2010

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

2282




digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

059
Մ-24

ԵՐԹ. Տ. ՄԱՆԱՎԵԱՆ

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

# ՏԱՐԵՑՈՅՑԸ

# 1921

Բարեւ հայեր Ձեզ բանւ
Միշտ երջանիկ լոյս, արեւ
Դժբաղդ Ազգիս արդարեւ
Ահա՜ ծագեց ա՛րդ, արեւ:

ՀԱՅՔԱՂ ԳՐԱԴ.
Спец. Отдел
Гос. Публичная Б-ка

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԱՎԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1920

Printed in Turkey

digitised by A.R.A.R.@

# ՆԱԽԱՄՈՒՏ

## ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՔԱՐՈԶԸ

*Արհաւիրքէ արհաւիրք, հալածանքէ հալածանք,*
*Տառապանքէ տառապանք, բոլոր հայերս որ անցանք.*
*Թուրք եղեռնի գնդերու՝ դեռ մեր ցաւը չը մոռցանք.*
*Մինչեւ ե՞րբ այս դասակնիք եւ մեր գլխի այս փորձանք...*
*Բայց եւ կըսեն, ՀԱՅ ՈԳԻ՛, հայերունս է քու՛ն յանձանք.*
*Որ սկիզբէն իրարու Սէր, միութիւն չ՚ունեցանք...*
*Ըլլանք կղեր, աշխարհիկ, մեծէն մինչեւ փոքրիկ անձ*
*Մինչեւ այսօր մէկ մէկու դաւ կը նիւթենք, չարենք ցանձ.*
*Ի բաց ձեզմէ ա՛լ, հայե՛ր, ատելութիւն ու դաւեր.*
*Անձնամոլութիւն, խարդաւանք եւ մատնութիւն Ազգաւեր...*
*Հեռու այլեւս անկէ վերջ, հեռու՛ մեզմէ խեռ, նախանձ,*
*Իրար գրկենք, համբուրուինք անկեղծօրէն, սիրաբանձ.*
*Ու միանանք մէկ մէկու սրտով մտքով ու գործով,*
*Ա՛լ մինչ նստինք ու եղնենք գիշեր ցերեկ քովէ քով,*
*Ու Սէր կնքենք անխարդախ, սէր մը մաքուր, ջինջ ու սաֆ,*
*Ու խմբուինք այլեւս մեր Հայրենի դրօշի տակ.*
*Դաշնակցական, Հնչակեան, Չեզոքներ կամ Ռամկավար,*
*Եկ միանանք՝ վանելով տգիտութեան սեւ խաւար,*
*Գէթ անկէ վերջ ունենանք, Սէր, Միութիւն նաեւ Գութ,*
*Որ նորակազմ Հայաստան մեզմէ տեսնէ մեծ օգուտ...*

1920 Աղեքսանդրիա — ՀԵՂԻՆԱԿԸ

92338-42

868-2002

digitised by A.R.A.R.@

Printed in Turkey

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

Մինչ ծառեր խի՜տ փռա՛ծ,
Շրջին իսկ անցորդ.
Ամեն տեղ՝ ֆըրի՛զ,
Դու իսկ կը խորհիս՝
Թէ ինչպէս ապրիս.
Ես կըսեմ, ապրի՛ս,
Ճարպիկ Սարկաւագ,
Որ՝ ճիգով մ'աւագ՝
Լոյսին տառ այսօր,
Տարեցոյցդ այս նոր,
Որ զուտ հայկական,
Եւ ուր հայ-կակա՛ն,
Եւ նիւթեր այնքան,
Խիտ լա՛ւ բաւական,
Հետաքրքրական
Նկարներ ալ կան...
Իրա՛ւ, հայ՝ ա՛ս տան,
Պանծայ ՀԱՅԱՍՏԱ՛Ն...:



digitised by A.R.A.R.@

## ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅՐ

Ծնած է 1866ին Կեսարիոյ Կերմիր գիւղաքաղաքը: Տասնըչորս տարեկանին, անտիական հասակին մէջ հեռացած իր հայրենիքէն եւ տասը տարի մնացած Թուրքիոյ մէջ Եօզղատ, Պըր-ճէնիր եւ Կ. Պոլիս. իբրեւ պաշտօնեայ ծառայած է հոն:

1900ին ամուսնացած է Ալեքսանդրիա, հանգուցեալ Մերզուֆանցի Գրիգոր Մամուրեանի աղջկան հետ, իր գործունեայ եւ ճարպիկ բնաւորութեան շնորհիւ տասնը հինգ երկար տարիներ աշխատած է Մելքոնեան տան մէջ: Շուրջ տասնը չորս տարի կըն է որ իր անձնականին մեծ վաճառականութեամբ կըքայի Աղեքսանդրոյ հրապարակին վրայ:



ՏԵԱՐ ՋԻՒԱՆ ԵՍԱՅԵԱՆ

Աւասիկ ինքնաշխատութեան տիպար հայ մը՝ որ ի հարկին չը մոռնար ոգեւորել որբին, աղքատին ու իր հայրենիքին, որուն մէկ գործնական ապացոյցն ալ ի յայտ բերաւ 1920 Մայիս 20 ին Հայաստանի հանրապետութեան հռչակման հանդիսաւոր Տօնին օրը՝ Աղեքսանդրիոյ Հայոց Առաջնորդարանին վրայ առաջին անգամ պարզուելիք հայկական դրօշի աճուրդին մասնակցելով որմէ գոյացած 600 եգիպտական ոսկիի արդիւնքին վրայ միանուագ 200 եգիպտական ոսկիի յաւելումով՝ արտեռանդն նուիրատուութեան մեծ ժեստը ցոյց տուաւ Ազգասիրաբար եւ իր ձեռքով պարզեց նոր հայկական եռագոյնը:

Իսկ այս անգամ Տարեցոյցիս հրատարակութեան գործին եւս ինքնայօժար իր բարոյական աջակցութիւնը շնորհելու բարի կամեցողութիւնը ունեցաւ:

Այս առթիւ հրապարակաւ մեր շնորհակալութիւնը:



digitised by A.R.A.R.@

# ԱՐՁԱՆ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ
## ՀԱՐԱԶԱՏ ՁԱՒԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
## ԵՒ
## ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅՈՒՆ
## ՏԵԱՐ ԺԻԽԱՆ ԵՍԱՅԵԱՆԻ
— ԿԵՍԱՐԱՑԻ —

Թո՛ղ որ առնեմ ձեռքս քնար,
Հնչեմ ուժգին որքան հնար...
Ներբողելու քու վեհ հոգին,
Որ նուիրուած հայրենիքին...

Հայաստանի սէրն ու կարօտ՝
Կայրի մէջդ իբրեւ վառօդ
Սիրտդ ալ անհու՜ն, ահ՛ սիրավառ,
Միշտ կը ծխայ իբրեւ բուրվառ:

Հայրենաբաղձ ազնիւ պանդուխտ
Միակ փափաքդ ու միակ ուխտ՝
Հայաստանն էր տեսնել կայուն,
Ահա գթաց Աստուածն հայու՜ն...:

Հայաստանի ճանաչման օր,
Բացիր սիրտդ ու քսակդ անո՜ր–
Ալեքսանդրիոյ մէջ նախ որոշ՝
Պարզելով դու հայկական դրօշ:

Այր մեծազօ՜րծ, նաեւ արդար,
-Որբին հիգին դու մխիթար,
Տարեցոյցիս իսկ սատարո՜ղ,
Յիշուի անունդ հրճուանքով թո՛ղ..

Իսկ մասիսի լուսապսակ
Աւետաւոր ջինջ հրեշտակ,
Թ՛ող պարփակէ թեւերուն տակ,
Ազնիւ սրտիդ վեհ յիշատակ... :

Տարեցոյցին Հեղինակը



digitised by A.R.A.R.@



Պ. ՈՒԻԼՍԸՆ

*Աշխարհի Նոր Մեսիան եւ Ազգերու իրաւանց պաշտպանը*

digitised by A.R.A.R.@

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Միացեալ Նահանգներու նախագահ, Պ. Ուիլսընէ Սարկաւագին ուղղեալ Պոլսոյ Ամերիկեան հօ-գոմիսէրի միջոցաւ։

Constantinople, le 9 Mai 1919.

A Monsieur l'Archidiacre

Harutioun D. Manavian,

Constantinople.

Monsieur l'Archidiacre,

En me référant à votre lettre du 20 mars dernier, par laquelle vous demandiez la transmission de votre "Calendrier de la Liberté, année 1919" au Président des Etats-Unis, à qui vous l'avez dédié, j'ai le plaisir de vous faire savoir que ledit calendrier a été dûment reçu par M. le Président Wilson et que je suis chargé de me faire auprès de vous l'interprète de sa haute appréciation pour l'attention que vous avez eue pour lui.

Veuillez agréer, Monsieur l'Archidiacre, l'assurance de ma considération très distinguée.

Le Commissaire des Etats-Unis d'Amérique

*Կ. Պոլիս 9 Մայիս 1919*

*ՏԵԱՐ ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳ*

*Համաձայն ձեր վերջին Մարտ 20 թուակիր նամակին, որով կը խնդրէիք Ձեր 1919 տարւոյ Ազատութեան Տարեցոյցին յանձնումը Միացեալ Նահանգներու Նախագահին, որուն ձօնած էիք զայն, հաճոյքը ունիմ Ձեզ իմացնելու թէ վերոյիշեալ տարեցոյցը սիրով ընդունուած է Պ. Նախագահ Ուիլսընի կողմէ, եւ որուն համար ես պաշտօն ունիմ Ձեր մօտ իր բարձր գնահատման թարգմանը հանդիսանալ ու իր մասին Ձեր ունեցած ուշադրութեանը համար։*

*Ընդունեցէք Տիար Սարկաւագ, մեր խորին համարումին հաւաստիքը։*

Ամերիկայի Միացեալ Նահանգներու գօմիսէր

ՃՕՐՃ ՐԸՎՆՏԷԼ

digitised by A.R.A.R.@



ՏԷՐ ՏԷՐ ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@

# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՌԹԻՒ

*Լսեց Աստուած հայ բազմաչարչար Ազգիս եւ համայն հոգեւորականութեան աղօթքը* եւ պարգեւեց քաղաքական անկախութիւն: Ողջունում եմ Հայաստանի Քաղաքական ծնունդը, օրհնում եմ Հայաստանի Հանրապետութիւնը, իր քաջարի զինուորութիւնը եւ սիրելի հայ ժողովուրդը եւ աղօթում եմ առ Բարձրեալը, որ արժանացնէ Մասիսի գլխին Հայկական դրօշակի ծածանումը եւ Միացեալ մեծ Հայաստանի Հասարակապետութիւնը:*

*Կեցցէ Անկախ Հայաստանը:*

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1920 Յունվար 24
ԷՋՄԻԱԾԻՆ

(*) Ես պիտի բռնեմ աւելի Սարկաւագին աղօթքը, որ այնքան տառապեցաւ թուրքին լուծին տակ՝ հայ կղերին երեսէն:



digitised by A.R.A.R.@

# ՍՐԲԱԶԱՆԻՆ ՔԱՐՈԶԸ

*Գում-գաբուի նորակառոյց պատրիարքարանին մէջ*

## 1913

—

Գլուխս գտակ, ոնքըս՝ մէկ տրեխ,
Դեռ ես՝ անմօրուս, մանաւանդ անպէ՛խ.
Բու՛ն իսկ Սղերդցի, անառակ մէկ լաճ
Միշտ կը քշէի հօրս արօրն ու մաճ,
Մայրենի լեզուս՝ բուն քրդերէն էր.
Չը գիտէի թէ ես հայ եմ ծներ...
Վերջապէս ես մէկ գիւղացի տղայ՝
Սարերու վրայ՝ լաւ հովիւ եղայ...
Ա՛լ կարածէի օրն 'ի բուն միշտ ես...
Էշերու ոնմակ, ջորի, կով ու եզ.
Ես կայտառ տղեկ, ախորժակս ալ բաց,
Օրն ալ կուտէի քանի մ'օխա հաց,
Հետը քանի մը ձիթապտուղ. սո՛խ.
Սրտիս մէջ չը կար անանկ քէն ու ո՛խ
Իսկ կէս օրերը երբոր սաստիկ տաք՝
'Նստէի վայրի կաղնիի մը տակ...
Քովէս կը սահէր կարկաչուն վտակ.
Գեղջուկ մէկ տղեկ՝ կեանքիս անգիտակ՝
Մերթ ձեռքըս առած հովուական սրինգ
Կերգէի, ինչ՞է, սա պարապ Երկինք...



digitised by A.R.A.R.@

Չի կար ինծի պէս հատ մ'այ հայ որեար
Կերգէի մինչ վերջ «Եկո՛ւր դու իմ եար…»
Գիշերէ գիշեր կերթայի լոկ տուն
-Ինչ պիտի ըլլայ կեանքն հովիւ մարդուն…-
Այսպէս լեռնական ես հովիւ մէկ մարդ
Կանցնէի օրերս միշտ ուրախ զուարթ.
Մտքես չէ՛ր անցներ սակայն օր մ՚ երբեք.
Թէ ես մէկ հովիւ հայ գիւղացի մ'հէք,
Օր մը պիտ մտնեմ միացեալ դպրոց,
Ու պիտի դառնամ մարդ մը արտառոց
Ու պիտի սորվիմ խօսիլ հայերէն,
Պատմութիւն, կրօն, քանի մը օրէն.
Ու պիտի գիտնամ թէ՝ հայ եմ եղեր.,.
Ասոր ալ պիտի դառնամ ես Կղեր…
Մտնելով մէկ օր դպրեվանքն Արմաշ՝
Իբրեւ մէկ անբան տղայ մը անտա՛շ..,
*Ինքզինքս կզգամ ես գոռո՛զ, հպա՛րտ.*
Արդ միացեալին եմ երախտապարտ…
Որ մալ դաս տուաւ ինծի Աստուածաբան*
Անկէ սորվեցայ այլեւս ամէն բան,
Որպէս զի տեսնեմ որ մ'այ ես մեծ գործ…
Դառնալով իրեն պէս վարպետ ու փորձ.
Ո՛վ կը յուսար որ ես մարդ մը միջակ,
Մէկ օրէն աղին փոխուէր իմ վիճակ…
Ու պիտ ըլլայի օր մ'այ պատրիարք,
Գալով Սրբերդէն՝ մտնելով այս յարկ…
Փափկասուն տիկնայք, եղբարք իմ եւ հարք
Իրաւ ինծի համար պատիւ մ'է աս փառք.
Կամ մեծ շնորհ մը իսկ անօրինակ.,.
Որ ազգը այսօր գտաւ զիս մինակ…
Երէկ ես հովիւ, այսօր պատրիա՛րք.
—Կրնայ անձնիդ սա՛ հրաշքներու կարգ…—

---
* Օրմանեան

Մականի տեղ ձեռքս տուիք գաւազան
Կը գոչէք այսօր զիս ալ «Սրբազան»·
Ո՜վ կը յուսար որ մարդ մը տի գար հո՛ս,
Ու պիտի կարդար Ձեր գլխին քարոզ·
Բայց ազգին գործերն՝ անթիւ, անհամա՛ր,
Ես այս պաշտօնին, իրօք անյարմար.
Վաղը, այս ամէն գործերուն համար,
Ազգին ես ընտո՞ր պիտի տամ համար...
Դրիք ուսերուս վրայ մէկ մեծ բեռ,
Ասկէ վերջ գլխիս գալիք չ'եմ գիտեր...

*
* *

Բայց ե՞ր մտածեմ վրան ես ասոր,
Հիմա իմ տակս է ոսկեզօծ աթոռ,
Ծայրն ալ կայ նոյնպէս նիշտ ոսկի յիսուն,
Շուրջս բոլորտիս տիկնայք փափկասուն.
Աս աշխահամբոյր, ա՛ս սիրոյ համբոյր,
Խերն անիծեմ ես ասանկ Ազգին կոյր:

Տաղաչափեց Սարկաւագ





digitised by A.R.A.R.@

# ՀԱՅՈՒՆ ԴԱՀԻՃՆԵՐԸ

## ԿԱՄ

## ՀՐԷՇՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

## ԵՒ

## ԻՐԵՆՑ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

*Ա՜հ, մեծ երկիր մը — բռնակալ Համիտ—*
*Հայաջինջ գազան՝ գող ու նենգամիտ.*
*Երեսուն երեք տարիներ յաճախ*
*Մարեց հայերուս ա՛յնքան տուն, օճախ...*
*Մեծ մարդասպանը, այսպէս, ամէն տեղ,*
*Հայ արիւններուն վազցուց մեծ հեղեղ,*
*Տալով խիստ հրաման ջարդի ընդհանուր.*
*Գրկեց չաստերու վիզին ալ անուր.*
*Նոյն խուլ կտրիճներ ըրաւ ծովանոյն.*
*Հնար չէ՛ գծել նախանձերն այս մարդուն,*
*Ունէր իր շուրջն ալ, կըսեմ այս պիտակ,*
*Կարգ մ՚ալ սնգիփոր մարդիկ հացկատակ*
*Որն Արապ Իզզէթ. որ Փաշա Սաքալ*
*Որոնք վարդ էին հայուն դէմ անխնայ.*
*Հայերը զարնուած իր դէմ սուլթանի՝*
*Ցոյց մը սարքեցին նախ Պապը Ալի.*
*Հազար ութ հարիւր իննըսուն վեցին.*
*Այսպէս Պոլիսը պահ մը յուզեցին.*
*Սակայն այս հաշիւն եղաւ խիստ խոտոր,*
*Մաս մ՚ հայեր եղան հոն կտոր կտոր...։*



digitised by A.R.A.R.@

Հազիւ տասնը հինգ տարու եւ կայի,
Օր մ'ալ ծագեցաւ դէպքը պանծալի.
Վեր վար գրուած էր շէնքը համակ.
Այն ատեն կոչուող Դրօշակեան խմբակ.
Իսկ յաջորդ օրն ալ, Իննսուն վեցին.
Պօլսոյ մէջ թուրքեր հայեր ջարդեցին.
Վախճանն ալ եղաւ եւ սակայն ասոր՝
Մինչ վերջ կախաղան, հալածանք, աքսոր...
Այսպէս ճիւաղին ջարդի հրաւէր.
Ամէն կողմ գործեց սոսկալի աւեր.
Պօլսոյ մէջ կարգ մ'ալ հայոց արուարձան
Այն օրուան ջարդէն գերեզման դարձան.
Խասգիւղէն մինչեւ Ղալաթիոյ ծայրը,
Հայու տուն, խանութ թուրքեր առին ալ,
Մէկ մէկ գայլ դարձան իսկ սոխալլո՛ւկ
Աշխարհի ազդեց սարսափ ու թալուկ,
Ամէն կողմ սփռուած հայ արի՛ւն դիա՛կ
Հրէշին միտքն էր մինչ հայ չմնէր միակ.
Ապահովութիւն ա՛լ չկար բնաւ,
Ապաստանեցան շատեր շոգենաւ...
Որ ֆրանսական, աւստրիական...
Սարսեցաւ այսպէս հայը բանական.
Իսկ նահրներուն մարդոց ալ հոգուն
Լուռ հանդիսատես եղաւ Եւրոպան.
Արեան ծարաւի կատաղի Համիտ.
Ունեցաւ շատեր իրեն համամիտ.
Դաշնակցութիւնն ալ անկէ վերջ սարքեց,
Զուիցերիոյ մէջ միթինկներ մեծ.
Պօլսոյ մէջ տիրած սարսափ օր օրի՝
Ուզեցին Համիտ յանձնել տէրորի...
Որո՞ւ յանձնեցին այդ գործ թէ խորհիս,
Մէկ երկու հայու, գլուխնին ժողովս...
Արտասահմանեան, անա՛ արտակարգ.
Բերուած պայթուցիկ փառաւոր մէկ կառք-



digitised by A.R.A.R.@

Պալատ տարուեցաւ Սելանիկի օր.
Եւ հո՛ն պայթեցաւ ձայնով մ'ահաւոր.
Բայց, չար բռնակալն՝ հայոց 'ի մեծ ցաւ
Այդ մեծ տնօրէն ողջ առողջ պրծաւ.
Բռնակալութի՛ւն, ղրտեկի շրջա՛ն
Առաւել եւս անկէ վերջ շատցան,
Մինչ ազատութեան ծարաւի մարդիկ.
Գոռացին «թուրքե՛ր այլեւս զարթի՛ք...»
«Դաշնակ» ու «Հնչակ» հնչեցին անուր.
Հիմէն սարսեցաւ իսկ բարձրագոյն դուռն.
Սոսկած ու դողաց նոյն իսկ նենգամիտ
Հայու ոխերիմ բռնակալ Համիտ.
Ինքնաբեր ութին մարդասպանը մեծ՝
«Սահմանադրութի՛ւն ըսին, հռչակեց».
Քաղաքէ քաղաք ու ամեն նահանգ
Այս մեծ աւետիս տուաւ արձագանգ.
Ամեն կողմ տիրեց խինդ ու խրախճան.
Բռնակալութեան ըսին վերջ վախճան.
Այր, կին պատանի մանուկ, ծեր, անկար
Ստացան կրկին նոր ոյժ, ոգի, կար.
Ձեռքերնին ալ դրօշ՝ կազմած մեծ թափօր.
Փողոցէ փողոց շրջեցան թափօ՛ր...
Էնվէր, Նիազի մը ծնան մեկէն.
Ըսին թէ Աշխարհ առնէ այս երկի՛ն
«Եղբայր ենք ըսին, այլեւս համբուրուինք...»
Մինչ վերջ կազմեցին ամեն կողմ միթինկ
Նիազի, Էնվէր նրկշին անուն
Ա՛լ բերնէ բերան շրջեցան անու՛ն.
Ամեն կողմ դրօ՛շ ու անոնց պատկե՛ր,
Բռնակալութիւն իբր թէ սատկեր...
Տարին տասներկու ամիս ա՛լ միթինկ.
Եղբայր ենք ըսին թուրքերն, համբուրուինք...
Ալ ազատութի՛ւն, հաւասարութիւն,
Բայց Արդարութեան մէջ խառնեցին թոյն.



digitised by A.R.A.R.@

Ելտըզի գազանն ինն հարիւր իննին
Դրժեց ուխտն, շարեց դա՛ւ դժոխային.
Ճիշտ վեց ամիս վերջ, մարտ երսուն մէկին,
Կազմակերպուեցան նոր ցոյցեր մէկին.
Ելտըզեն մինչեւ Սուլթան պեազիտ
Բազմութիւն մը հոծ, գլխուք չափ մազիս.
Խումբ խումբ սօֆթաներ, գլուխնին փաթթոց.
Ասոնց միացած բանակն ալ վարնեց.
Ձեռքերնին հրացան մարդին ու մաւզեր.
Նոյն Չար Սուլթան'ն Շերիաթ կուզեր,
Ասոր պատճառն ալ կարծեմ թէ մոռցանք.
Համիտին գլխուն բերեր էր փորձանք.
Կազմակերպութիւնն այս խորհրդաւոր
Իթթիհատ ինքն էր սարքած հրաւոր...
Խուճապ մ'էր տիրած՝ Սարայի ամէն կողմ.
Իսկոյն փոխուեցաւ Ազատութեան հողմ.
Ապստամբ զօրքեր անոնց անցներ,
Փողոցներու մէջ շրջէին վար վե՛ր
Բռնեցին իրենց մեծերն անպիտան,
Ոտքն ու ձեռք կապած՝ նետեցին զնտան...
Թէ Իթթիհատին հաւատան խօսքին՝
Ասոնք վարձած էր Համիտին ոսկին.
Բայց իրողութիւնն էր ասոր ներհակ,
Իթթիհատ կուզեր Երկրին ղեկն համակ.
Ափին մէջ առնել, ուստի, հարկ էր որ,
Համիտ գահընկեց ըլլուէր մէկ օր.
Էնվէր ու Թէլաթ՝ տուողներն ուժ ա՛ն
Թուրք գեղջուկներէ կազմեցին խուժան.
Եւ ձեռքի տակէն ըրին բրոբականտ
Որ Ատանան ալ ընեն քարուքանդ
Շատ չանցաւ սակայն, —կրօնակայ իսկ մարդ—
Սարքեցին նոյնպէս Կիլիկիոյ մեծ ջարդ.
Հազար իննհարիւր իննին, հրաւո՛ր
Նահատակուեցան հայեր բիւրաւոր.



digitised by A.R.A.R.@

Դրդումով դարձեալ այն Իբրիկասին,
Որ «Արդարութիւն» կը գոռար ատդին...
Ո՛հ, Զար Սուլթանին Ձարիք չէ՛ր բաւէր,
Նենգ իբրիկասն ալ անդին կը դառէր.
Գործելով այնքան, այո՛. իրաւոր,
Նորանոր նախճիր, ոճիր բիւրաւոր...
Այս ալ ուսուցողն երէ կը կամիք.
Քննիչ կարգուող Հայ մեպուս Պապիկ,
Որ վեր հանելուն իբրիկասին գոյն
Գլուխն ալ կերան պաշտօնական մարդուն,
Ծրագրուած էր այս դաւ՝ Սելանիկ.
Ուր որչացած էր չիրբերու Քիլիք..
Պէտք չէ զանց առնել թէ՝ անոնց մէջ կար;
Ցեղափոխական խիկ երկու պուլկար,
Մէկը՝ Պանիցան, միւսն էր Սանդանսկին.
Որ Միրոյն համար դժբաղդ հայ Ազգին
Անցան գլուխը զօրաց հաւասար.
Որ տասը հազար, որ քսան հազար,
Երեսուն հազարն ալ Նիազին ամիս
Քալեցին Պօլիս՝ տապալել Համիտս...
Հրամանատարն ալ էր անոնց խիկ վարպէս
Մարդ մը որ կոչուէր խիկ Մահմուտ Շէվքէթ,
Ու պաշարեցին Յըլդըզն ամրանոցն,
Վերջապէս Համիտ եղաւ անձնատուր.
Բռնեցին վերջ զինք Սելանիկ տարին,
Հազիւ պողոտած սահյան մէկ տարին,
Պալքաններու մէջ տեսնես անոն որ
Ծագի պատերազմ սարսափ ահաւոր,
Նիազի Պօշնին գնաց Մակեդոն,
Էնվէր ապահնել տուաւ զայն ալ հո՛ն,
Որպէս զի փախի՝ հաւասա՛ իրօք,
Իբրեւ քաջ հերոս իրեն մեռայ ջոկ,
Համիտին տեղը բարձրացաւ Ռեշատ,
Սա ալ միշտ զինք ... չէ՛ս

(3242) 868-2002
Спец. Отдел
Гос. Публичная б-ка ССРА



digitised by A.R.A.R.@

Քըսան մեկներուն նախ մահավճիռ
Սա՛ ստորագրեց, բայց կամքով ո՛չ իր...
Այդ թունութեան տակ այն Հրեշ Էնվէրին,
Որ հրամանատարն էր Զօրաց ինք վերին.
Ու վերջն այդ պաշատ գնաց տուն փեսայ.
Ես արիւնն այդ ես աչքովս տեսայ.
Ցից, շէկ մազերով, պեխեր՝ կտրտած,
Լիրբ, ամբարտաւան մարդ մը ըզգացած
Որ չեմ գիտեր, ո՞ր ձիրքին համար իր
Մէկ օրէն միւսն եղաւ սա՛ միւշիր,
Ու պատերազմական նոյն իսկ նախարար,
Որ գործեց նախնիր ոճիրն անհամար,
Բուն իթթիհատին սա՛ պարագլուխ
Նազըմ բաշային այդ կեդրոն գլուխ,
Պապ Ալիի մէջ Բեհմիդ փաշային
Տապալեց դահիճին, որ փառս շահին...,
Մահմուտ Շէվքէթն այդ մէկ պատրուակաւ
Սպաննեց տուողն՝ ա՛ս չիրքն էր հարկաւ,
Այսպէս պետութեան ամբողջ սանձն ու ղեկ
Իրենց առին մէջ երբ առին աղէկ.
Բուն իսկ խորհրդով խենդ Վիլհելմ կայսեր
Որ հայաջնջման ուժ տուողն աս էր.
Տեղահան ըրին հայն ամբողջովին,
Համաշխարհային մեծ պատերազմին.
Պարպեցին այսպէս բոլոր վեց նահանգ
Հնչած էր այդպէս հայուն ահազանգ
Հազար իննհարիւր ճիշտ տանը վեցի՛ն
Խեղճ հայե՛ր մինչեւ Տէրզօր քշեցի՛ն...
Հայերէն շատեր հանին կախաղան.
Մէկ միլիոն հայե՛ր նահատակ եղա՛ն.
Ամբողջ անասողն թողին ամայի՛
Տէրը իսկ վերէն սոսկումով նայի,
Կիներ աղջիկներ մանուկներ անհար,
Թողուցին ջեռներ անբաղ ու անքար,



digitised by A.R.A.R.@

Գազաններու խել շատեր եղան կե՛ր՝
Քանդեցին հայուն տուներն ու վանքե՛ր,
Թալանի տուին անոր գոյքն ապրանք,
Գրաւեցին խել շէն ապարանք.
Ու գետնեցին անոնց մէջ այնքա՛ն
Թուրք, ալպանացի բազում գաղթական.
Գործած չարիքներն պահաս չըլլա՛ց
Ու հպատակներն թողուցին լացած.
Մղեցին բոլոր թուրքերն այր ու կին
Երբ տեսնեն հայ մը հանեն խել հոգին...
Այսպէս, մէկ կողմէն, կռուի մտան.
Միւս կողմէն սակայն խանդեցին վարան.
Կարգ մը հրէշներ, չիր ու անշնորհ՝
Աշխարհն կարդեցին իրենց մեծաշնորհ...
Ու յոխորտանքով ատոնք ամեն օր,
Վարէին Պօլսոյ մէջ կեանք փառաւոր,
Թեւերնուն գարկած զոյգ զոյգ խել կինե՛ր
Մինչ Րէշատ անդին արբած կը քնէր...
Պատերազմն բայց կը շարունակուէր.
Օրօրոցիւով ալ շրջեր Էնվէ՛ր.
Երբ որ պարտութեան լուր մ'եղլար որո՛շ,
Իբրեւ յաղթական պարզէին դրօշ
Լուսավառութի՛ւն գիշեր գիշե՛ր...
Բայց գիտէին թէ ժամանակին ուշէ՛ր...
Սպառած էր ալ խել իրենց ուժե՛ր
Տակերնին բուսած էր տատասկ, փուշեր...
Մինչ թուրքը հայ փնտռէ՛ր ըսելով «տո՛ւր տո՛ւր»
Թրքահայքն էր խիստ յուսակտուր։
Օր մըն ալ յանկարծ ալ Պօլիս իջկան
Ներկայացուցիչ հայոց պետական
Ահարոնեան ու Պ. Խատիսեան
Հայոց փրկիչներ ահա մեր միայն
Որոնց ես գաղտնի տուի մէկ նաւակ,
Պատկերացնող հայ ցաւերն համակ.



digitised by A.R.A.R.@

Տեսան անոնք թէ թուրքին խէր՝ չը կար
Չը կեցան Պօլիս այլեւս երկա՛ր
Ու ելան գացին շիտակ Երեւան,
Անշուշտ որ մ'ըսի դարձեալ կ'երեւան:
Պատերազմը բայց դեռ չէր վերջացա՛ծ,
Օրմ'ալ լուր մ'եկաւ իբրեւ պարզ դիպուած
Եուսուֆ Իզզէտին բուն գահաժառանգ
Անձնասպան եղած է ըսին՝ դրանք...
Ասոր ետեւէն քիչ օրէն, իրա՛ւ,
Լսուեցաւ Ռէշատ Սուլթանն ալ մեռաւ
Զ. Մէհմէտ Պօլիսը առա՛ւ
Մէհմէտ հինգերորդ զայն քանդեց դիւրա՛ւ.
Հազար իննհարիւր ճիշտ տասնը ութին
Երբ գահ բարձրացաւ Սուլթան Վահիտէտին
Համաձայնականին զօրքերու ջոկա՛տ
Կտրած էր արդէն Պալքանեան ճակատ.
—«Պօլսոյ նեղուցնե՛ր շուտ բացէ՛ք» ըսին
Էնվէր, Թալէաթի ջանքեր եղան սի՛ն...
Տեսան՝ չըմնաց ուտելու ապուր,
Յոյս տուին թողլով աթոռնին բախո՛ւր...
Մուկի պէս մտան անոնք ծակէ ծակ.
Գլուխնուն իջաւ երկնային կայծակ...
Այս պէս հրէշնե՛ր կապած քեներնին,
Փախան Պօլիսէ՛ն շիփշիտակ Պեռլին...:
Հազար իննհարիւր տասնը ութ տարին
Եղաւ սահմանը զինադադարի՛ն...
Նոյեմբեր ամսոյն ճիշտ տասնը մէկի՛ն
Եղաւ վախճանը, կայսրութեան մէկին..
Պատերազմէն վերջ այն խիստ ահաւո՛ր.
Նեղուցէն մտան խումբ մը զրահաւոր
Համաձայնական տէրութեանց ամբո՛ղջ
Զոր տեսանք հայերս մնացողներս ողջ
Պօլսին ըլլալէն ի վեր՝ բայց բնա՛ւ,
Չէր տեսած այդքան զրահաւո՛ր, նա՛ւ.



digitised by A.R.A.R.@

Ձիւնապատարին թուսաւ հերկէշ մ՚ալ,
Աս ալ կը կոչուէր Մուսթաֆա Քեհեայ,
Կազմեց միջին հերոներ անի,
Տուաւ անասօղն ալ սա քաղանին
Գործեց ինք անթիւ մեծամեծ ոճի՛ր.
Բայց նպատակին չը հասաւ ոչ, իր...
Այլ պատճառ եղաւ այս վայրագ խուժան,
Որ թուրքը ըլլայ իսկ ջաման քաշա՛ն.
Մինչ ան որ կուտէր մինչ խորտիկ, փիլաւ՝
Տաս մը հողամաս իր ձեռքէն եղաւ.
Այսպէս Արաբիա՛, Եմէն ու Հիճազ,
Պաղսաս Պաղեստին.— կեցի՛ր, դեռ քի՛չ ա՛ս—
Եափա, Շամ, Պէյրութ, Հալէպ Եգիպտոս.
Պաշխանեան երկիր կըսեմ իսկ ափսո՛ս (*)
Եւ որ աւելին, զնա՛ հեռաստան,
Մեր Արարատեան կազմի Հայաստան.
Ու սոսր կցեն էրզրում, Վան, Մու՛շ
Դեռ չեն հաւատար մարդիկներ անու՛շ...
Թէ կործանեցաւ ահա Տանկաստա՛ն
  րբան Թօզարքը թո՛ղ տեսնեն շիտա՛ն
Թէ ի՛նչ համարայ կայ ու աղանդե՛ր...
Այն կերազեն.. պէյն ու աղան դէ՛ն...
Թէ հին օրերը պէս վերադարձա՛ն
Հայուն ու Յոյնին նորէն յոնանան...
Ու առնեն պէտի կաշառ ու դրամ
Ու գործեն դարձեալ ոճիր եւ տրամ...
Հազար ինն հարիւր թուին այս խա՛ն.
Թուրք պատուիրակներ բայց Բարիզ հասա՛ն
Օգոստոս ամսուն, այ՛ն ենքս վեցին.
Թուրք դաշնագիրն հո՛ն, ստորագրեցին.
Ժամը ճիշդ չորսը կըսեմ տան անցած՝
Բոլոր թուրքերուն բերան մնաց բաց...
Ու Հայաստանի նախագահն ալ մեծ՝
Թուրք դաշնագիրը հոն ստորագրեց.
Մեր Ահարոնեա՛ն պուէտ Աւետի՛ս
Ու տուաւ հայուն Այս մեծ Աւետիս...

Յրբ. Տ. Մանուկեան



digitised by A.R.A.R.@

# ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ

## ԱՆԵՐԵՒԱԿՅԵԼԻ ՄԵԾ ԱՆՑՔԵՐ

**1913 ԻՆ ԻԹԹԻՀԱՏՆԵՐ ՁԵՌՔ ԿԱՆՑՆԵՆ ԵՐԿՐԻՆ ՂԵԿԸ**

*1914 Յունիս 28 Սերպիացի Բռինցիբ՝ 20 տարեկան տղայ մը ատրճանակի հարուածով կսպաննէ՝ Աւստրիոյ գահաժառանգ Արհիդուքսը Սէրայէվոյի մէջ:*

*1914 Յուլիս 28. սկզբնաւորութիւն Տիեզերական պատերազմին՝ թելադրութեամբ Վիլհելմ Բ. կայսեր Գերմանիոյ, որուն հետեւանքը կ՝ըլլայ, 27 տերութիւններուն պատերազմի մղուիլը՝ մէկ ու կէս միլեառ հոգի քերեւ զինուոր զէնքի կոչուելով: Նախ Աւստրիա կը յարձակի Սերբիոյ վրայ:*

1914 Օգս. 1. Գերմանիա Ռուսիոյ վրայ
» » 3. » Ֆրնսի. եւ Պէլճք. »
» » 4. Անկլիա՝ Գերմանիոյ »
» » 5. Աւստրիա՝ Ռուսիոյ »
» » 5. Գարատաղ՝ Աւստրիոյ »
» » 6. Սերպիա՝ Գերմանիոյ »
» » 11. Գարատաղ » »
» » 11. Ֆրանսա Աւստրիա »
» » 13. Անգլիա՝ Աւստրիոյ »
» » 23. Ճարոն՝ Գերմանիոյ »
» » 25. Աւստրիա՝ Ճարոնի »
» » 28. » Պելճիքայի »
» Նոյմ. 2. Ռուսիա՝ Թուրքիոյ »
» Հոկ. 5-7. Ֆրանսա, Անգլիա, Պլճիգա ու Սերպիա Թուրքիոյ վրայ
» Հոկ. 21. Սան Մարինոյի Հանրապետութիւնը Աւստրիոյ վրայ
1915 Մյս. 25. Իտալիա՝ Աւստրիոյ »
» Օգս. 21. » Թուրքիոյ »
» Հոկ. 14. Պուլկարիա Սերպիոյ »
» » 16. Անգ. Ֆրս. Պուլկարիոյ »
» . Իտալիա, Ռուսի. » »
1916 Մարտ 9. Գերմ. Փրթգի. »
» Յուլիս 20. Սիամ՝ Գերմանիոյ »
» Օգս. 27. Իտալիա եւ Ռումանիա Գերմանիոյ »
» » 28-29. Գերմանիա եւ Թուրքիա Ռումանիոյ »
1917 Ապրիլ 3-7 Ամերիկայ՝ Գերմանիոյ եւ Աւստրիոյ »
» Ապրիլ 7. Գուպա Գերմանիոյ »
» » 8. Աւստրիա՝ Ամերիկայի »
» » 10. Փանամա Գերմանիոյ »
» » 12. Պուլկարիա՝ Ամերիկայի »
» » 14. Պօլիվիա Գերմանիոյ »
» » 21. Թուրքիա՝ Ամերիկայի »
» Մայիս 1. Գուաթէմալ՝ Գերմոյ »
» » 17-16. Հոնտուրաս եւ Նիկարակուա Գերմանիոյ »
» Յունին 1. Պրազիլեա եւ Սան-Սալվատոր՝ Գեմանեոյ »
» » 8-14. Հայիթի եւ Չինաստան՝ Գերմանիոյ »

*1914 Յուլիս, Պէրլինի դեսպան եւ իբր Օսմանեան առաջին պատուիրակ Հազգը փաշա կը յաջողի Թուրք եւ գերման զինակցութիւնը կնքել*



digitised by A.R.A.R.@

եւ կստորագրէ Պրէսթ-Լիթօվսքի դաշնագիրը:

1915 Մյիս 1. Թուրքերը կսկսին պաշարել Վանը:

1915 Յունիս Վան կիյնայ Ռուսերուն ձեռք եւ Արամ մանուկեան կը կարգուի Նահանգապետ Ռուսերու կողմէ:

1817 Դեկ. 9 ին Հայ կամաւոր զօրքերու յառաջխաղացութեամբ Երուսաղէմ կիյնայ Անգլիացոց ձեռք:

1918 Մայիս 28. Հայ հանրապետութեան հռչակումը:

1918 Յուլիս 5. 25000 հայ արի զինուորներ հը գրաւեն Երեւանը:

1915 Հոկտ. 12 Պօլսոյ Գերման դեսպան անօրակելի հայատեացը ամենամեծ զօրկը կուտայ Հայ տարագրութեան գործին:

1918 Սպտմբ.ի վերջերը Պուլկարիոյ կորակոր պարտութիւնը Մակեդոնիոյ ճակտին վրայ եւ իր զինադադարի կնքումը համաձայնական տէրութեանց հետ:

1818 Հոկ. 5 Պուլկար Ֆէրտինանտ թագաւորի փախուստը Աւստրիա եւ նոյն օր Պէյրութի գրաւումը Անգլիական եւ Ֆրանսական նաւատորմիղին կողմէ:

Գերմանիա Աւստրիա եւ Թուրքիա ճարահատ կը դիմեն Վիլըսնի եւ հաւանութիւն ցոյց կուտան, 14 յօդուածէ բաղկացած իր հաշտութեան ծրագիրն ընդունելու՝ չորս յօւածոց յաւելուածին հետ:

1918 Հոկ. 31 Զօր. Ալէմպի կը յարձակի Գերմանացի Քրէսէնշթայնի հրամանատարութեան տակ գտնուող սմ՞ բանակին վրայ ու կը գրաւէ Կազան եւ Եաֆան. 116000 Թուրք զինուորներ անձնատուր կըլլան:

1918 Հոկ. 26 Հալէպ քաղաքը կիյնայ

Նոյեմ. 4 Թէլաթ, Էնվէր եւ Ճէմալ երեք հայակերներու մուկերու պէս փախուստը Պօլսէն:

1918 Նոյ. 5. Ատանան կը գրաւուի համաձայնական զօրքերէ ինչպէս նաեւ յաջողդաբար Մերսին, Իսքէնտէրուն Պիլան եւ Անթաքիա:

Նոյմբ. 7 Ամենածանր պայմաններով Գերմանիոյ անձնատրութիւնը. Վիլհելմ իր կնոջ հետ կը փախի Հօլանտա, Աւստրիոյ կայսրը կը հրաժարի իր գահէն:

Նոյմ. 10 Թուրքիա կ՚ստորագրէ զինադադարի պայմանները Մունտրոս կղզին մէջ ժամը 11 ին. Գերման, Աւստրիական եւ պուլկարական զօրքեր կը պարպուին Թուրքիայէն:

Նոյմ. 11ին առաւօտ ժամը 2ին վերջ կը գտնէ Աշխարհասասան պատերազմը:

1918 Նոյմ. 13 ին համաձայնական նաւատորմը կը մտնէ Պօլիս.

Դեկտ. 22 մէպուսական ջոլիրը կը քայքայուի.

1919 Յունվար. Անգլիացիք ձեռք կառնեն Անատօլուի գծին վարչութիւնը եւ Թշնամի տէրութեանց Պոլսոյ բոլոր դրամատունները կառնեն խիստ հսկողութի ներքեւ.

Փտրվ. 8. Ֆրանշէ Տէսփէրէի յաղթական մուտքը ՚ի Պօլիս.

Մարտին ձերբակալութիւն իթթիհատական գազաններու եւ խմբովին Մալթա աքսորումը:

Մայիս 28. Հայաստանի խորհրդարանը կը հռչակէ Միացեալ Հայաստանի Անկախութիւնը.

Յունիս 17 ին Վարչապետ Ֆէրիտ փաշա Բ. Դրան յիշատակագիր մը



digitised by A.R.A.R.@

կը ներկայացնէ Տասներու խորհուրդին ազատ կացուցանելու համար օսմ. ժողովուրդը պատերազմի պատասխանատուութենէն, բողարկել ուղելով Թուրք ոճիրները, որուն յիշատակները յաւիտենապէս աշխարը կը լեցնէ արհաւիրքէն:

Յունիս 4. Ամբողջ Ֆրանսա մեծ ցնծութեամբ կը տօնէ Միացեալ-Նահանգներու Ազգային Տօնը Բարիզի մէջ:

Նախագահ Ուիլսընի պողոտայի բացման արարողութիւնը, միծաջուք կերպարանք մը կստանայ. յոգնախուռն բազմութեան մը մէջ.

Սուլթան Րէշատի մահը.

Ռուսիա պատերազմի շրջանին. յանկարծ քաոսային վիճակ մը կստանայ:

Յուլիս 4. Էրզրումի նախկին տեղակալ Մուսթաֆա Քէմալ Չէթէական ուժ մը կը կազմակերպէ.

Յլս. 5. Տասներու խորհուրդը կը կազմուի հետեւեալներէ. Գ.Գ. Թիթոնի, Մարգոնի, Գլէմանսօ, Բիշօն Պալֆուր, Լօրտ Միլնըր, Լէնսինկ, գնդապետ Հաուզ, Գլինտս եւ Մաքինօ: Չորսերու խորհուրդը կը կազմեն Գ.Գ. Թիթօնի. Փիշօն, Պալֆուր եւ Լէնսինկ:

Հայաստանի անդրանիկ փոխառութիւնը կը կնքուի Ամերիկայի հետ Հայկական հանրապետութեան ներկայացուցիչ Գ. Բաչազունիի եւ Էնֆիէճեանի կողմանէ 30,000,000 ֆրանքի փոխառութիւնը:

Յլս. 9 Գերմանիոյ Վարայի Ազգյն. Ժողովը 115ի դէմ 208 ձայնով կը վաւերացնէ հաշտութեան դաշնագիրը. յաւելուածական բրոթոգոլը եւ Հռենոսի ձախ եզերքի զինուորական գրաւումի համաձայնագիրը:

Յլս. 25 Տասներու խորհուրդը կը պատասխանէ Տամատ Ֆէրիտ յիշատակագրին թէ Թուրքերը անկարող են օտար տարրերը կառավարելու եւ պատասխանատու են կանխորոշումով յարձակած են համաձայնական պետութեանց վրայ:

Հոկ. 9 Հայաստանի հանրապետութեան պատուիրակութիւնը Ամերիկայի մէջ, Գ.Գ. Բաջազունի, Զօր. Անդրանիկ. Մ. Էնֆիէճեան, Տօք. Գարեգին Փաստրմաճեան եւ ջերմ ընդունելութիւն կը գտնեն, Հայաստանի անկախութեան Ամերիկեան զօմիտէի կողմէ որուն նախագահը Պ. Ճէրարտ հայասէրը:

1920 Յունվար 15 Բարիզի բարձրագոյն խորհուրդը կ'որոշէ ճանչնալ իրականին մէջ անկախութիւնը Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի, այս երեք պետութիւնները կը գրաւեն, Արարատեան լեռան շուրջի շրջանը Կասպից ծովին արեւմտեան ծովեզերքին հարաւային մասը եւ Սեւ ծովի արեւելեան եզերքը:

Յնվր. 20 Տեղի կունենայ Կիլիկեան արհաւիրքը Մարաշի մեծ եղեռնը, Թուրք չէթէներու կողմէ. Ֆրանսական տիրապետութեան տակ Թուրք չէթէները կը յարձակին քաղաքին վրայ եւ հրդեհի կը տրուի Գայագիսի, Քիւմպէտ զույունճաք, Խաթունիէ հայ թաղերը, Կ'այրուին Ս. Ստեփաննոս եւ Ս. Գէորգ եկեղեցիները. ամսոյն 24-25-26ին սրախող կառնուին Գանըրտէրէի, Գույթուլի, Խաթունիէի, Չիֆճիլէրի Աճէմլիի եւ Գայազիւլի հայ թաղերու բնակչութիւնը.

Թշնամին հրդեհները մարելու պա-



digitised by A.R.A.R.@

տրուած ջուրի տեղ քարիւղ կը տրուէ 100 մէթր հեռուէն:

Փետր. 20ին Գ. Գ. Ա. Ահարոնեան եւ Պօղոս Նուպար եւ Զօր. Կորկանեան կը ներկայացնեն Հայկական պահանջումները մեր սահմաններու մասին, Լոնտոնի խորհրդաժողովին մէջ կազմուած յանձնաժողովին:

Մյս. 15ին պաշտօնական ճանաչում Հայաստանի հանրապետութեան, դաշնակիցներու բարձրագոյն խորհուրդի կողմէ, որ կը հաղորդուի հայտարի. պատուիրակ Գ. Գ. Ա. Ահարոնեանի եւ Պօղոս Նուպարի. իբրեւ իրական կառավարութիւն, բայց այս ճանաչումը առնչութիւն չունենար այս պետութեան սահմաններու հետ: (անանկ բան չկայ, մինչեւ Կիլիկիայ մերն է, մարդու չիպիտի տանք)-

Յունիս 18 համաձայն Հայաստանի. պառլամենթի 1902 Յունիս 5 օրէնքին, հանրապետութեան Անկախութեան փոխառութիւնը:

## ԿԻԼԻԿԵԱՆ ԱՐՀԱՒԻՐՔԸ

Համաշխարհային պատերազմի զինադադարէն վերջ, 1920 Յունուարին Կիլիկիոյ խաղաղ երկինքը կը մթագնի, հարիւրաւոր հայ անմեղ կեանքեր կը հնձուին ամեն օր, սուր, հրացան, կրակ. գնդակ, մերկութիւն եւ անօթութիւն կը քամեն կիլիկեան հայութիւնը, դառնութեան բաժակը կսկսի յորդիլ. նախ Մարաշի մէջ, կռիւներ ծայր տալ կ՚սկսին Այնթապի մէջ, յարձակումներ Հաճնոյ վրայ. ջարդ ու թալան լեռներու վրայ. պատերազմ Սսոյ մէջ եւ շրջակայ Տարսէրէ:

1920 Յունուար 20ին Մարաշի մեծ եղեռնը ծայր կու տայ. թուրք չէթէներ յարձակում կը գործեն քաղաքի վրայ՝ Ֆրանսացի զօրքերու գիշերանց փախուստ տալէն վերջ, հրոյ ճարակ կ՚ընեն հայ թաղերը քարիւղով, այս առթիւ կայրին Ս. Ստեփաննոս եւ Ս. Սարգիս եկեղեցիները:

1920 Ապրիլ՝ Ուրֆայի մէջ Ֆրանսական զօրքեր կը յանձնուին թուրք միլլիճիներուն զինաթափ եղած ու ճանապարհին կը կոտորուին:

1920 Ապրիլ 2ին Այնթապի մէջ հայերը իրենց ղեկավա-



digitised by A.R.A.R.@

ութեամբ՝ սահմանին մէջ կը յաջողին առանցին առժամեայ իշխանութիւն մը կազմել, դիմադրելով թուրք չէթէներուն ահենամեծ հերոսութեամբ: Եւ Դաշնակցութեան կարող գործիչներէն Քաջարունեանն Գ. Եղբարք կը յաջողին ձուլել երկու թնդանօթ եւ անհամար ռումբեր, Հաճըն եւ Սիս կը պաշտպանուին թուրք չէթէներէ:

Համաշխարհային ահաւոր պատերազմի սկիզբը հայ ժողովուրդին քաղաքական ճակատագիրը վարողն եղաւ Ազգային Բիւրօն, որմէ ապա ծնունդ առաւ Ազգային Խորհուրդը՝ որուն մէջ կը մտնէն բոլոր հայ կուսակցութիւնները, 6 Դաշնակցական, 2 Սոցիալ-յեղափոխական, 2 Սոցիալ-տէմօքրատ եւ 2 Ժողովրդական: Կամաւորական գնդեր անցած էին 1916ին կանոնաւոր զօրքի կարգերը:

1920 Մայիս 28ին Անդրկովկաս կը բաժնուի երեք հանրապետութիւններու, Հայոց Վրաց եւ Թաթարաց:

1920 Օգս. 10 Գ. Աւետիս Ահարոնեան Սէվրի մէջ յանուն հայկական անրապետութեան կ՚ստորագրէ թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագիրը, որով կը նուիրագործուի Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

—

## ՀԱՅԿ. ՀԱՆՐ. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

Հաստատուած է 1920 թուի Յունիս 18ին, համաձայն Հայաստանի Ազգ. Ժողովի 1920 թուի Յունիսի 5ի օրէնքին:





digitised by A.R.A.R.@

# ԹՐՔԱԿԱՆ ԽԺԴԺՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

## ՏՌԱՄՆԵՐ



*Կիլիկեան հայ տարագրութիւնը*



digitised by A.R.A.R.@

## ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅ ՎԿԱՆԵՐ

*Թուրք վայրագ բարբարոսութեան*



THE ABOVE PITUR SHOWS EIGHT ARMENIAN PROFESSORS HEADS MASSACRED BY THE TURKS

*Այս պատկերը կը ցուցադրէ թուրքերու կողմէ նահատակուած ութ պրօֆէսօր հայերու գլուխները:*



digitised by A.R.A.R.@



Կմախքացած հայ կինը տարագրութեան մէջ



digitised by A.R.A.R.@



*Սովալլուկ հայ երախաներ, տարագրութեան մէջ*



*Սովամահ հայ կնոջ թաղումը, տարագրութեան մէջ*



digitised by A.R.A.R.@



Հայուն բռնառութիւնը տարագրութեան մէջ



Գլխատիր հայեր եւ թուրք դահիճներ

digitised by A.R.A.R.@



Տարագրութեան զոհ, սովամահ հայ կինը։



digitised by A.R.A.R.@



*Սովատանջ հայուն թշուառութիւնը տարագրութեան մէջ*

## ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՈՂԲԸ
## ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ո՜հ, հէք մայր իմ,
Քանի տեսնեմ քեզ վշտահար
Անշէջ հրով մըն ալ ես յար՝
Անվերջ կ'այրիմ...

Այս սեւեռուն
Սիրտս դարձած կրակ ու բոց.
Ես ցաւակից ցաւերուդ հետ
Եւ վիշտերուն:

Տե՛ս գայարի
Աղիքներս միշտ քաղցուած.
Ձերդ յար հնչող միշտ սուգ եւ մաղձ
Գողթան քնարի...



digitised by A.R.A.R.@

Ձե՛ր բաւական
Որ բռնամին կորզեց քու գանձ,
Զարկաւ ձեռքիդ ծանր շղթայ
Արգելական:

Ո՛հ, չէ՛ր ներիք
Քու այդ դժնեայ եւ ստրուկ կեանք.
Տուաւ եւ քեզ, վա՛հ, թիւր ընկանք
Ու արհաւիրք.

Ո՛հ, չէր բաւեր,
Քու վիշտ, քու սուգ, քու հին ցաւեր
Տուաւ քեզ միշտ եւ քանդ աւեր
Ու՛ր սուրբ վայրեր...

Եւ չը բաւեց
Այնքան սոսկում, սարսափ եւ ա՛հ...
Թողուց վերջ քեզ հառաչ եւ ա՛հ
Եւ սուգ մը մեծ:

Սա՛ խաժամուժ
Վայրենի խումբ մէկ խուժան
Եկաւ տուաւ քեզ վերք դաժան,
Դառն, անբոյժ.

Ո՛հ. սուր, կացին,
Հուր, նետ, նիզակ, բանտ, կախաղան
Որդւոցդ եղան, բաժին, այնքա՛ն
Մայրեր լացին...

Վերէն լացաւ
Լուսին ներքեւ ու ամպերուն,
Թափեց ա՛յնքան արտասուր զեղուն
Եւ զգաց ցաւ...

Եւ Հայ Մուսայք
Զարկին իրենց քնար տխուր
Թէ «Հե՛ք Հայե՛ր բաժին Ձեր... սուր
Կեանք մի յուսաք...»



digitised by A.R.A.R.@

Տե՛ս, արդ հրեշտակ
Մասեաց սարին, սգայ լուսին·
Աչքն իր յառած դէպի Երկին
Մինչ տխրունակ..:

Ո՛հ, լաց կրկին
Դու հէք մայր իմ անբաղդ, թշուա՛ռ
Զի ա՛լ շիջաւ յոյսը պայծառ
Քու հէք կեանքին..

Դու յոյս, դու լոյս
Դու կեանքն էիր զարմին Հայկա,
Այլ շուտ հասաւ քեզ գերակայ
Մա՛հ չարաբոյս:

Ողբամ արդ քեզ
Մինչ քեզ մայր իմ զգեցած սուգ,
Տե՛ս զերդ արիւն իմ արտասուք
Հոսին աչքէս..

Եւ ողջաձայն
Ուժգին զարնեմ տխուր քնար.
Եւ սրտիս մէջ կանգնեմ քեզ յար
Սեւ մահարձան:

«ՀԷ՛Ք ՀԱՅԱՍՏԱՆ»

Կ. Պոլիս 1915 ԳՈՒՍԱՆ





digitised by A.R.A.R.@

## ԶՂՋՈՒՄ ԲԻԷՌ ԼՕԹԻԻ

# «ՄԵՂԱՅ...»

Հանրային խղճին ու դատաստանին
Առջեւ զիս միայն դատելու տանին...
Զի իթթիհատին պաշտպանը եղայ,
Հայը ատեցի, Մեղայ Տէր, Մեղա՜յ...։

Ես որ գրագէտ մ'եմ փոփոխամիտ...
Հոգիիս խորէն պաշտեցի Համիտ.
Ջատագովեցի ջարդ, թալանն անոր
Ես ալ մեղքի տէր եղայ ճիշտ ա՜յն օր։

Նուրի պէյի ես տեսայ զոյգ աղջիկ՝
Ըսի Ձեզի պէս հրէշտակ, ա՜խ չիք...
Փախցուցի Բարիզ զանոնք օ՜ր մ'անա՜
Միացայ անոնց ուստի եւ մղայ...

Թուրքէն կորզելու համար փա՜ռք, պսա՜կ
Հայուն քսեցի մուր տեսա՜կ տեսակ.
Բայց, արդ զղջացի՜ զի ես եմ *խախայ*
Մեղայ, Տէր, մեղայ գիտութեամբ մեղայ...։



digitised by A.R.A.R.@

Երբ որ պայթեցաւ կռիւն հո՛ն՝ Գալցա՛ն
Հայեր քաջաբար կռուեցան այնքա՛ն,
Զանոնք նապաստակ, բայց կոչեցի. վահ
Խիղճս զիս տանջէ, մեղայ Տէր, մեղա՜յ...

Իթթիհատ ջարդել տուաւ Ատանան.
Ազգին ալ սիրտս մտաւ ատտանան
Գնահատեցի իրենց այդ ոճիր.
Տէ՛ր, զիս դժոխքի իշխան արդ կոչի՛ր...

Մեղա՛յ Տէ՛ր, մեղա՛յ, երիցս մեղայ...
Մեծ պատերազմին Տարտանել եղայ,
Մէկ կողմէն կրակ բա՛ցի դէմ թուրքին.
Միւս կողմէն՝ մեղա՜յ, պաշտեցի ոգի՛ն...

Բայց պաշտած թուրքը երբ պարտուեցաւ,
Զգացի ուստիկ զայրոյթ ու մեծ ցաւ
Հայակեր թուրքերն կոչեցի Ասպե՛տ,
Մեղայ ներէ ինձ, մեղքս է մեծ թէպէտ.

Ո՛վ Տէր նախճիրներն այս վատին զազա՛ն
Գիտեմ այլեւս մինչ Երկինց հասա՛ն
Կատեմ ա՛լ զիրենք կատեմ հոգիէ՛ս...
Մեղա՛յ, կը զղջամ, ալ ինծի ներէս...

21 Մարտ 1920 Ալէքսանդրիա — Սարկաւագ



digitised by A.R.A.R.@

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
## ԵՒ
## ԻՐ ՀԻՄՆԱԴԻՐԸ



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ղարաբաղցի
(Սարգիս Յարութիւն Սարգիսեան)

Ռուբինեանց թագաւորութեան կործանումէն՝ 600 տարի վերջ ահաւասիկ կը յառնէ Արարատեան հանրապետութիւնը:

1915 Աշխարհասասան ահաւոր պատերազմին Ռուս-Տաճկական բաղխումի ժամանակ, ազատատենչ Ղարաբաղի անվեհեր կորիւններէն Արամ (Սարգիս Յարութիւն Սարգիսեան) Վասպուրականի փրկիչն ու Մովսէսը կը դառնայ: Յեղափոխական դաստիարակ Արամը այդ օրերուն երեւան կելնէ միեւնոյն ատեն պետական մարդու ու խաղաղական գործիչի հանգամանքով. բացարձակապէս իր ջանքերու շնորհիւ հայերու զինուորագրութիւնը կը ձգձգուի Վանի մէջ եւ զինուորցուներու ստուարթիւ մը կը փրկուի ստոյգ մահուանէ մը եւ անասնական աշխատանքի ճիրաններէն: Վանի վայրի արիւնռուշ ձկվեր, բազմիցս կը փորձէ այլ եւ այլ պատրուակներ ընդայնելով՝ նենգամտութեամբ Արամն ալ սիրաշահիլ ու ապա արժանացնել ողբացեալ Դ.ռամեանի ու Իշխանի անյուր մահուան. բայց Արամ միշտ կը խուսափի անկէ:

1916ին կը պայթի Վանի ապրիլեան երեսնօրեայ փառահեղ գոյամարտը, որուն արձագանգը կը պանծացնէ հայու քաջ անունը ու ազատաւոր ոգին՝ բովանդակ աշխարհի մէջ: Այդ նուաճուն մարտի ղեկավարողը կ՚ըլլայ նոյն ինքն Արամ.



digitised by A.R.A.R.@

ղինեալով ու յեղափոխական դրօշի տակ համախմբելով Վաս-պուրականի բովանդակ ժողովուրդը եւ իրաւունքի յաղթա-նակով տօգորուած՝ կը նախաշէր իրական կանոնաւոր ու ան-հաւասար ուժերու հետ:

Ռուս զօրքեր երբ հայ քաջարի բանակի հետ կը մտնեն Վաս-պուրական, Չարի կառավարութիւնը ըստ արժանւոյն կը գնա-հատէ Արամի եւ վասպուրականցիներու իր բանակին մատու-ցած մեծ ծառայութիւնը ու իբր վարձատրութիւն՝ Արամ կը նշանակուի Վասպուրականի նահանգապետ. ստանալով միեւ-նոյն ատեն իր կառավարական վարչութիւնը՝ բացառաբար հայերէն կազմելու իրաւունքը. Ռուս դիւանական կառավարու-թեան նախանձը շարժելու աստիճան։

Իսկ պատմական նահանջէն յետոյ Արամի անվկանդ ոգին կատարեալ մխիթարիչ հրեշտակը կ՚ըլլայ դառնօրէն գաղթող վասպուրականցիներուն եւ այդ սխուր օրերուն, Արամ բնաւ չը բաժնուիր իր տարաբաղդ ժողովուրդէն, մերթ Թիֆլիս եւ մերթ Երթալով Երեւնուն:

Ռուս յեղափոխութենէն յետոյ 917, Երեւանի մէջ առաջին Արեւմտահայ համագումարը մեծ մասամբ անոր ջանքերուն շնորհիւ տեղի կ՚ունենայ։

918ի վերջերը երբ Տաւրոսի մէջ տեղի կ՚ունենայ Պետա-կան յեղաշրջում, ու իշխանութեան գլուխ կը կանգնին «մե-ծամասնականներ» (Պոլշէվիք) ու ասոր անմիջական հետեւանք կը յայտնուէ բանակի զօրացրուում բոլոր ճակատներու վրայ. Եւ այդպէս, նոր տարւոյ նախօրեակին Հայ ժողովուրդը նեղութեան մէջ կ՚իյնայ, Արամ կ՚արդարացնէ իր վրայ դրած յոյսերը Դրօի, Անդրանիկի հետ ձեռք ձեռքի տուած՝ ան իբրեւ Երեւանի Նահանգական Ազգ. Խորհուրդի գործօն անդամ եւ զինուորական՝ կը կազմակերպէ նորակոչներու բանակը, եւ կ՚ոգեկոչէ ժողովուրդին՝ երջանկայեւց ըլլալ, չը լքել նակատը. Այսպէս Վանի ազատամարտութեան հերոս Արամ Մանուկեան-ցին անունը՝ Սարգիս Յարութիւն Յարգիսեան, կ՚ըլլայ հիմ-



digitised by A.R.A.R.@

ս դիրը Հայկ. Հանրապետութեան եւ ներքին գործերու «Ան-
դրանիկ Նախարար»ը:

Պատմութեան թողլով մանրամասնութիւնը նորակազմ Հայաստանի կառավարական կազմին, թաւ կը համարենք բուռ-կաններու վրայ հիմնուած կարեւոր հրաշքներ քուել:

# ԳԵՆ. ԱՆԴՐԱՆԻԿ

*Հայրենանուէր քաջամարտիկ հերոսը ծնած է Շապին Գարահիսար 1862ին, եւ ուր ստացած է իր նախակրթութիւնը: Անտիական հասակէն ցոյցտուած էրմրոսը. խիզախեւ վեհ ոգի մը եւ իր դիւրահաղորդ բնաւորութեամբ սիրելի հանդիսացած է իր համայնքին: Իր մարտական քաջութիւնը ժողովրդային համբաւ մը շինած է իր անունին շուրջ:*

*96ի հայազգի դժբաղդ ջարդէն առաջ, իբր՝ ճշմարիտ յեղափոխական գործիչի հանգամանքով երեւան եկած է Սասնոյ մէջ:*



ՀԱՅ ԳԱԼԻԲԱՐԴԻՆ

*Պալքանեան պատերազմին մեծ դեր մ'ունեցած է նաեւ պուլկար բանակին մէջ նախապէս մարզուած ըլլալով իբր. սպայ, եւ 8000 զօրքով գրաւած է Ռոտոսթօ՝ պարտութեան մատնելով 25000նոց թրքական բանակը եւ ցիրուցան ըրած է զայն մինչեւ Թէշան.*

*Համաշխարհային մեծ ու ահաւոր պատերազմին Հայ զանգուածային պատերազմէն մղուած վրիժու համար կամաւորական գունդեր կազմելով Կովկասէն անցաւ մինչեւ Էրզրում եւ այսպէս իբրեւ հերոս մինչեւ վերջ պատնէշին վրայ մնաց զէն ի ձեռին:*

*Յաղթ մասնակցած է 50 պատերազմներու եւ այս անգամ, իբրեւ պատգամաւոր Հայաստանէն անցնելով Ամերիկա, եւ Հայ դատին ի նպաստ ձեռնարկեց մեծ հանգանակութեան եւ անկէ անցաւ Իզմիր ու Աղէքսանդրիա:*

*Գրած է «Մարտական Հրահանգներ» անուն իր գլուխ գործոցը:*



digitised by A.R.A.R.@



**Գ. ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ**

*Նախագահ Հայ Հանրապետութեան*

*Բարիզի Պատուիրակութեան*

# ԾԱՂԻԿԸ

Լեռան վրայ հենց, կատարին, մի անմատչելի ժայռից կախուած՝ փայլում էր վառ ծաղիկը փթթած ու բուրաւէտ։ Արեւի շողերի տակ նա գեղեցիկ էր ու դիւրիչ։

Կոյսը ներքեւից տեսաւ այն ծաղիկը փթթած ու բուրաւէտ եւ դէպի լոյսը սաւառնող թիթեռնիկի պէս լեռն ի վեր դիմեց, ուր փայլում էր վառ ծաղիկը գեղեցիկ ու դիւրիչ։

Վերելքը ծանր էր, խարխարոտ, ուղին՝ անվերջ, բայց կուսական հոգին ծաղկի պէս փթթած, ու բուրաւէտ գեղեցիկն



digitised by A.R.A.R.@

ներ ուզում եւ կոյսը քայլում էր լեռն ի՜վեր, ուր փայլում էր վառ ծաղիկը գեղեցիկ ու բուրաւէտ:

Արեւն այրում էր վերից, կարմրած այտերից քրտինքը ծո-րում էր ու կաթում կուսական կրծքին, քարերը կծում, արիւ-նոտում էին քնքոյշ ոտները, բայց նա գնում էր լեռն ի վեր, ուր փայլում էր վառ ծաղիկը գեղեցիկ ու բուրաւէտ:

Ձեռքերն արիւնոտ, ոտերը վիրաւոր, նա հասաւ, կախուեց ժայռից վար եւ դողդողուն բազուկը դէպ ի վառ ծաղիկը մեկնեց, քաղեց եւ ժպտալով սեղմեց իր հարուստ կրծքին վառ ծաղիկը գեղեցիկ ու բուրաւէտ:

Եւ յանկարծ փչեց հովը, ծաղկի թերթիկները փետտեց եւ ցրուեց տարածութեան մէջ, կոյսը խլեց չոր ու անզարդ ցո-ղունը իր կրծքից, նայեց, արտասուեց եւ նրա հեծեծանքը տա-րածուեց աշխարհի վրայ: Նա այժմ այնպէս զունատ էր, խեղճուկ ու թշուառ որպէս աշխարհը. այլ եւս չը կար վառ ծաղիկը գեղեցիկ ու բուրաւէտ:

Եւ յետ եկաւ ջարդուած սրտով, մօր կրծքին թափեց իր ցաւը, «Մի լար զաւակս, ասաց մայրը, արցունքդ անօգուտ է. որքան վառ է ծաղիկը՝ այնքան կարճատեւ, որքան փայլուն է լոյսը՝ այնքան վաղանցուկ, կեանքը լուսաւոր վայրկեաններ եւ սեւ օրերի մի շղթայ է, որից բռնած պիտի քայլենք. նայիր իմ ճակատի կնճիռներին...

— Մա՛յր, մա՛յր, տես ձեռքերս արիւնոտ, ոտներս վիրաւոր եւ այն ծաղիկն այնքան սիրուն էր:

— Մի վայրկեան փայլել ես, զաւակս...:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ



digitised by A.R.A.R.@

Ահաւասիկ այն ոսկեղէն գրիչը որով Պ. Ա. Ահարոնեան ստորագրեց Թրքական դաշնագիրը 1910 օգոստ. 10ին, երեքշաբթի ժամը 4ը 10 անցած Սէվրի մէջ:

Այս հրաշալի գրիչը կը գտնուի այժմ Հայաստանի թանգարանին մէջ, իբրեւ հայ ազգին ճակատագրին հետ կապ ունեցող ամենանըւիրական առարկայ մը:

Պատկերին մէջ կերեւի նաեւ այն կարմիր կնիքը եւ ստորագրութիւնը, որոնք դրոշմուեցան դաշնագրին վրայ:



Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԻՉՆ ՈՒ ԿՆԻՔԸ

* * *



ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՂԱՄԱՐԸ

Որուն մելանով ստորագրուեցաւ Թրքական դաշնագիրը



digitised by A.R.A.R.@



## Պ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

### ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՓԱՐԻԶԻ

*Մեծ Պօղոս Նուպա՛ր,*
*Կը մղէ գուպար,*
*Հայ դատին համար.*
*Ճարտունակաբար,*
*Ծիգով մ'անսահման,*
*Հո՜ն՝ արտասահման:*

**Սարկաւագ**



digitised by A.R.A.R.@

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԵՐԸ



Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
*Անդրանիկ Վարչապետ Հայաստանի*
1918 *Մայիս* 28

Պ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ
*Ներքին գործերու Նախարար*
*եւ փոխ վարչապետ*

Պ. ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ
*Արտաքին գործերու Նախարար*

Պ. ԱՐՏԱՇԷՍ ԷՆՖԻԷՃԵԱՆ
*Ելմտական Նախարար*

Պ. ՍԱՀԱԿ ԹՈՐՈՍԵԱՆ
*Խնամատարութեան Նախարար*

Պ. ՄԵԼԻՔ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
*Կրթական Նախարար*

Պ. ՎԵՐՄԵԼԵԱՆ
*Պարենաւորման Նախարար*

Պ. ՀԱԽՎԷՐԹԵԱՆ

ԶՕՐԱՎԱՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ
*Պատերազմական Նախարար*



Պ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ
*Վարչապետ Հայաստանի եւ ար-*
*տաքին գործերու Նախարար*
1919 *Օգս.* 8

ԿԻՒԼԽԱՆԴԵԱՆ
*Ներքին եւ դատական Նախարար*

ԱՐԱՐԱՏԵԱՆ
*Ելմտական եւ պարենաւորման*
*Նախարար*

ՍԱՀԱԿԵԱՆ
*Աշխատանքի եւ խնամատարու-*
*թեան Նախարար*

Ն. ԱՂԱԲԱԼԵԱՆ
*Կրթական Նախարար*

ԶՕՐ. ԱՐԱՐԱՏԵԱՆ
*Պատերազմական Նախարար*



digitised by A.R.A.R.@

## Փ. Ա. ԽԱՏԻՍԵԱՆԻ ԻՆՔՆԱԳԻՐ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ



[illegible]



digitised by A.R.A.R.@



ՏԻԿԻՆ Ա. ԽԱՏԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



**ԲԺԻՇԿ ՀԱՄԱԶԱՍՊ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ**
*Գ. վարչապետ Հայաստանի եւ արտաքին գործերու նախարար*
*1920 Մայիս 5*

**ՌՈՒԲԷՆ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ**
*Ներքին գործերու եւ պատերազմական նախարար*

**ԱԲՐԱՀԱՄ ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ**
*Ելմտական եւ դատական նախ.*

**ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ**
*Աշխատանքի եւ գիւղագիտութեան նախարար*

**ԱՐՏԱԿ ԶԱՄԱԼԵԱՆ**
*Ճանապարհներու եւ հաղորդակցութեան նախարար*

**ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆ**
*Հանրային կրթութեան նախարար*

**ՍԱՐԳԻՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ**

## ԲԺՇ. Հ. ՕՀԱՆՋԱՆԵԱՆ
*(ՀԱՄՕ)*

*Ծնած է Կարին 1875ին. նախնական ուսումն առած է Թիֆլիզ, ուրկէ անցած է Մոսկուա ի վերջոյ Գերմանիա ու Զուիցերիա (Լօզան) 1893—900։ Աւարտած է Լօզանի բժշկական վարժարանը եւ ուրկէ ստացած է իր վկայականը։*

*Ամուսնացած է Ռուս կնոջ հետ։*

*Վերադարձած է Կովկաս իբրեւ բժիշկ եւ սակայն գործած է իբրեւ Հայ Յեղափոխական եւ մասնակցած է Հայ Թաթարական կռիւներուն եւ այս առթիւ բանտարկուած է Ահարոնեանի եւ ուրիշ ընկերներու հետ, ռուս կառավարութեան կողմէ Նովոչերկասկի մէջ իսկ մեծ պատերազմի սկիզբը ազատ արձակուած է, ապա իր ընկերներու հետ Զարին հրամանաւ։*

*Իսկ 1920 Մայիսին, Խատիսեանի հրաժարմամբ ընտրուած է Հայաստանի վարչապետ զոր կը վարէ մինչեւ այսօր մեծ կորովով։*



ՌՈՒԲԷՆ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ
*Արդի Պատերազմական Նախարար*



ԶՕՐ. ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆ
*Սպարապետ Հայկական Բանակի*



ԶՕՐ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

*Նախկին Հրամատար Բեթրօկրատի, ղեկավար Պորթու ի կուխներուն, պետ Հայ Զինուորական Առաքելութեան Ամերիկայի*



ԶՕՐ. ԿԱՐԿԱՆԵԱՆ

*Նախկին Անդամ Կովկասի Ռուս Սպայակոյտի, Զինուորական Խորհրդական Հայաստանի Հանրապետութեան*



digitised by A.R.A.R.@



Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Ելմտական Նախարար
(Կամաւորական Տարազով)



Ս. ԲԱԲԱԼԵԱՆ
Նախարար Խնամատարութեան
(Կամաւորական տարազով)



ԴՐՕ



ՍԵՊՈՒՀ ԱՐՇԱԿ



digitised by A.R.A.R.@



**ԳՆԴԱՊԵՏ ՀԷՍՔԵԼ**
Դաշնակիցներու Ներկայացուցիչ Հայաստանի



**Պ. Ս. ԷՆՖԻԷՃԵԱՆ**
*Հայաստանի հանրապետութեան Ամերիկայի պատուիրակութեան անդամ*



**ՎԱՀԱԳՆ** *(Տաթեւեան)*
*Դաշնակցական, ծանօթ յեղափոխական եւ Տնօրէն Ատանայի Ազգ. Որբանոցին, որ պատերազմի սկիզբները իթթիհատներու կողմէ կախուեցաւ Տէօրթ-եօլի մէջ.*

digitised by A.R.A.R.@

## ՄԱՀԱՄԵՐՁ ՀԻՒԱՆԴԻ ՄԸ
## ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

*Վերջապէս մահամերձ հիւանդին անդամահատութեան գործողութիւնը կը կատարուի 1920 օգոստ. 10ին Սէվրի մէջ ի ներկայութեան մանաւորապէս հրաւիրուած մասնագէտ վիրաբոյժներու, որոնց կը նախագահէ Ֆրանսայի վարչապետ Պ. Միլռան:*

*Երկար Տիականութիկէ մը վերջ միաձայնութեամբ կ'որոշուի հիւանդին երկու ոտքերը, եւ երկու ձեռքերը կտրել, անպայման, եւ որպէս զի գործողութիւնը լաւ արդիւնք մը առաջ բերէ, քլորոֆորմ կուտան անոր քթին, ամիսներ առաջ խմցուցած ըլլալով իրեն ինկլիզ թուզին...* (sulfed de soud)*:*

*Նախապէս կը մօտենայ Զօրավար Հատի փաշա հիւանդին եւ անոր սրտին կը դնէ իր ձեռքը, եւ կը յայտարարէ թէ հիւանդը ի վիճակի է ճարկ եղած գործողութիւնը ընդունելու իր անձին վրայ: Ասոր վրայ կը յառաջանան, Բրիտանական մասնագէտ բժիշկները եւ վայրկեանին կ'անդամահատեն անոր երկու ձեռքերը, որով կիսամեռ վիճակի մէջ կը մնայ հիւանդը-*

*Ասոնցմէ վերջ կը մօտենայ Ֆրանսացի հմուտ վիրաբոյժ մը իրեն հետեւորդ ունենալով պելժ փորձառու բժիշկ մը, որոնք կ'անդամահատեն ոտքերը:*

*Ամենէն վերջ կը հասնին Իտալական եւ Յունական ճարտար բժիշկները, որոնք հիւանդին բուն սիրտը կը քննեն եւ կը յայտարարեն թէ մեծ հիւանդը հոգին աւանդած է եւ ո եւ է յոյս չը կայ անոր վերակենդանութեան. ուստի կ'առաջարկեն անմիջապէս անոր թաղման արարողութիւնը կատարել, եւ պէտք չէ մէջտեղ ձգել կ'ըսեն այլ եւս այդ դիակը որ օդերու տաքէն սկսած է արդէն հոտիլ... որով ներկաները կ'ստորագրեն ռաբորը:*

*Հայաստանի Հանրապետութեան Բարիզի Նախագահ, Աւետիս Ահարոնեան մեծ հիւանդին թաղման արարողութեան ներկայ կը գտնուի իբրեւ սգակիր..· Հայ ազգին կողմէ եւ մինչեւ գերեզման կը հետեւի իբրեւ սգակիր...դիակին:*



digitised by A.R.A.R.@

Եւ երբ զայն կը թաղեն՝ իբրեւ վերջին յարգանք կը դնէ իր ձեռքը անոր գերեզմանին վրայ, եւ երիցս. «Անշարժ եղիցի գերեզմանս այս» արտասանելով փառաւոր կերպով կը կնքէ զայն:

Արդ, կարժէ որ այ՛ս աշխարհահռչակ անշնչացեալ մարդուն թաղման յիշատակին համար կոթող մը կանգնուի Հայաստանի մայրաքաղաքին մէջ՝ Հայ ապագայ սերունդը վերյիշելու համար միշտ իր նախնիքներուն կրած տառապանքը այդ մարդուն ձեռքէն:



ԼԵՒՈՆԻ ԲԵՐԴԸ
-ԱՆԱՎԱՐԶԱ-

*Կիլիկիոյ մէջ,*
*թուրքերը՝ Լեւոնը, «Եղան խալեսի»ի*
*վերածած են.*



digitised by A.R.A.R.@

## ՀԱՅՈՒՆ
### ԴԺԲԱՂԴՈՒԹԻՒՆԸ

Դժբաղդ հայուն միակ Յոյսըն,
Ու պաշտպանն էր Պ. Վիլսըն,
Տուող նոյնիսկ խօսք, յոյս տուեր.
Փորձէ խաշուի վա՛հ, արդարեւ.
Բայց տի՞ գծէ վերջապէս ա՛ն.
Հայաստանի բուն իսկ սահման.
Զի մեծ մասդ է կլլուեմ արդ ինք·
Հայերս իրեն շա՛տ բան պարտինք.
Իր շրջանը թէեւ անցա՛ւ,
Մեզ հայերուս պատճառեց ցաւ.
Զի իր յաջորդ մեսր Հարտինք
Դեռ չը ճանչէր հայերս արդ ինք
Որքան ինք արդ նոր նախագա՛հ
Տեսնենք հայուն ցաւ նա կզգա՞յ
Զի որբացած՝ մնայ անտէր
Պաշտպանութեան պէտք ունի դեռ
Նոր Աշխարհի ո՛վ հանրապետ.
Ոչ մի կարծէր հայը անպէտ.
Ազգ մըն է ան վեհ ու մեծանձ
Թէեւ չունի Զեր ոսկի գանձ.
Երբ չուզէք օգնել իրեն
Զեր գիտնալիք բանն է նորէն.
Բայց ապրելու համար, կըսեմ·
Իր իտէալն է Զրգնէ վսեմ
Ինքը խոհուն, աշխոյժ յանդուն
Մեռնի իր սուրբ Երկրին համար:

ՅՐԹ. ՄԱՆԱՎԵԱՆ



digitised by A.R.A.R.@

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ Հ"Յ ԴԷՄՔԵՐ

## ՏԻԿԻՆ ԵՐԱՆՈՒՀԻ ԱԲՐԱՀԱՄ ԲԱՐԹՈՂ ՓԱՇԱ

Ազնուականութեան աստղ մը որ ծնած է Պոլիս ու փայլած է Ալեքսանդրիոյ Երկինքին տակ ու տակաւին կը փայլի եւ որմէ կը լուսաւորուին ու կեանք կ'առնեն առ կայծեալ հոգիներ ու փառք կուտան որ միշտ ճառագայթէ այդ լուսատու ու կենսատու աստղը:



ՏԻԿ. ԵՐԱՆՈՒՀԻ Ա. ԲԱՐԹՈՂ ՓԱՇԱ

Տիկին Երանուհի Բարթողն է առ որուն հայրը եղածն Յակոբ Գիլեզիկճեան, պրուսացի. որ խտիվի հօրեղբօր՝ Սախտ փաշայի սեղանաւորն ըլլալով ժամանակին յորջորջուած է Սառրաֆ պ շի: Իսկ մայրը Տիկին Մաքրուհի բարեհամբոյր խաթուն կին մր Պոլսեցի:

Տիկին Երանուհի ճանչցուած է առ հասարակ հայ համայնքին կողմէ իւրեւ ազգասէր եւ բարեսէր, նամանաւանդ աղքատասէր ու գաղթականաց հոգածու որոնցմէ շատերը անշուշտ մինչեւ այսօր գովեստով ու գուրգուրանքով կը յիշեն իր բարեհամբաւ անունը: Իր ողորմածասիրութիւնը չափ ու սահման չունի. որուն մէկ ցայտուն ապացոյցը ի յայտ բերած է մանաւորապէս 1896ի Պոլսական մեծ եղեռնի պահուն, երբ զունդ ազունդ Պոլսէն Եգիպտոս կը խուժէին երկսեռ հայ գաղթականութիւն մը Տիկին Երանուհի անմիջապէս ի գլուխ կանցնի, խումբ մը Եգիպտահայ Տիկիններէ կազմուած յանձնախումբի մը եւ իբրեւ Ատենապետուհի,



digitised by A.R.A.R.@

նիւթական ու բարոյական ամէն տեսակ աջակցութիւն չը զլանար անոնց անձամբ, մատակարարելով անոնց հագուստ եւ կապուստ եւ առ այս կը յորջորջուի Մայր գաղթականներու, իր անդամակցուհիներու նախանձը շարժելու աստիճան եւ այսպէս Տիկին Երանուհի Բարթող տարաբաղդ գաղթականներու վիճակը իր գութգութոտ խնամքին առարկայ ըրած՝ արդարեւ միակ մխիթարիչ հրեշտակը կը հանդիսանայ անոնց. գրեթէ շաբաթը երեք անգամ տուաւօտէ առաւօտ, իր հետ առած իր անդամակցուհիներէն եւ իր ծառաներէն մէկ քանին ու իր գրպանները լիք՝կ՚այցելէ հայ գաղթականներու վրանները, որոնք լարուած էին այն ատեն, Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Եկեղեցւոյն շրջաբակին մէջ եւ իր ձեռքով կը բաշխէ նպաստները, զատ զատ ամենուն եւ միշտ դատարկացած գրպանով կը վերադառնայ իր տունը՝ ճշմարիտ առաքինուհի մը անխառն գոհունակութեամբ: Շաբթէ շաբաթ այր եւ կիներու համար մանաւանդ որպէս Եկեղեցւոյ կից բաղնիքները վառել տալով անոնց մաքրութեան եւս կը հսկէ, որ էական մասը կը կազմէ գաղթականներու առողջութեան:

Իր ողորմութիւններուն ու բարիքներուն հաշիւն ընելու համար՝ մասնաւոր հատոր մը հրատարակել կարժէ իբրեւ տիպար առաքինութեան:

Տիկին Երանուհի Բարթող կը պատկանի մեր ամենաբարձր ազնուական կիներու դասուն, որ հակառակ իր դիրքին ու անունին այնքան խոնհար ու հեզահամբոյր բնոյթ մը կը կրէ ու երբէք խտիր չը դնէր հարուստին ու աղքատին միջեւ եւ առհասարակ իր տունը ափ առնող տղքատ ընտանիք մը ձեռնունայն ետ չը դարձնէր իր տունէն, հակառակ իր նախկին փայլը կորսնցուցած ըլլալուն:

Եւ սակայն յայանի ճշմարտութիւն մ՚է թէ իր մեծահամբաւ ամուսնոյն մահը խորապէս ազդած ըլլալու է իր վրայ որ բաւական ընկճած երեւոյթ մը կը մատնէ իր խոհուն եւ լուրջ դէմքը:

Տիկին Երանուհի, ստացած է բաւական լաւ կրթութիւն մը, գիտէ իր մայրենի լեզուին չափ գաղղերէն, յունարէն, արաբերէն եւ սիրահար ըլլալով գեղարուեստի՝ կածէ լաւ դաշնակ եւ ունի գծած իւղաներկ նկարներ որ պատիւ կը բերէ իր սեռին:

*
* *

Կ՚արժէ այս առթիւ յիշատակել նաեւ Տիկին Երանուհի Բարթող փաշայի գործակից ու աշխատակից Ազնուափայլ Տիկին Սրբուհի Պետրոս Կարապետեան, որ ծնած ըլլալով Պոլիս Միջագիւղ. մանկամարդ հասակի մէջ անցած է Եգիպտոս եւ 1906 ի հայկական մեծ եղեռնի օրերուն Աղեքսանդրիոյ մէջ, Տիկին Երանուհիի հետ ձեռք ձեռքի տուած՝ Պոլսէն Աղէքսանդրիա ապաստանող հայութեան օգտակար հանդիսացած է իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը նուիրելով սրտովին:



digitised by A.R.A.R.@

## ԱԲՐԱՀԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ.

Եգիպտահայերու կարկառուն դէմքերէն մին էր Աբրահամ փաշա Բարթող. բնիկ Կեսարացի, որ անտիական հասակէն հաստատուած էր Աղեքսանդրիա. եղբօրորդին էր ծանօթ վարժապետ Աբրահամ Կիւլպէնկեանի, որ Պոլսէն Եգիպտոս գաղթած եւ սիրուած էր Խտիվ Մուհամմէտ Ալիէն ու անոր սեղանաւոր եղած էր, նուէր ընդունելով ընդարձակ հողեր եւ իշխանական պալատ մը։ Խավլակա Աբրահամ իր գիւղը՝ Տէսունէս, շէնցնելով, հոն 1851ին Ս. Թադէոս եւ Բարթողիմէոս անունով մատուռ մը կը կառուցանէ, իր մահուանէ ետք եղբայրը Աղա Բարթող Կիւլպէնկեան, շարունակած է վայելել խտիվական գերդաստանի համակրութիւնը։ Իր որդին, Աբրահամ փաշա Բարթող ծնած է 1850ին, նախնական կրթութիւնը առած է Երուսաղէմի ժառանգաւոր վարժարանի մէջ. իր դասընկերը եղած է Կիլիկիոյ արդի կաթողիկոս Շնորհ. Սահակ Բ.



ՎՍԵՄ. ԱԲՐԱՀԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ



digitised by A.R.A.R.@

Ճապաեան: 1874ին ամուսնացած է սեղանաւորապետ Յու-սուֆեանի Աղջկան Երանուհիի հետ, որ յայտնի է իր բարեսր-տութեամբն ու մանաւանդ 1696ի գաղթականներուն նկատ-մամբ իր ունեցած առատաձեռնութեամբը:

Բարքող փաշայի մահնէն վերջ. հետեւելով անոր օրինակին Աբրահամ փաշա նուիրուած է Ազգ. գործերու եւ ազգապատ-կան կալուածներու միւթէվէլլին եղած է երկար տարիներ: Իր առատաձեռնութիւնը առածի կարգ անցած է: Իր ծախքովը նորոգել տուած է Ալեքսանդրիոյ գեղակերտ եկեղեցին: Քանի մը տարի առաջ Ալեքսանդրիոյ Ազգ. սահմանադրական պայքար-ներուն հետեւանքով այլեւս քաշուած էր հանրային ասպարէզէն բարեգործութիւններու մէջ փնտռելով յագուրդը. իր ազգա-սիրական զգացումներուն, որոնք միշտ վառ մնացին: Աբրահամ փաշա մին եղած է հայ. բարեգ. ընդհ. միութեան հիմնադիր-ներէն, որուն բարերար անդամն էր. միութեան նուիրած է հազար Եգիպտական ոսկի եւ անոր նկատմամբ կը տածէր ան-կեղծ գուրգուրանք մը, ջերմ հաւատացող մ'ըլլալով անոր նա-խախնամական կոչումին: Իր տոհմին ազնուութեամբը կը վայե-լէր միջազգային համբաւ եւ Եգիպտոսի վերին շրջանակներու մէջ յարգուած էր՝ այնքան իբրեւ բարեգործ որքան ելեւմտագէտ. Ստացած է բազմաթիւ պատուանշաններ՝ Օսմանեան, Ռուսական Պարսկական, Սպանեական եւն: Վերջերս, երկրին տնտեսական տագնապէն մեծապէս վնասուած ըլլալով, քաղաքական մտահոգու-թիւններ ունեցաւ՝ որ քայքայեցին իր արդէն հիւանդ մարմինը Ու իր մահուընէն վերջ հասկցուեցաւ որ բարեգործութեան ասպետը իր կրցածէն եւ ունեցածէն շատ աւելին կու տար: Իր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ ազգային հանգամանքով 1911 Դեկ. 16ին եւ ընդհանուր սուգի ու յարգանքի բացա-ռիկ արտայայտութիւն մը եղաւ Բարձր Խտիվին արտօնութեամբ: Իր մարմինը թաղուեցաւ Ալեքսանդրոյ հայոց եկեղեցին շր-ջափակին մէջ:

«Ոսկեմասեան»

1906—1913



digitised by A.R.A.R.@

## ՏԻԿԻՆ ՏԻԱՆԱ ԱՂԱԲԷԿ ԱԲԳԱՐՈՖ

# Մայր հայ գաղթականներու
# եւ
# Անդրանիկ հայ կին-դեսպանուհին Եօգօհամայի մէջ

(Ճարոն)

*Ծնած է Նոր-Ջուղա 1865 ին։ Մանկութեանը Պարսկաստանէն կը գաղթէ Հնդկաստան. ուսումը կ'ստանայ Կալկաթա եւ կ'ամուսնանայ հնդկահայ յայտնի գերդաստանէն Միքայէլի հետ, որուն վերջ իր ամուսնոյն հետ կը մեկնի Ճարոն եւ ուր կզբաղի մետաքսի վաճառականութեամբ Ամերիկայի եւ Հնդկաստանի հետ։*



ՏԻԿԻՆ ՏԻԱՆԱ

*Տիկին Տիանա երեսուն տարիներէ վերջ կը հաստատուի Եօգօհամա, հոն կը տիրանայ մայրենի լեզուին եւ Անգլիերէնի որով գրած է խաղաղական յօդուածներ. ունի հեղինակութիւններ հայկական դատը ծանօթացնելու համար խաղաղական աշխարհին. մեր ցաւին ու հայկական մեծ եղեռնին հանդէպ անտարբեր եղողներուն միտքը ողոքելու համար։*

*Պատերազմի շրջանին իր լոյս ընծայած կարեւոր գործերն են* The Peace Prohlem *եւ* Peace and no Peace *եւ այս մասին*



digitised by A.R.A.R.@

դրուատալից գրախօսականներ նուիրուած են ամերիկեան թերթերը:

Տիկին Տիանա. իբրեւ խաղաղագէտ՝ երբէք չէ կասած իր գաղափարները տարածելու հայկական դատին համար. Այս առթիւ յիշատակութեան արժանի են իրապէս, Միացեալ Նահանգներու նախագահ Պ. Վիլսընի ուղղած իր հռչակաւոր նամակները:

Պատերազմի այն ահաւոր օրերուն երբ աշխարհ հուրի սուրի մատնուած ուղեւորութիւնները արգիլուած՝ թռչուն չ'էր թռեր՝ ինք էր որ ապահովցուցած էր հայ փախստականներու ազատ մուտքն ու ելքը 'ի Ճափոն եւ անկէ դիւրութիւն ընծայած Ռուսաստանի վրայով Վլատիվոսթոքէն Ամերիկա անցնող 3000 հայ գաղթականներու:

Ծայր աստիճան ուշիմ ու ազգասէր այս տիկինը իր մայրենի լեզուին չափ գիտէ այժմ Ճափոներէն ալ, ունի երկու աղջիկ եւ մէկ մանչ զաւակ. աղջիկներէն մին հայ փաստաբանի մը հետ ամուսնանալէ վերջ՝ ուսած է հայերէն:

Տիկին Տիանա մինչեւ այսօր կ'օգնէ անտէր հայ գաղթականներու եւ եթէ ո՛ եւէ հայ չ'գտնէ զինքը նա կ'երթայ կը գտնէ զայն եւ իր տունը տանելով անձամբ կը պատուէ զայն ու սեղանակից կ'ընէ իրեն եւ մայրական գուրգուրանքով կը պատուէ զանոնք իր փառաւոր տան մէջ իբրեւ իր հոգեհատորները: Անձամբ մեծարելով անոնց թէյ ու կերակուր եւ այս պատճառաւ կը յորջորջուի այժմ «Մայրիկ գաղթականներու»:

Կը թուի թէ Տիկին Տիանա անցեալի փորձառութիւններէն դաս առած ըլլալուն՝ ինքնայատուկ ուշիմութեան իբր ապացոյց անկէ իրեն ներկայացող հայու նախապէս անոնց անունը նշանակել կ'ուտայ՝ իրենց հայ ըլլալը ստուգելու համար:

Աւասիկ տիպար մայր մը որ իրապէս փառքն ու պարծանքը կը կազմէ իր ցեղին ու սեռին:



digitised by A.R.A.R.@

## ՆՈՒՐԻՃԱՆ ԻՓԷԿԵԱՆ

Դէմքեր կան, որոնք իրենց կենդանութեան, ո՛րքան ալ մեծ ու գնահատելի ծառայութիւններ մատուցած ըլլան Ազգին, շատ անգամ աննշմար կ'անցնին կ'երթան եւ նոյն իսկ մոռացութեան անգամ կը մատնուին իր համայնքին կողմէ եւ սակայն այնպէս, մէկ օր պատմութիւնը վաղ կամ անագան վերջապէս խաւարէն ի յոյս կը հանէ, կը յիշատակէ ու կը պանծացնէ զայն։

Ահա՛, այս կարգի դէմքերէն է Նուրիճան Իփէքեան, որուն տարեկից ու գործակից անձեր, անշուշտ դեռ կը յիշեն անոր ազգանուէր ծառայութիւնները, եւ Սարկաւագի Տարեցոյցը անխառն հանոյքով մը կ'արձանագրէ անոր՝ յաւէտ անմահ եւ յիշատակելի անունը.

Նուրիճան Իփէքեան, կը բաւէր միայն իր այս անունը զինքը անմահացնելու, որ գործօն դեր մը ունեցած է մեր Ազգային կեանքին մէջ, եւ իր ժամանակակից ամէն դասակարգէ սիրուած ըլլալով՝ այս իսկ պատճառաւ յաւ ժողովրդական դէմք մը կը դառնայ ան Պրուսայի, Պոլսոյ եւ Սամսոնի մէջ։

Նուրիճան Իփէքեան կը ծնի Պրուսա 1866 թուականներուն եւ ուր ազգային վարժարանի մէջ կ'ստանայ իր տարրական կրթութիւնը. բնականէն աշխոյժ ու գործունեայ այս պատկառոտ դէմքը՝ հսկայաքայլ կը յառաջդիմէ կեանքի ասպարէզի մէջ, հիմնելով մետաքսի մեծ գործարաններ, որոնք Պրուսայի մեծ երկրաշարժին հիմնայատակ կը կործանին ի վերջոյ։ Այս իսկ պատճառաւ հոնկէ կ'անցնի Պոլիս եւ կը հաստատուի Նէնի Գաբու եւ Խրիմեանի Պատրիարքութեանը, կ'ստանձնէ Պատրիարքարանի Ազգ. Տուրքերու գանձման կարեւոր պաշտօնը, զոր կը վարէ մեծ ձեռնհասութեամբ։



digitised by A.R.A.R.@



ՆՈՒՐԻՃԱՆ ԻՓԷՔԵԱՆ

1871 թուականներուններուն Նուրիճեան Իփէքեան Ազգ. Հիւանդանոցի նոյն ատենուան Հոգաբարձութեան կողմէ կը ստանձնէ Պալըքլը Չէշմէի Ս. Յակոբ վանքի շուրջ գտնուող սենեակներու եւ տուներու վերատեսչութեան պաշտօնը եւ անոնց մատակարարութեան հոգը, որով վարձքերն ինք գանձելով կը յանձնէ Հիւանդանոցի սնտուկին եւ այսպէս ամենայն ուղղամտութեամբ կը շարունակէ մինչեւ 1875: Այս ինք իբրեւ բեղուն մտքի եւ մաքուր սրտի տէր անձ, ինչպէս նաեւ յաջողակ ամէն գործի մէջ, նոյն հոգաբարձութեան կողմէ կը կոչուի Ազգ. Որբանոցի ընդհ. դաստիարակի եւ վերատեսչութեան



digitised by A.R.A.R.@



ՏԻԿԻՆ ՍՕՖԻ ԻՓԷՔԵԱՆ

պաշտօնին, 1876 սեպտ. 1ին, եւ նոյն հաստատութեան քոյր մատակարարութեան հոգը կը յանձնուի իրեն: Նոյն թուականներուն աշակերտած են իրեն՝ Գարեգին Մերկրեան՝ Ազգ. Հիւանդանոցի քարտուղարը՝ եւ ուրիշներ, որոնք կը յիշեն՝ դեռ այդ բարի անձը, նկատելով զայն կատարեալ հայր եւ կը գնահատեն անոր մեծ գործունէութիւնը զոր ունեցած է որբանոցին նկատմամբ: 1880ին, որովհետեւ այդ շրջանին որբանոցը նիւթական անձկութեան մատնուած ըլլալով՝ Նուրիճան Իփէքեան իր սեփական միջոցներով կը հոգայ որբանոցի որբերուն գրական պիտոյքը, անձամբ հանգանակութիւններ ընե-



digitised by A.R.A.R.@

լով քարեսէր ազգայիններէ ու այս միջոցներով շատուշատ ա-շակերտներու նիւթական ու բարոյական աջակցութիւնը չէ զլացած երբեք: Եւ իր շնորհիւ այսօր շատեր բարելաւ դիրքերու տիրացած՝ ու երախտապարտ մնացած են իրեն: Այսպէս Նու-րիճան Իքիլեան, սիրելի հանդիսացած է իր անձը ամէն զինքը ճանչցողներուն եւ որոնք մեծ գովեստով կը յիշեն իր պատուական անունը, իբրեւ ազգասէր գործիչի, իր զեղուն ու բեղուն միտքը գրաւիչ ու պատշաճ դէմքը ժողովրդային կը դարձնեն զինքը, որով ո՛ եւ է բարենպաստ առաջարկ իր կողմէ չը մերժուիր եւ մ շտ յաջող ելք մը կ'ունենայ իր բոլոր նուիրատուութիւնները ի նպաստ Ազգ. Հիւանդանոցին ու անոր որբանոցին համար: Որբերու մասին իր տածած սէրը չափ ու սահման չունենար ամէնուն վրայ հաւասար կերպով հօր մը պէս կը գուրգուրայ, որով սիրելի կ'ըլլայ որբերուն եւ իբրեւ երկնառաք հայր մը կը նկատեն զինքը [*]:

Արդարեւ Հիւանդանոցը այդ շրջանին մատնուած նիւթա-կան անձկութեան, բնականաբար պատսպարեալներու մասնաւո-րապէս հիւանդներու եւ որբերու սնունդը շատ մխիթարական չըլլար, եւ ինչպէս կը պատմուի, այս վիճակը Նուրիճանի վրայ շատ ծանր կ'ազդէ, այնպէս որ օրին մէկը գիշերանց հի-ւանդներու համար պատրաստուած կերակուրէն ամանի մը մէջ լեցնելով՝ Եսիգուլէի հիւանդանոցէն կ'ելլէ ու քալելով կ'անց-նի կ'երթայ Բերա՛ շիտակ Միքայէլ Ցակոբեանի տունը եւ կէս գիշերին ափ կ'առնէ անոր դուռը: Կը ներկայանայ անոր ու կը ներկայացնէ նաեւ իր հետ տարած կերակուրին նմոյշը:

Ընդհանրապէս Միքայէլ Ցակոբեանի խղճմտանքին կը դպի այս պարագան, ասոր վրայ Նուրիճան կ'ստիպէ զինքը որ

[*] Նուրիճան Իքիլեան այնքան սէր կը տածէր իր որբե-րուն վրայ որ մինչեւ պատերազմին սկիզբը կը թղթակցի իր մեծ-ցուցած որբ Գուրգէնին հետ եւ իր վերջին օրերը Ազգ. Հիւան-դանոցի մէջ անցնելու փափաքը կ'ունենայ եւ սակայն պատե-րազմի միջոցին իր տարագրութիւնը վերջ կը դնէ իր փափաք-ներուն յաւիտենապէս փակելով իր աչքերը անյայտութեան մէջ:

ստանձնէ այդ մեծ հաստատութեան հոգը՝ իբրեւ հոգաբարձու եւ այսպէս Նուրիհանի ջանքերուն շնորհիւ կը կազմուի հետզհետէ Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը Միքայէլ Յակոբեաններու, Կիւլպէնկեաններու, Աբիկ Ունճեաններու, Տիգրան Կիւմիւշկէրտաններու պէս մեծափարթամ կարկառուն դէմքերէ, որոնք ոչ միայն կ'ամոքեն պատսպարեալներու ցաւն ու վիշտը, փրկելով այդ մեծ հաստատութիւնը իր անել կացութենէն, այլ եւ 188.ին ի հիմանէ կը վերաշինեն զայն, իրենց անձնական ծախքերով. այսպէս ազգասիրութեան անհնացայտուն ապացոյցը տալով գործնականապէս։

Անձնուրաց Նուրիհան այսպէս կրթութեան այդ մեծ տունը բնականոն վիճակի մը մէջ դնելէ վերջ, խղճի անհուն գոհութեամբ մը կը քաշուի այլ եւս ազգ. գործերէ եւ Ենի գաբու կը բանայ հացի փուռ մը եւ ամենաընտիր հաց պատրաստել կուտայ հոն՝ Գումգաբուի, Սամաթիոյ եւ Եդիգուլէի թաղեցիներուն գովեստին արժանանալու աստիճան.

Անկէ վերջ է որ Նուրիհան Իփէքեան կ'անցնի Սամսոն եւ հոն ծխախոտի վաճառականութեամբ զբաղելով առեւտրական ազգային շրջանակներու մէջ հանրածանօթ դէմք մը կը դառնայ վերջապէս: Իսկ հայկական մեծ եղեռնին Նուրիհան եւ իր ընտանիքը իրենց յառաջացած տարիքին կը տարագրուին. Դժբաղդ Նուրիհան Իփէքեան զոհ կ'երթայ թուրք խուժանի բարբարոսութեան եւ անյայտ կը մնայ այսօր իր գերեզմանը. իսկ Տիկին Նուրիհան կը մեռնի Մալաթիա:

Այս պատուական անձէն յիշատակ մնացած է այսօր ազգին իր չորս զաւակները, Գէորգ, Հայկունի, Արմէն եւ Գասպար, ամէնն ալ ողջ։

Առաջինը Գէորգ Իփէքեան որ նշանաւոր հանդիսացած է իր սիկառի մեծ գործատունով. որ հաստատուած է 1889ին, եւ մինչեւ այսօր մեծ հռչակ հանած է եգիպտական հրապարակի վրայ. իր «Գէորգ Իփէքեան» անունով բազմատեսակ սիկառէթներով:

Այս տան հիմնադիրն ալ եղած է դարձեալ հայրը՝ Նուրիճան Իփէքճեան։

Գէորգ Իփէքճեան մանկական հասակէն իր հօր պէս ախոյժ՝ զբաղած է նախ իր հօր հաստատութեան մէջ ի Սամսոն, 1891էն ի վեր հաստատուած է Ալեքսանդրիա, ուր շարունակելով հանդերձ ծխախոտի մեծաքանակ ներածումը կը բանայ նախապէս վաճառատուն մը փոքրաքանակ, եւ սակայն օժտուած ինք գործնական մարդու հանքամանքով ինչպէս նաեւ իր գործին մէջ ունեցած անմրցելի մասնագիտութեամբը հսկայաքայլ յառաջդիմած է այսօր սիկառի հրաշագեղ արտադրութեանը մէջ։

Տիար Գէորգեան Իփէքճեան մէկն է այն հազուագիւտ դէմքերէն, որոնք գիտեն պահանջին համաձայն իրենց արդար վաստակէն մաս եւ բաժին հանել հանրային գործին համար եւ իրենց անձնուէր աջակցութիւնը չեն զլանար երբէք երբ ազգօգուտ ծառայութիւն մը առաջարկուի ամէն անգամ իրեն. Եւ Գէորգ Իփէքճեան ահա՛ այս անգամ, Հայաստանի անդրանիկ ներքին փոխառութեան գործին մէջ իր սուղ ժամերը տրամադրած է. Զայն ի գլուխ հանելու համար: Իփէքճեան Գէորգ պարզասէր եւ միեւնոյն ատեն բարեհամբոյր մէկն է, որ կրօնաւորէ աւելի, կրօնասէր, յեղափոխականէ աւելի ազգասէր մը ըլլալով հակառակ իր բազմազբաղ վիճակին՝ չէ խուսափած երբէք ո՛ եւ է ազգային գործէ եւ արտեռանդն իր աջակցութիւնը ընծայած է միշտ բարենպաստ ամէն ձեռնարկներու:

Նուրիճանի աղջիկը՝ այժմ Տիկին Հայկունի Խերեան, Սամսոնի հանրածանօթ Խերեան ընտանիքի հարսնացեալ, ահաւոր պատերազմին Սամսոնի տարագրութեան ատեն կը կորսնցնէ իր ամուսինը, հայրը եւ մայրը, որ կը մեռնին Մալաթիոյ մէջ: Ինք գրեթէ հրաշքով հուրէն սուրէն հազիւ ազատած իր դեռատի աղջիկներով՝ կը կրէ իր համեստութեան ու ազնուականութեան դրօշը ճակտին, իսկ անոր տխուր դէմքին վրայ կրնաք ամէն օր կարդալ հայ տառապանքին բովանդակ դառնութիւնը:



digitised by A.R.A.R.@

Երրորդ որդին է Նուրինանին, Արմէն Արմէնեան (Իփէքեան) ծանօթ դերասանը: Հայերու երկրորդ Աղամեանը ծնած է Բերա եւ իր նախնական ուսումն առած է տեղւոյն Մխիթարեան վարժարանը. ապա անցած է Կեդրոնական, զոր լրացընելէ վերջ անցած է Բարիզ եւ Կոնսերվաթուարէն շրջանաւարտ ելած է 1904 թուականներուն եւ հաստատուած է Կովկաս եւ ուր կազմակերպած է իր խումբը: Նուրինանի որդին Տէր Գասպար Իփէքեան, նոյնպէս ծնած է Պոլիս (Բերա) 1883ին, մինչ իր նախնական ուսումը առած է Սամսոնի ազգային վարժարանի մէջ քիչ ժամանակ վերջ մտած է Պոլսոյ



ԲԱՐԻԶԻ ՄԷՋ

*1. Արշակ Չօպանեան. 2. Կոմիտաս վարդապետ. 3. Գասպար Իփէքեան*
*4. Ռուբէն Սեւակ (Տոք. Չիլինկիրեան)*

Ռօպերթ Գոլէճը, ուրկէ իր շրջանը աւարտելով 1908ին թուրք Սահմանադրութեան հռչակումին իբրեւ դաշնակցական նուիրուած ազգային դասին՝ եւ իբրեւ բրօբականտիսթ, մասնաւոր առաքելութեամբ անցած է Կովկաս, Կարին, Տրապիզոն, Սամսոն. 1914ին կոչուած է Վանայ վարժապետանոցի օգնական



digitised by A.R.A.R.@

տեսչութեան պաշտօնին սակայն վերահաս պատերազմին պատճառաւ մնացած է Սամսոն ու իբրեւ զինուոր ծառայելէ վերջ թուրք զօրաւորական բանակին՝ կարողացած է իր մեծերը համոզելով, իբր թէ իր պաշտօնին գլուխը երթալու եւ «վաքան»ին ծառայելու պատրուակաւ անցնիլ Կովկաս եւ մեծ գործունէութիւն մը ունեցած՝ հայ կամաւորական բանակին մէջ:

Ներկայիս Տիար Գասպար Իփէքեան կը գտնուի Պարսկաստան՝ եւ կը վարէ ընդհ. դպրոցներու տնօրինութեան դըժուարին այլ կարեւոր պաշտօնը։

## ՓՈՔՐԻԿ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԸ
## Կարապետ Լեւոն Թորոսեան
### — ՄՇԵՑԻ —

*Ազգասէր հօր ազգասէր զաւակը, ահաւոր պատերազմին երբ իր կը տարագրուի. ու կ'իյնա Ատանա. Անգլիացիներու Կիլիկեան գրաւած ատեն կը ներկայանայ Զօրավար Ալէմպիի կամաւոր գրուելու, որ տարիքին պզտիկութեան պատճառաւ կը մերժէ զայն. բայց փոքրիկն Կարապետ.*



*— Հասակիս պզտիկութեան մի նայիր կըսէ, իբ րաւականաչափ անգլիերէնի խօսակցութեամբ. տարիքս մեծ է, կ'ուզեմ հայրենիքիս ծառայել:*

*Զօր. Ալէմպի կը հիանայ փոքրիկին ազգասիրութեանը վրայ եւ կ'ընդունի իր առաջարկը:*

*Փոքրիկ կամաւորը ողջ է եւ կը գտնուի այժմ իր ծնողքին քով, Ալէքսանդրիա:*



digitised by A.R.A.R.@

## ԵԴԵՍԻԱՑԻ ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

### ՕՐ. ԱԶՆԻՒ ՄԻՐԶԱԵԱՆ

*Եդեսիացիներուն հերոսութիւնը*

95—96ի արիւնոտ օրերէն ի վեր Եդեսիոյ քուրդ բնակչութիւնը գէշ աչքով էր որ կը նայէր իր չար կամքին զէնքով պատասխանած ըլլալուն համար:

914ին յուլիսի սկիզբները ճիշդ պատեհ առիթը գտած էր Իթթիհատը իր իսկ սաղմին մէջ խեղդելու Եդեսիոյ հայութիւնը: Սակայն այդ հերոսները արդէն գիտակ քրդական նենգամտութեան, եւ՛ս զգուշաւոր եւ կասկածոտ կերպով մը կ'սկսին նայիլ եւ 1915 Ապրիլ 18ի տեղւոյն մաս մը հայերու տեղահանութենէն եւ ահաւոր ջարդերէն ու կողոպուտէն վերջ, Մկրտիչ Եօթնեղբայրեան հակառակ իրենց Առաջնորդ Հայր Սուրբի իրենց զէնքերը կառավարութեան յանձնելու պատուէրին կը զինէ տեղւոյն մնացած փոքրամասն հայերը — այր եւ կին, աղջիկ ու տղայ— եւ անա կ'սկսի փառաւոր գոյամարտը եւ գիշեր մը յանկարծ կը պայթի կրակը, ազդարարութեամբ եկեղեցւոյ զանգակներուն, որոնք անընդհատ կ'սկսին միահա-





digitised by A.R.A.R.@

մառ. կերպով հնչել: Սակայն ոստիկան զինուորներ եւ ոստիկաններ նոյնպէս տեղական զօրքը տեսնելով որ անօգուտ պիտի ըլլայ զանոնք հետապնդելը շուտով Հալէպ գտնուող Մեքսիքի ներոս Ֆախրի փաշային օգնութեան կը կանչեն. Զօրավարը սիրով կը փութայ հետը առնելով երկու գումարտակ զօրք եւ տասնեակ մը թնդանօթներ որն Եղեսիա հասնելուն անմիջապէս զէնքերու յանձնում կը պահանջէ: Ահա թէ ի՞նչ կը պատասխանեն Եղեսիացիները:

—«Տէր զօրավար մենք զէնք չենք կրնար յանձնել, քանի որ եկած էք առնելու, եկէք եւ առէք, ու կը յաւելուն նաեւ թէ փուլ փակցուցած չըլլալնուս համար նամակին վրայ. հարկաւ ներողամիտ պիտի ըլլաք.»

Ասոր վրայ ահա յանկարծ կը գոռան թնդանօթները, գոռն կուտան զօրքն ու խումբը, փլատակներու տակ այսպէս կը մեռնին այն բուռ մը քաջ հայերը, որոնք ուխտած էին աւելի փառքով մեռնիլ քան թէ վատաբար. Օրհնեալ ըլլայ իրենց անմահ անունը:

Այս գոյամարտին կը մասնակցի Օրի. Ազնիւ Միրզաեան, եւ փառաւոր յաղթանակով մը դուրս կուգայ այս ահաւոր պատերազմէն՝ քաջաբար կռուելով ու դիմադրելով խումբին:

Հերոսուհի Ազնիւ՝ որ Անգլիական բանակին ալ կամաւոր գրուած էր, կայ այժմ 19 տարեկան որ 1920 ին ամրան բակիզքը այցելած է Աղեքսանդրիա եւ անցած է անկէ հարաւային Ամերիկայ իր ազգականներուն քով:

Կեցցէ հայ հերոսուհին:





digitised by A.R.A.R.@

## ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՂԱՒՆԻ Մ. ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ

Մայր ծանօթ փաստաբան եւ երեւելի Աղեքսանդրիոյ Գաւառից ճիւղաստու Տիգրան պէյ Թիւթիւնճեանի, որմէ զատ ունի դեռ երեք չափահաս եւ Ազգին պատուաբեր զաւակներ. Առանձինն՝ երեքը, որ իր զտնուին ներկայիս Ճարոն, Հալէպ եւ Մերսին՝ ամենէն կրտսերը. որոնք ներկայիս ընկերովի կ'զբաղին փաստաբանութեամբ։



Այրի Տիկին Աղաւնի Մ. Թիւթիւնճեան

Տիկին Աղաւնի Թիւթիւնճեան ծնած է Պոլիս Իւսկիւտար՝ Թաղապաշի 1852 թուականին։ Տիպար մայր մը որ իր ուշիմութեամբն ու արթնութեամբը կարողացած է Եւրոպական կրթութիւն մը տալ իր զաւակներուն: Եւ իր գլխաւոր զբաղման առարկան ըրած է Ազգին որբերն ու որբուհիները եւ այս իսկ պատճառաւ ամէն տեսակ նիւթական թէ բարոյական սրտագին աջակցութիւնը երբէք չէ զլացած անոնց եւ իր անձնական ծախսերով յաճախ որբ աղջիկներու օժիտը պատրաստելով ամուսնացուցած է զանոնք, կատարեալ մօր մը գիտակցութեամբ ու զուրգուրանքով։



digitised by A.R.A.R.@

1906 ին իր ամուսնոյն եւ զաւակներուն հետ հաստատուած է Ալեքսանդրիա եւ ուր հակառակ իր յառաջացած տարիքին՝ տակաւին կը շարունակէ իր մարդասիրական պարտականութիւնը:

Երբ պատահիս անոր փողոցը, որ վայրաշարժով կամ կառքով կերթեւեկէ, անկասկած եղիր որ խաղաղին շրջանը կատարած է դարձեալ եւ եղեռնոտ գործած է տանկոտ փողոցներու տնոյն տուներու փակուղիներէն ներս. բաղդագուրկ ընտանիքներու, տառապող հիւանդներու, որբի մը եւ կամ որբեւայրիի մը նպաստելու եւ կամ աղքատիկ աղջկան մը օժիտի ծախքը իր ձեռքովը տալու համար եւ արդի անհուն ու անխոնջ գթութեամբ կը վերադառնայ իր տունը: Հոն ալ մինակ չէ ամպայն եւ անպատճառ բաղդագուրկ տարեց կին մը կամ որբեւայրի մը սեղանակից գտած կը տեսնես զինքը եւ անկարելի է որ չը հիանաս այս տարեւոր կնոջ անհուն ու ազնիւ զգացմանը վրայ:

1909 ին իր ողբացեալ ամուսնոյն հետ իբրեւ ուխտաւոր այցելած էր Երուսաղէմ, այդ շրջանին վանքը բարեգործական խառնակ վիճակի մը կը պարզէր. ուխտաւոր ու խաղաղացի, մէկ օր սկսան խանակոծել զիրար Ս. Յակոբեայ մայր տաճարի արտաքոյթին մէջ: Տիկին Աղաւնի իր ամուսնոյն հետ Մարկուսացին հիւր գացած գտնուած էր եւ անոր յանկարծ թշնամութեամբ մեր վանականի մէկ խանի բարեկիրթ վարդապետներու՝ իր անձնակը կը խուժեն այդ վարձկան զռեհիկ անձերը՝ զայն խողխողելու համար, իբրեւ նաշուապահանց: Եւ Տիկին Թիւթիւնճեան կուրծք կուտար այդ անօրայ մարդոց. մինչ ամուսինը կը մարէր կ'իյնար հոն. այսօր խուժանը կը ցրուի, իսկ Տէր եւ Տիկին Թիւթիւնճեան՝ Զատիկը չը տեսած կը վերադառնան Եգիպտոս՝ եւ Մարտիրոս Թիւթիւնճեան յանկարծամահ կ'ըլլայ հոն:

Այն օրէն ասդին Տիկին Աղաւնի գաղափար չունի հայ կղերին վրայ եւ չուզեր որ իր ծանօթներն իսկ կղեր ըլլան:

Ահա՛ աշխատասէր, աշխոյժ եւ գիտակից կինը:



digitised by A.R.A.R.@

# ԿՐԹԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԻՉԸ

# ՅԱԿՈԲ ԱՂԱՍԷՐ

— ՏՐԱՊԻԶՈՆՑԻ —

Յակոբ Աղասէր ծնած է Տրապիզոն. իր մանկութիւնը անցուցած է Պոլիս. 1894 ին շրջանաւարտ եղած է Պոլսոյ Կեդր. Վարժէն. 1894—96 պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ Ղալաթիոյ Ազգ. Նախակրթարանին մէջ. 96ի ջարդէն ետքը ապաստանած է Եգիպտոս՝ ուր պաշտօնավարած է Աղեքսանդրիոյ Ազգ. վարժարանին մէջ մինչեւ 1998. յետոյ անցած է Եւրոպա ուր Գերմանիոյ եւ Զուիցերիոյ համալսարաններուն մէջ հետեւած է նախ երկրաչափութեան ու յետոյ մանկավարժութեան. 1905ին երբ Աղեքսանդրիայ կը վերադառնար ժողովուրդը միահամուռ կերպով զինքը Աղեքսանդրիոյ երկսեռ վարժարանին տնօրէն կը կարգէր որ չորս տարի արդիւնաւոր կերպով պաշտօնավարելէ յետոյ՝ «վեղարաւոր սրիկայի» մը էնթրիգներուն շնորհիւ կ'ստիպուի հեռանալ. ժամանակ մը եւս՝ Ատանայի Ազգ. վարժարանի մէջ պաշտօնավարելէ յետոյ՝ կ'անուանուէր Բարձր Հայքի Միացեալ Ընկերութեան վարժարանաց Ընդհանուր Տնօրէնութեան եւ այդ պաշտօնով մնաց այն տեղ մինչեւ 1914ի վերջը՝ որ ընդհանուր պատերազմը ծագելով բազդակից եղաւ մեր փիւրգոներուն իր սիրելի եղբայրներուն որոնց ազատութեան եւ երջանկութեան համար աշխատած ու իր բովանդակ կեանքը զոհած էր:



ՅԱԿՈԲ ԱՂԱՍԷՐ

Կարդալ տարեցոյցիս մէջ տպուած մանաւորապէս իր գրութիւններէն մի քանի նմոյշները որով ընթերցողը, պիտի կարողանայ առողջ գաղափար մը կազմել իր իտէալի մասին:



digitised by A.R.A.R.@



ՏՕՔ. ԳԸԼԸՃԵԱՆ

— ԿԻԼԻԿԵՑԻ —

*— Մտերիմ ընկեր Արամ Մանուկեանի —*

*Գըլըճեան Տօքթոր՝*
*Ջըղուկն ընկե՞ր,*
*Որ հասնիս կրկին*
*Որբին ու հիւծին...*
*Ու հանես հոգին*
*Վանն Հայրենիքին...*
*Ահա Ձեզ մեծ փառս՝*
*Ժողուած իր նպաստ։*



digitised by A.R.A.R.@

## ԳՐԻԳՈՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ

*Ազգային մեծ բարերարը, որ իր կենդանութեան Հայաստանի նուիրեց իր ամբողջ հարստութիւնը*

---

*Եգիպտահայ գաղութին երիցագոյն անդամներէն մէկը, ծնած է Կեսարիա 1841ին, իր ծննդավայրի Ազգային վարժարանին մէջ կստանայ միայն տարրական կրթութիւն մը:*

*1882ին կը հաստատուի Եգիպտոսի մէջ, նախ Զագազիկ եւ ապա Աղէքսանդրիա, Ֆէյումի եւ Ասուանի մէջ ճիւղ մը կը հիմնէ ծխախոտի 1888ին:*



Գ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

*1900ին Գ. եւ Կ. Մելքոնեան տունը կը փոխադրուի Գահիրէ, իր նորակառոյց սեփական գործատեղիին մէջ, որուն ամսական սիկառէթի արտադրութիւնը կը հասնի այսօր 15 միլիոնի պատկառելի գումարի մը:*

*Նոյն հսկայ ձեռնարկը գրեթէ 40 տարի առաջ ամենահամեստ միջոցներով սկսած է, որուն տակաւ առ տակաւ փայլումը կը պարտի անշուշտ իր հիմնադիրներուն անդուլ տքնութեան: Մելքոնեան որքան որ կապրէր Ազգային գործերէ հեռու նոյնքան կը շահագրգռուէր սակայն անոր ներքին կեանքով, որուն ամենացայտուն մէկ ժեստը ի կենդանութեան ցոյց տուաւ վերջերս իբրեւ տիպար Ազգասէր ու հայրենասէր ամբողջութեամբ նուիրելով իր հարստութիւնը Հայաստանի կառավարութեան եւ այսպէս յորջորջուեցաւ «Ազատ Հայաստանի արտասահմանեան առաջին հայ քաղաքացի» եւ փակեց աչքերը. Հայաստանի ազատագրութիւնը տեսնելէ վերջ. 1920 Յունիս 2ի չորեքշաբթի օր, որուն թաղման հանդէսը կատարուեցաւ Աղէքսանդրէյ մէջ, արտակարգ պերճանքով մը եւ որուն խոնջած մարմինը ամփոփուած է այսօր Ս. Պօղոս եկեղեցւոյն շրջափակին մէջ:*



digitised by A.R.A.R.@

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

# ԱՆՄԱՀ

## ՏԷՐ ԳՐԻԳՈՐ Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆԻ

## ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*Արտասանուած Սարկաւագի կողմէ իր գերեզմանին վրայ թաղման հանդէսին օրը*

Ըսին դեռ երեկ —«Մելքոնեան մեռաւ...
Բայց ես չեմ հաւատար մահուան շատ դիւրաւ.
Մեռնի՛լ... ինչ դառն է վճիռ անողոք,
Ու անհաւատներ բառնան միշտ բողոք:

Բայց ի՜նչ կըսեմ ես, ո՜վ մահ անիրաւ,
Իրա՞ւ այս մեծ մարդ՝ Մելքոնեան մե՞ռաւ,
Բայց ահա սուգի տպուած իր մահազդ,
Դագաղին մէջ ալ կը հանգչի ինք արդ.

Ահա՛ իր եղբայր, ծանօթներ, կղե՛ր,
Կեցած են իր մօտ, սգաւոր եղեր,
Քահանայ, դպիր, բոլորուած իր շուրջ՝
Մեռելական կարգ կը կատարեն լուրջ...:

Ինչ, կը հաւատա՞ք սակայն դուք իրա՛ւ..
Թէ այս մեծ մարդը, իրապէս մեռա՞ւ
Որ իրեն համար ալ բացածէք հոս,
Խոր ու դժնդակ, ահագին ցուրտ փոս...:

Թողէ՛ք անգութ մահ ու սեւ դատակնիք,
Մեր մեծ բարերար բայց ո՛ւր կը տանիք...
Խորհե՞րէք սակայն եւ գիտէ՞ք աղէկ.
Մեծ մարդիկ մեռնի՞ն, եւ ի՛նչպէս թաղէք...

Լռեն, թող լռեն մահուան երգ, Սաղմոս,
Մեծագործ մարդիկ ո՛չ, չեն մեռնիր հո՛ս
Ո՜ն դադրեցուցէք Ձեր վիշտ, արտասուք,
Գերեզմանն ալ հոս, չը սփռեր արդ սուգ.

Մեծ բարերարն է սա՛ Հայաստանի՛
Որ անունն ու փառք իր հետ կը տանի՛...
Մինչ մեզ կը թողու սիրտն հայրենախանձ
Սա է մեզ համար յաւէտ անմահ անձ:

4 Յունիս 1920 Աղէքսանդրիա — *Սարկաւագ*



digitised by A.R.A.R.@



ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Կտակակատար իր եղբօր՝ Գէորգ Մելքոնեանի, որ հետեւելով անոր. սա եւս իր կենդանութեանը կը նուիրէ իր բոլոր հարստութիւնը Հայաստանի կառավարութեան:

Կարապետ Մելքոնեան, հակառակ իր յառաջացած տարիքին՝ զուարթ կը շարունակէ իր եղբօր մեծ ձեռնարկը՝ երիտասարդի մը եռանդով:

Փառք իրենց անունին:



digitised by A.R.A.R.@

## ՀԱՅՐԵՆԻ ԹԱԶՄԵՐԳ

### Նմանողութեամբ

Հայկեան շեփորայ որոտմ՝ ուժգին.
Զարթնու հայութեան վե՜հ անմահ ոգին,
Պարզի եռագոյն Հայրենի Ս. դրօշ,
Մարտագոռ հրաւէր հնչակի որոշ.

Յաղորդիք Հայկայ,
Մասիս մի՜շտ վկայ,
Թէ Հայն հարազատ
Կտրին յար ազատ.
Օ՛ն ազատագէն
Դիմեցէք ի զէն...

Հայ աշխարհաւէր անմահ մեծ եղերք,
Հայ քաջ մարտիկներ, օ՛ն ասպարէզ.
Ջնջէք հանդիսեան թշնամւոյն զազրա՛ն.
Անցնուր նախնիներն իր երկինք հասա՛ն

Հայո՛ն քեզ առաջ
Հայ մարտիկներ քաջ,
Անցէք օ՛ն յառաջ,
Անվեհեր ձախ, աջ
Սփռեց քեղհանո՛ւր
Մահ սարսափ եւ հուր...

Մարդախանձ հրէշներ, նիւագներ դա՜ր չա՛ր
Վառեցին մեր տուն, պղծեցին Տաճար.
Հայ փողոտեցին զերդ անմեղ ոչխար
Դեռ սուգ է հագած Հայաստան աշխարհն.

Հայո՛ն, հայեր քաջ
Ժամն է օն յառաջ
Առնէք օ՛ն վրէժ.
Անձերն հերչ
Վրէժ օ՛ն վրէժ...
Երէք զէշադէշ...



digitised by A.R.A.R.@

Յաղթ դոփիւններն զօրաց շար ի շար,
Թնդան հայ սրտե՛ր, Արարատ աշխարհ,
Մնչեն Եփրատ, Տիգրիս, Երասխ, Կուր.
Դաշտ, լեռ, ձոր խուլ տան արձագանգ անհո՛ւր.

Խոյացէ՛ք հայե՛ր,
Յառաջ անվեհե՛ր,
Յառաջ շարունակ,
Տարէք յաղթանակ.
Առէք բիւր տեսակ.
Ձեր փառապսակ:

Եղէ՛ք, կորովի հայ հերոսներ արի՛.
Եւ ձեր բիւրայաղթ հանճարեղներ կարի,
Թռէ՛ք մարտի դաշտ, թշնամւոյն առաջ,
Թափեցէք գլխուն շանթեր արդարակ:

Հայ սարսափին յետի՛ն,
Փռէ՛ փառս գետի՛ն.
Դաւը զազանի,
Հինին սասանի,
Հայ արեան վրէ՛ժ,
Թող լուծուի յաւէ՛ժ:

Հերի՛ք տառապած հայեր ձեր վիշտ սուգ.
Հերի՛ք հառաչէք. հերի՛ք տրտմասուգ
Բիւր զենուածներու հայ արեան մէջէն,
Վրէժի ձայներ ահա ձեզ գոչեն.

Հայօ՛ն քաջեր դեռ,
Թափեցէ՛ք շանթե՛ր,
Բոցաշունչ կայծե՛ր,
Թշնամւոյն այն մե՛ր.
Թո՛ղ ջնջի յաւէ՛տ,
Վասին- Անունն եէ՛տ.

Օ՛ն դուք հայրենի ձեր երկրին մանկտե՛ր,
Բաւ որքան ձեր տուն օտարն են խանգե՛ր,



digitised by A.R.A.R.@

Գերեզմանն իրենց պէտք չի մէկն ա՛ս տա՛ն,
Դո՛ւրս դիակներնին հոս է Հայաստան.

Ցնծա՛ց Հայեր ո՛ն,
Տեսէ՛ք խնկո՛ն,
Նահանջեն վաշտե՛ր,
Վախճանին աս ո՛ր,
Ողբալ չը վայլե՛ր,
Վանեցէ՛ք գայլե՛ր..

Բաց ոսկրացիկներ, յառա՛ջ գնացէ՛ք.
Զարկէք ճիւաղը ճակտէն շեշտակի,

Յաղթական պարզէք դրօշն հայրենի
Հայաստանի վրայ թող միշտ ծածանի

Ով երազ երա՛զ,
Ցնծա՛ց հայ բանակ,
Ցնծա՛ց շառաւեղ
Տարէք յաղթանակ.
Թո՛ղ յիշուի անո՛ւն
Հայ անձնեան անուն...

Ալեքսանդրիա — Յր. Տ. Մանուչեան
1920 Մարտ 1 — = Սարկաւագ =



digitised by A.R.A.R.@

# ՀԱՅՐԵՆԻ ՌԱԶՄԵՐԳ

եղանակեց Յ. Մեհրաբեան




digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

# ԹՈՎՄԱՍ ԱՃԷՄԵԱՆ

## ՊՈԼՍԱՀ Յ

## —Քաջ Հայերենագէտ—

**Ծնած 1877—1917 մեռած Իւսկիւտար,**

*Հայերենագէտ եւ Թատերագիր Տիգրան Մանավեանի. Ռէթէոս Պէրպէրեանի, վաղահաս մահերէն վերջ մեր Պոլսոյ Ազգային վարժարաններու մասնաւորապէս Կեդրոնականի եւ Իւսկիւտարի, երկսեռ Ազգային վարժարաններու մէջ առաջին տեղը կը գրաւէր ողբացեալ Թովմաս Աճէմեան իբրեւ քաջ հայերենագէտ որ պատերազմի շրջանին, անակնկալ կերպով կը կնքէ իր մահկանացուն թողլով անմխիթար իր համեստապերճ քոյրերն ու կողակիցը... որ ժամանակ մը իր աջակից եւ աշխատակիցն եղած է Իւսկիւտարի հայ վարժարաններու մէջ:*



ԹՈՎՄԱՍ ԱՃԷՄԵԱՆ

*Տեսչութեան պաշտօնին կոչուած է Ռոտոսթոյի ազգ. վարժարանին. Թրքական սահմանադրութեան հռչակումէն առաջ, այսինքն 1900ի թուականներուն՝ Ապա Երուսաղէմի ժառ. վարժարանին մէջ, հայերէնի եւ ֆրանսերէնի ուսուցչութեան համար մասնաւորապէս հրաւիրուած էր հոն 1904 ին:*

*Բայց նոյն ատենուան տեսուչ Սարաճեան Պետրոս վրդ. համայնագէտի համբաւ հանելու եւ իրմէ աւելի գիտուն մը չը գտնուելու համար վանքին մէջ, առանց բանաւոր պատճառի ընդիմացաւ անոր պաշտօնավարութեան դէմ: Եւ սակայն այս առթիւ Թովմաս Աճէմեան նոյն ատեն Պոլիս հրատարակուած Սիմոն Ալաճաճեանի Փունջի մէջ գրեց երկու նշանակելի յօդուածներ, որոնք իբր յաւերժական արժան պիտի մնան մեր Երուսաղէմի վանական տարեգրութեան մէջ:*

*Թովմաս Աճէմեան ունի անտիպ քերթուածներ՝ Գրիգոր Տղթայեկի մասին ընդարձակ գործ մը, ինչպէս նաեւ հայերէն բառգիրք եւլն. որոնք կարժէ որ մասնաւոր գրքոյկով մը լոյս տեսնէին:*



digitised by A.R.A.R.@

## ՃԱՐՏԱՐ ՆԿԱՐԻՉ

# ՏԵԱՐ ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

*Երկաթեայ մականունով երկաթեայ կամքի ու տոկուն նկարագրի տէր այս պատուական արուեստագէտը ծնած է Պոլիս, որուն մասին Ծաղկաւագի Տարեցոյցը անկեղծ համակրութեամբ կուզէ քանի մը հակիրճ նօթեր տալ իր անվիճելի արժանիքը ծանօթացնելու համար մեր հայ համայնքին:*



*Երուանդ Տէմիրճեան 1885 ին մտած է Պօլսոյ գեղարուեստից վարժարանը եւ նկարչութեան ճիւղին հետեւելով 1890 ին ելած է անոր փայլուն շրջանաւարտներէն, որմէ վերջ իր արուեստը կատարելագործելու տենչով 1893 ին յաջողած է անցնիլ Բարիզ ամենամեծ զոհողութիւններով եւ անձնական խնայողութիւններ ընելով եւ առաջին առթիւ կը մտնէ J. P. Lanrent ի եւ Benjamins, Constant վարպետներու քով: Եւ այսպէս կատարելագործելով իր գեղարուեստի ճիւղը 1895 ին կանցնի Եգիպտոս եւ հոն Cercle artistique ի նկարչական, սրահներուն կը մասնակցի՝ եւ շատերու գնահատումին կ՚արժանանայ:*

*Տէմիրճեան մէկն է այն նշանաւոր դէմքերէն, որոնք յաճախ խուսափած են փառքէ ու պերճանքէ եւ համեստ ու անսեթեւեթ կեանքը աւելի նախընտրած են քան անունն ու համբաւ շինելու համար, ցուցամոլ մը ըլլալ՝ նման անոնց որոնք բան մը ըլլալ կը կարծեն՛ բայց ոչինչ կարժեն իրականին մէջ Տէմիրճեաններու եւ Վահրամ Մանավեաններու քով:*



digitised by A.R.A.R.@

## ԶԱՐԵՀ ՔԻՐԷՃԵԱՆ

— SERTISSEUR —

Ծնած է Պոլիս եւ 1896 ի համիտեան մեծ ջարդին անցած է Եգիպտոս եւ հաստատուած է Գահիրէ. ուր ուսմնասիրած է ոսկերչութեան sertisseur ի (մըխլաճըճը) ճիւղը եւ զայն կատարելագործելով այսօր բովանդակ Եգիպտոսի մէջ առաջին oertisseurի համբաւը կը վայելէ տրժանապէս:



ԶԱՐԵՀ ՔԻՐԷՃԵԱՆ

Պ. Զարեհ Քիրէճեան բառին բուն իմաստով մենակեաց մըն է եւ այս խեղ պատճառաւ թերեւս ամուրի մնացած՝ սրտովին նուիրուած է իր գեղեցիկ գործին. բացի իր արուեստէն կատարեալ սիրահար մ'է մեքենական գիտութեանց, որուն մասնաւոր մեծ հակում մ'ունի. ինքնաշխատութեամբ շինած է կարգ մը մեքենական առարկաներ ամենամեծ նրբութեամբ, որոնք իրապէս մեծ զարմացումով եւ հիացումով գնահատուած են մասնագէտներու կողմէ մասնաւորապէս ոսկերչութեան յատուկ իր ինքնագիւտ գործիքները արդարեւ մեծ գնահատութեան արժանի են:

Ապագային պիտի հրատարակուի անշուշտ իր հեղինակութիւնները մասնաւոր գիրով մը որ ոչ միայն իր համբաւը պիտի շինէ այլ եւ փառքն ու պսակը պիտի կազմէ հայ համայնքին:

Առ այս Սարկաւագի Տարեցոյցը իր անհուն համակրութիւնը յայտնելով մեծ արուեստագէտին՝ անխառն ուրախութեամբ կարձանագրէ իր քաջահամբաւ անունը:



digitised by A.R.A.R.@

# ՄԵԾ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ

## ԿԱՐԱՊԵՏ Ն. ԱՐԻՖԵԱՆ

Ահաւասիկ մեծ արուեստագէտ մը որ ծնած է 1870ին Ակնայ Կամարակապ գիւղը. ինը տարեկանին իր մօր հետ Պոլիս կուգայ ուր կը գտնուի՝ այդ միջոցին հայրը: Մանուկն Կարապետ իր նախնական ուսումը կստանայ Գում-Գափուի Մայր վարժարանին մէջ տասնը չորս տարեկանին ոսկերչութիւն սորվելու համար կը մտնէ Ասլանեան եւ Քէօլէեան անուանի վարպետներու քով: 1891 ին Արիֆեան նախաձեռնութիւնը կունենայ Զուխաճի խանի մէջ իբր վարպետ յատուկ գործատեղի (խանութ) մը բանալու ուր ինքնօգնութեամբ անդուլ եւ ժրաջան աշխատութբ. կուսումնասիրէ ոսկերչութեան արուեստին զանազան ճիւղերը, որոնց իւրաքանչիւրին զանազան վարպետը կը դառնայ, որով չըկայ ոսկերչութեան ճիւղ մը՝ որու մասին խոր հմտութիւն չունենայ Պ. Արիֆեան եւ այս իսկ պատճառաւ ամեն ոսկերիչ զինք կը կոչեն այսօր «Մեծ Վարպետ»



ՏԵԱՐ Կ. Ն. ԱՐԻՖԵԱՆ

Բնականէն համեստ այս արուեստագէտը յաւիտենական անզուսպ փափաք մը ունի միշտ կատարելագործելու իր գեղարուեստը:

1900 ին Փարիզ Մուզաֆֆէրէտտին Շահը գնահատելով իր արուեստին մէջ ունեցած խոր հմտութիւնը, պատուած է զայն Շիր խուրշիտ պատուանշանով, եւ իր գործունակութիւնը յայտնած է մասնաւորա-



digitised by A.R.A.R.@

## ՈՍԿԵՍՈՒՐԸ

### Քաջամարտիկ հերոս Ս.Անդրանիկին

### Նուէր ի նշան խորին հիացման, Եգիպտահայ գաղութէն









Գործ Նրբափորագրիչ Տեար Կրպտ. Ն.Արիֆեանի



digitised by A.R.A.R.@

պէս Գաբոն Արիֆեանի՝ պարսկական ադամանդակուռ պատուանշաններ եւ այլ պալատական զարդեր ինք կերտած ըլլալուն համար հրաշալիօրէն:

Գ. Արիֆեան 1903 Թուականներուն մասնաւոր կերպով կանչուած է Եգիպտոս մեծ ու պատուաբեր ընկերութեան մը կողմէ, ուր կը շարունակէ մինչեւ այսօր իր սիրելի արուեստը. միշտ լաւագոյն ծգտումներով:

Երբ Եգիպտոսի անդրանիկ Սուլթանը՝ Հիւսէին Քեամիլ գահ կը բարձրանայ Գ. Արիֆեան պատիւը կունենայ արքայական մանեակը ինք շինելու, որ Մուհամմէտ Ալի անունով կը յորջորջուի եւ այդ մանեակն էր որ Սուլթանը իր վիզը կըկրէր:,

Այսպէս Եգիպտական նոր ականակուռ պատուանշանները՝ Գ. Արիֆեանի ճարտար ձեռքերու արտադրութիւններն են:

Վերջերս Եգիպտահայ գաղութին հանգանակութեամբ Զօր. Անդրանիկի համար պատրաստուած պատուոյ սուրը որ բազմակողմանի արուեստ կը պահանջէր, դարձեալ Գ.Արիֆեանի ձեռագործն է, որ արդարեւ պատիւ կը բերէ իրեն եւ հայ անունին միանգամայն:

Գ. Արիֆեան որքան համեստ արուեստագէտ մը նոյնքան Թունդ հայրենասէր մ'է, որուն իղձն ու բաղձանքն է այլեւս ոչ Թէ օտարներու այլ ուղղակի իր սիրելի Հայկական պետութեան պատուանշանները եւ մեծ զօրավարներու պատուոյ սուրերը ինք իր ձեռքով պատրաստել, զոր կը մաղթենք բոլոր սրտով:

2 Նոյեմբ. 1920 Գահիրէ Երուանդ Տէմիրճեան



digitised by A.R.A.R.@

## ԴԱՄԲԱՆԱԿԱՆ *
## ՏԻՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ
### —ԵՐԻՑԱՑԻ—

*Վախ Տիրան, հազիւ բոլորած էիր կեանքիդ երեսունը հինգ գեղածիծաղ գարունները այնքան բուռն եւ այնքան խոստմնալից անուն յանկարծ, օտար երկնի տակ հրաշունչ արեգական կիզիչ ճառագայթներէն խանձեցար, հեռու հայրենիքէդ, հեռու ծննդական խնամքէն:*



*Դո՛ւ, որ անտիպական հասակէդ նուիրուած էիր ինքնազարգացման Երիզայքն Կիպրոս, ապա անկէ հո՛ս՝ Եգիպտոս եկար ու ինկար այս անիմաստ եռ ու զեռին մէջ եւ ուր ճարելու համար ապրուստդ յամառ աշխատութեամբ մը գրեթէ մինչեւ վերջը քաշկռտեցիր կեանքդ եւ օր եղաւ, գիշեր եղաւ թերեւս որ քաղցած ալ մնացիր. բայց ո՛չ ըր յայտնեցիր ոչ մէկին՝ վասն զի արժանապատուութեան ոգիդ որ միշտ բարձր մնաց քու մէջդ՝ երբեք չստորնացաւ, եւ չի զիջանեցար ձեռք կարկառել ուրիշին, մինչեւ անգոր հիւանդութիւնը եկաւ զգաւելու աղիքներդ, եւ ինկար անկողին, ու բարեկամներդ տեղեկացան:*

*Բայց տե՛ս, բա՛ց հիմա աչքերդ, ու խոնուն նայուածքովդ դիտէ՛ քու շուրջդ, այդ բարեկամներդ ու համակիրներդ քովդ են*

---

* Արտասանուած տարաբաղդ Տիրանին դագաղին վրայ՝ Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն արտագաւթին մէջ:

Այս միջոցին Առաջնորդ Սրբազանը փոխանորդ ազգահանդէսին նախագահելու Առաջնորդարանի պաշտօնէին կը դիտէր, սրտմտեալ, ննջեցեալը աղքատ մըն էր:



digitised by A.R.A.R.@

դարձեալ կարեկից ու արտասուալից աչքերով, եկած կեցած են այժմ քու քով:

Տէ՛ս Միհրդ ալ, որ սկիզբէն ի վեր իր մտքին կայծ մը ու վառ ուսէն խայծ մը քեզի փոխանցած էր, ահա՛ այն ալ եկած կեցած է սեմին վրայ ու կը խորհի թէ ինչո՞ւ մեծատուն մը չէր ըլլար որ ըլլար օգնէր քեզի զի, եւ փափաքած համալսարանդ երթայիր, ուսման ու գիտութեան խաղցրագոյն կաթը առատօրէն վայելելու եւ նուիրուելու մէկ օր ազգին, որուն համար զգա,ուն սիրտդ մինչեւ վերջը բաբախեց,

Արդարեւ դու էիր Հայ երիտասարդութեան տիպարը, քու ընդենի կեանքիդ մէջ, եւ ուր փոխանակ հանոյքի եւ զուարճութեան հետեւելու, ընդհակառակը հասը գիրք մը բռնած ա-նօթիդ ներքեւ զայն կորճայիր մինչեւ վերջ:

Արդարեւ դու էիր օրինակը զօրաւոր կամքին ու յամառութեան՝ դժնդակ կեանքին որուն դէմ ոգի ի բռին մաքառեցար մինչեւ վերջ.

Արդարեւ դուն էիր անկեղծութեան տիպարը, անիրաւութեան եւ բռնութեան դէմ ծառացող եւ անոր համար ահա՛ քու շուրջդ համախմբած ես վերջին վայրկեանին իսկ քու բոլոր համակիր-ներդ:

Քու մտաւորական ազնիւ գաղափարներուդ իր գրաւական-նը, երբեմնի յօդուածներդ ալ մի՛շտ պիտի մնան յուսաբերի կեդ-րոնին մէջ, եւ սերունդներ պիտի կարդան մի՛շտ զանոնք,

Կեանքիդ շրջանին մէջ արդարեւ ունեցար փորձիկներ ու անձիդ շուրջ գրկանքներ ու հալածանքներ եւ սակայն արիաբար պայքարեցար անոնց դէմ:

Արդարեւ հայրենիքիդ արժանաւոր զաւակն էիր դու, խոստմ-նալից. եւ սակայն աւա՛ղ, ազատութեան այս նախօրեակին կը լքես աշխարհը, այն համոզմամբ թէ եւս թէ խաղաղութիւն չունի ան, ու հանգիստ չկայ խոնջած մարմինիդ. եւ կ'ընտրես գերեզմանը վերջնական հանգիստդ գտնելու համար հո՛ն թերեւս:

Բայց կեցիր, ո՞ւր կ'երթաս, արիութեան վեհ ոգին, կեցի՛ր, հայրենիքը պէտք ունի դեռ քեզի պէս արթնամիտ զաւակներու



digitised by A.R.A.R.@

անխոնջ աշխատողներուն, եւ ո՛ւր կը թողուս սրտակիցներդ որոնք դեռ դասեր ունին քեզմէ սորվելիք:

Մեռելներուն ճամբան է աս, ետ դարձիր, մահուան անդունդը կ'առաջնորդէ քեզ ան, յաւիտենապէս թաղելու:

Բայց ի՜նչ կ'ըսեմ, քու ճամբաներդ չեն թաղուիր, այլ սրտերու մէջ կը քանդակուին անոնք, եւ ահա տակաւին խրոխտ ձայնդ կ'արձագանգէ սրտակիցներուդ ականջին:

Դարձի՛ր ուրեմն, ե՛տ դարձիր, դու ազնիւ հոգի, քու վսեմ գաղափարներդ ու օրինակելի զգացումներդ զերեզմանէն աւելի խոր տեղ մը գրաւած են քեզ ճանչցողներուդ սրտին մէջ արդէն, ո՜չ չենք կրնար թաղել քեզ, վասն զի, վսեմ գաղափարն եւ անկեղծութեան, դու կ'ապրիս ու միշտ պիտի ապրիս ասկէ վերջ իսկ մեր մէջ:

Թող միշտ սաւառնի ուրեմն մաքուր հոգիդ մեր վրայ, բայց հանգիստ կը մաղթենք քու տառապած ու խոնջած մարմինիդ, որովհետեւ մեծ հանգիստի մը պէտքը կ'զգայի՛ր:

Հանգստացի՛ր ուրեմն այլե՛ւս. անբաղդ Տիրան:

ՍԱՐԿԱՒԱԳ

Աղեքսանդրիա
1920 Յուլիս 20





digitised by A.R.A.R.@



## ՊԱՐԱՐՏԱՑԱԾ ԱՌԱՋՆՈՐԴԸ

### «Յանուն Երրորդութեան... հրաժարած եմ պաշտօնէս»*

Պ. Թէոփիլեան

*Գալով Ձեր վերոյիշեալ նամակին պարունակած նախատինքներուն, քաղաքական ժողովը այսու կը պահանջէ որպէսզի թուականէս մինչեւ ութ օր յետս կոչումով մը զղջում յայտնէք Ձեր գրութեան համար. առանց որոյ Ձեր այդ նամակին Ֆրանսերէն թարգմանութիւնը պիտի յանձնուի տեղւոյս խառն դատարանաց փաստաբանական կաճառին նկատառման ու յետոյ պիտի տնօրինուի պարտ ու պատշաճը.*

*Առաջնորդական փոխանորդ*

*Աղեքսանդրիա 28 Հոկտեմ. 1918*

*Մինչ ըստ Աւետարանի. Այոն այո եւ ոչն ոչ պէտք է ըլլայ եկեղեցականի մը երդումը:

digitised by A.R.A.R.@



Ձեղծարարներու անհաշտ թշնամին
ՄԷԹՐ ՄԿՐՏԻՉ ԹԷՈՓԻԼԵԱՆ
Տօք. իրաւագիտութեան, վկայեալ Լօզանէ

---

*Շնորհազարդ Սրբազան**

*Գալով Ձեր սպառնալիքին որովհետեւ երբէք տեսնուած չէ որ անկյտուց ռոնկաններ ազատագրել կանղի մը սպառնան, հաւատացէք որ տանկառուն եւ զեղծասուն քննական թափչորդի մը. ծառի խօսնակ փուշտիպան մը աւելի վարպետորդի հնարք մը չի պիտի կրնային ցոյց տալ ձեզի.*

*Տի՛ օն, անկյտուց ռոնկեան, առանց երկարորէն անղանելու, զգեստաւորուեցէք Ձեր վախկոտով եւ շանփիրակով, տուէք Ձեր ընկերը Ձեր փուշտիպաններին մէկուն ձեռքը. եւ ձեռ ընդ ձեռ գիտեցէք... կամ ո՛ւր որ կուզէք:*

* Սոյն երկու նամակները փոխանակուած են Առաջնորդի եւ մէթր Թէոփիլի միջեւ, թէմական ընտրութեան քուէարկութեան առթիւ, որ ծագում առած է բուն ժառանգութեան մը խնդիրէն, որուն կարգադրութեանը եօթը տարի է ի վեր արգելք կը հանդիսանան Շնորհալի Առաջնորդը եւ իր խնկարկու փուշտիպանները:

Այս առթիւ պիտի արժէր կարդալ «Հայ ուստիճները», որ անշուշտ մօտ ժամանակէն լոյս կը տեսնէ. Սարկաւագին Տարեցոյցը

digitised by A.R.A.R.@

# ԳՈՆԷ ԳԵՐԵԶՄԱՆԸ ՅԱՐԳԷԻՔ

## ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ազնիւ Պարոն Մանավեան

Տարեցոյցիդ համար Դանիէլ Վարդապետի վրայ կենսագրական նօթեր ուզեցիր ինձմէ: Այդ նօթերը տալէ առաջ Վարդապետին հետ առնչութիւն ունեցող՝ եւ Աղեքսանդրիոյ հայ գաղութին պատմութեան սեւ էջերէն մին կազմող դէպք մը՝ պիտի ուզէի որ տարեցոյցիդ մէջ անցնէր, եւ երբ վաղը մէկը փորձէր Եգիպտահայ գաղութին պատմութիւնը գրի առնել փափաքելի է որ չմոռնար թէ՝ 1920 դարաշրջանին բարեխնամ առաջնորդութեան օրով Թորգոմ Գուշակեան ամենաբարի Եպիսկոպոսին եւ Առաջնորդական փոխանորդութեան նոյն եպիսկոպոսի ձեռնասուն մի ոմն Հայկազուն գեղեցկադէմ քահանայի՝ Դանիէլ վարդապետի գերեզմանը ՍՐԲԱՊՂԾՈՒԵՑԱՒ:



ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

Դանիէլ Հայր Սուրբին եկեղեցւոյ շրջափակին մէջ երկու մեթր հող չկրցան տալ՝ ինչպէս փութացած էին ընել Յովսէփ



digitised by A.R.A.R.@

Այվազեան Եպիսկոպոսի ջոջ աղա պաշտպանները, եւ ոչ իսկ Ազգային Սինոդին փայտէ խաչ մը վրան դնելու պէտքը զգացին՝ մինչդեռ նոյն այդ Սինոդին յուշարձան մը կանգնուեցաւ Այվազեանի գերեզմանին վրայ. Այվազեան քէշերը լցած էր Բաշաններու պէյերու։ Դանիէլ Վարդապետ ազգին ազատութեան, ժողովուրդեան համար ապրած չարչարուած՝ արժէք մը չէր ներկայացներ...

Բայց երբ՝ փայտէ խաչ մը կամ պարզ քար մը դնել մըտքերնին իսկ չանցաւ, այդ միեւնոյն Ազգ. իշխանութիւնները՝ համարակաց գերեզմանատան մէջ Դանիէլ վարդապետին համար ափ մը հող ալ կ'երեւի չափազանց գտած են, եւ խնայողութեան ամենամաքուր սկզբունքին վրայ յենած՝ թերած թաղած են գրեթէ միեւնոյն գերեզմանին մէջ ն եւ է քահանայ մը։ Այդ քահանային յուղարկաւորութեան ներկայ է եղ մը՝ ինծի հաւաստեց թէ երբ նոր փոսը բացած էին խեղճ Դանիէլ Վարդապետին ՈՍԿՈՐՆԵՐԸ ԵՐԵՒԱՆ ԵԿԱՆ. Ականջներուս հաւատալս չէր գար, ուզի աչքովս տեսնելու հաստատելու արքապղծումը։ Երբ Դանիէլ վարդապետի յիշատակը յարգողներ կան դեռ հոս, պիտի յանձնարարէի որ ձանձրոյթը առնէին մինչեւ Ազգ. գերեզմանատուն երթալու, իրենք ալ ինծի պէս անհուն կսկիծով գայրոյթով հաստատելու համար տխուր իրականութիւնը։ Կ'ուզէք գիտնալ հասկնալ թէ՝ երբ դեռ իրենց պէս հազարաւոր վեղարաւորներու գերեզման ծառայելիք պարապ հող կայ փառք Աստուծոյ գերեզմանատան մէջ, ի՞նչ են նախախնամական այլ խորախորհուրդ պատճառները, եւ որոնք են այդ հանգուցեալ քահանային տիտղոսները եւ ազգին մատուցած ծառայութիւնները որ իրաւունք կուտան Աղեքսանդրիոյ հոգեւոր հայրերուն, իրենցմէ մէկը բերելու եւ հայ եկեղեցւոյ ամենէն մաքուր. ամենէն ազնիւ, ամենէն անշահախնդիր, որ միեւնոյն ատեն հայ յեղափոխութեան ամենէն կտրիճ եւ ամենի զինուորներէն մէկուն, Տէրէվենքի Առիւծին գերեզմանը քայքայելու։ Այս արքապղծումի անորակելի



digitised by A.R.A.R.@

՝արարքը շարունակութիւնն է արդեօ՞ք այն բարոյական չարչարանքին, որ տարիներէ ի վեր Աղեքսանդրիոյ Առաջնորդական շրջանակը Առաջնորդէն մինչեւ դռնապան, չդադրեցան թրքական բանտերու այս մարտիրոսին հրամցնելէ, չէ՞ թէ սեւ հոգիի մը անձաս մէկ արարքը մահուընէն վերջն ալ հանգիստ չձգելու համար խեղճ բարի Հայր Սուրբը: Ամէն պարագայի մէջ իրականութիւն մը կայ, եւ ինչ որ Վարդապետը քրիստոնէական ներողամտութեամբ նոյն իսկ իր ուղղութեան իր ամենամտերիմներուն բառ մը չէր ըսեր, Առաջնորդարանի այդ շրջանակին մէջ իրեն սեղմուած վիճակի մասին, չէր մոռնար սակայն իր մենութեան մտերմին՝ թղթին յանձնելու իր ցաւերը. երբ կը թղթատեմ իր յիշատակներըն բարկութեան եւ պժգումնքի զգացումներ իրար կը յաջորդեն, լսեցէք մի քիչ:

Այսօր «սինիք» սարկաւագ մ՚է որ քիլօնը վարդապետին կռնակը տուած միջոցին շնութիւնը կ՚ունենայ «Զուլդ» կռոնակդ տամ ըսելու, Հայր Սուրբը չի խօսիր. ու սրտին ցաւը կը նետէ թղթին վրայ:

Ուրիշ օր մը Առաջնորդ մ՚է՝ Օրմանեանի արժանի աշակերտ մը, ուսեալ բանաստեղծ, վայրկեան մը ուշ եկած բլայուն համար զինք յանդիմանող թրքական անունով մը շատ լաւ գիտնալով թէ, հայ մատնիչներու կողմէ անոր ճիտը փաթթուած այս զզուելի առասպելը, վատ զրպարտութիւնը, ինչ անսահման կսկիծ կը պատճառէ Տէրէվէնքի Վանահայրին, եւ կրնաք երեւակայել թէ ինչո՛ւ համար կանչուած է, որովհետեւ այդ գիշերը Սրբազանին քունը չտանիր եւ Դանիէլ վարդապետ թեւի ցաւէն սաստիկ տառապելով հանդերձ պէտք է հին օրերու պատմութիւններ ընէ մինչեւ որ Առաջնորդին քունը գայ. Սրբազանը կը քնանայ վարդապետը դեռ հոն է՝ թեւին ցաւովը տառապելով եւ հրամանի սպասելով որ քաշուի. աչքերնուդ առջեւ կը բերէք պահ մը Տիրայրի, Թորոսի, Փանոսի զինակիցը իր Լալէյի դերին մէջ. Ու բարոյական ցաւը կսկիծը վարդապետին՝ հոս չմնար, իր աղքատները ունի, անոնց



digitised by A.R.A.R.@

համար պարտեր ըրած է՛ եւ դարձեալ չհասնիր, կը դիմէ Ազգաստախնամին չի լսուիր, կը մտածէ վիճակահանութեան թըղթեր առնել «մսխումներ» ընել ինչպէս ինք կը գրէ, յուսալով որ անոնց շահովը կրնայ իր պարտքերը հոգալ. իսկապէս ալ վիճակահանութեան թուղթ մը 40 ոսկի կը շահի, կը կարծէ՞ք որ այդ դրամ՛ը վարդապետին ձեռքը կ'անցնի, Առաջնորդարանի ծառաներէն մին գիտակցութեամբ կրօնականի մը՝ միջոցը կը գտնէ պարգեւաթուղթը շորթելու, եւ Հայր Սուրբը կը ներէ, կը ներէ միշտ ինչպէս ներած էր զինք բուռն կառավարութեան ձեռք յանձնող հայուն, եւ անոր ազատման աշխատած:

Ու հիմայ որ վարդապետին գերեզմանին սրբապղծումին ինծի պատճառած զայրոյթին առթիւ, պարտաւորուեցայ պահ մը մոռնալ ինքնախոստումս եւ զբաղուիլ Առաջնորդարանի շուրջ խնդիրներով որոնք ինծի համար փակուած հաշիւներ են քանի մը տարիէ ի վեր, ահաւասիկ Ազնիւ Գ. Մանավեան քանի մը հակիրճ կենսագրական նօթեր՝ ողբացեալ Դանիէլ Հայր Սուրբի վրայ:

Ծնած է 1849 Յունիս 25ին՝ Կեսարիոյ Տէրէվէնք գիւղը, եւ մկրտուած Յուլիս 2ին նոյն գիւղի Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ, նոյն օրը Ս. Լուսաւորչայ տօն ըլլալով եւ մանաւանդ իր մեծ հօր (մօր կողմէն) անունն ալ Գիրգոր ըլլալուն, զինք կոչած են Գիրգոր. աղքատ ծնողաց զաւակ մինչեւ 12 տարեկանը գիւղին վարժարանը յաճախած է, 14 տարեկանին նկատի առնելով իր ամէնէն յաջողակ աշակերտը եղած ըլլալու պարագան, եւ իր անբասիր վարքը նկատի առնելով մանաւանդ թէ եկեղեցւոյ ամէն պաշտօնները կը կատարէր, զինք կը կարգեն վարժարանի դասատու. 80 աշակերտ ունի եւ ջնջին ամսական մը որ ամբողջովին կը յատկացնէ իր ընտանեաց պէտքերուն. հեզահամբոյր միեւնոյն ատեն քաջ եւ յանդուգն, վարդապետը անմեղ ինքնագոհացում մը ունի իր կենսագրականին մէջ գրելու. «Աչքս ամուր էր, կռուի կը վազէր, ոչ մէկ բանէն երկիւղ



digitised by A.R.A.R.@

չէր կրեր» ու կը պատմէ Թալաս գիւղի 50—60 Յոյն պատանիներու դէմ իր պարտասիկի յաղթական կռիւները:

Վարժապետի այս սահմանափակ վիճակը սակայն, չի գոհացներ պատանի Գրիգորի, մտածում մը միայն ունի, ուսանիլ, զարգանալ, իր ապագան շտկել, ծնողքը սակայն չուզելով զրկուիլ Գիրգորի առած վարժապետական ամսականէն ականջ չեն կախեր: Յուսահատած օր մը հօրենական տունը կը ձգէ եւ ազգականի մը տուն կ'ապաստանի, ու անկից վերջնագիր մը կը ղրկէ ծնողքին, ճարահատ տեղի կուտան եւ մայրը կ'ստիպուի Աղեքսանդրիոյ իր եղբօր Յակոբ աղա Աշըգեանի գրել, որ անմիջապէս Եգիպտոս կը կանչէ զիրենք: Գիրգոր թէպէտ ո եւ է սէր մը չունի եկեղեցական վիճակի վրայ բայց իր մօրեղբօր հնազանդելու համար ստիպեալ կը ղրկուի Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը եւ կ'աշակերտի Իզմիրցի Սարաֆեան Վարդան պատուելիին. 1870 դեկտ. 10ին սարկաւագ՝ եւ 1871 յունիս 21ին կը ձեռնադրուի վարդապետ Տ. Եսայի Պատրիարքին կողմէ. ժամանակ մը Ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը կը վարէ, բայց զզուած վանական էնթրիգներէ ու առողջութիւնը խանգարուած, բժշկին խորհուրդով եւ Պատրիարքին յանձնարարականով կ'ուղղուի իր հայրենիքը Տէրէվէնք, ուր քիչ ժամանակ ետքը 1876ին վանքին վանահայր կը կարգուի. 1878ին Զէյթունցի Սմբատեան Մնացական պատուելին վա՛ք կուգայ եւ միասին խորհուրդ կը յղանան Եօզղատի Թէրզիլի գիւղաքաղաքին մէջ՝ Կեդրոնական վարժարան մը հաստատել, ուսուցիչներ պատրաստելու եւ շրջակայից 15.000 թրքախօս հայութեան մէջ մայրենի լեզուն տարածելու նպատակաւ:

Վարդապետը եւ Պատուելին այս առթիւ Պոլիս եւ Եգիպտոս կ'այցելեն հանգանակութեան համար որ մասամբ միայն կը յաջողի. քիչ մը ետքը Եօզկատի Կեդրոնական Մասնախումբի անդամներուն մէջ երկպառակութիւն ալ ծագելով ձեռնարկը բոլորովին կը վիժի. հանգանակուած գումարով



digitised by A.R.A.R.@

Թերզիի կալուած մը կը գնուի իբր եկեղեցւոյ հասոյթ եւ վարդապետը կը վերադառնայ վանքը. հայրենասիրական աղւոր յոյսերուն տրուած այս հարուածին առթիւ՝ իր յիշատակներուն մէջ ցաւի եւ զզուանքի սա տողերը կը նօտէ աղաներու երեսին «Անձնական շահը եւ շռայլ կեանքը Տաճկաստանց«ւոց գիւղերուն մէջ փռնած է, դու ինչ կ'ուզես ըրէ, նա «չկրնար ընդհանուրը խորհիլ՝ անձնական շահը միշտ իր նախ«նիրը եւ մեծ ոճ րները կը գործէ. տարաբաղդ Կիլիկիոյ այս «անգամ ալ վտարուեցաւ, շահամոլ ներկային 10 փարային «ապագային միլիոնները զոհ տուող աղաներու զօրեղ դիւա«ւանագիտութեամբ…

Այնուհետեւ վարդապետը նպատակ մը միայն ունի՝ իր վանքը շէնցնել եւ կը յաջողի. բայց արդէն յեղափոխական առաջին շարժումները սկսած են, Ժիրայրի շրջանն է, վարդապետը հոգւով մարմնով կը նետուի կազմակերպութեան մէջ, ինքն է ապստամբներու կազմակերպիչը, վանքը կը դառնայ Ջեյլոներու թաքստոցը, իր գաւառացիի հասուն տրամաբանութեամբ կը տեսնէ վտանգը՝ Նազարբէկի կեդրոնին սխալ քայլերը, «Եաֆտաներու անժամանակ փակցուիլը»— Ռշտունիին անհաշիւ գործունէութիւնը, փոքրիկը որ կը կուտակուի առանց լուրջ պատրաստութեան մը. կը մատնանշէ մանաւանդ գործին անյարմար մարդոց կազմակերպութեան մէջ գտնուիլը, անոնք ամէնքը, կը գրէ բայց ծանր բառ մը իսկ չունի, միայն արհամարհանքով կը յիշէ անունները այն ամէն մատնիչներու որոնք «առանց ապտակ» մը ուտելու-- Վարդապետին բառերովը—կը յանձնեն կնիք, տումար, կազմակերպական ամէն գաղտնիք. կը բաղդատէ՝ Ժիրայրն ու Ռշտունին՝ եւ որչափ հիացում, պաշտամունք ունի Ժիրայրի համար, այնչափ անտարբերութիւն մը Ռշտունիի մասին. մի առ մի մէջ բերել այն ամէն միջադէպերը՝ զոր մանրակրկիտ կերպով կը նկարագրէ իր ձերբակալումի միջոցին՝ եւ անկից յետոյ մինչեւ Գաղատիոյ դատաստանին վերջաւորութիւնը, բաւական խոշոր հատոր մը պիտի կազմէր։

Գաղատիոյ դատաստանէն մահուան դատապարտուածներուն մէջն է ինքն ալ, որ յետոյ ութը տարի աքսորի կը փոխ-



digitised by A.R.A.R.@

որի. եւ կը փոխադրուին Պոլիս ո՛ւր Աշըգեան Պատրիարքը կարգալոյծ կ'ընէ զինք Ափրիկեան Տրիպոլիս աքսորուելէ առաջ. վարդապետը իր եօթը ընկերներով մէկուկէս տարի աքսոր մնալէ յետոյ՝ Իզմիրլեան Պատրիարքին օրով ներման կ'արժանանայ, բայց որովհետեւ նախ իր ետ կանչուելու պաշտօնաթղթերը կը հասնին Տրիպոլիս, իր բանտակիցները Պատրիարքին կողմէ կղերականի մը կողմնակցութիւն՝ եւ իրենց վիճակովը չզբաղիլ նկատելով, իրենց ամբողջ քէնը, վրէժը, կը թափեն խեղճ վարդապետին վրայ, Եւ Կարապետ Այաճանեան անուն Կեսարացի բանտարկեալի մը առաջնորդութեամբ՝ եւ մեղսակցութեամբ բանտապետին, եւ պահապաններու պետին, որոնք Ճիվանեան Մարտիրոս անուն 22 տարեկան Կեսարացի երիտասարդի մը մահուան պատճառ դարձած էին, եւ վարդապետին Պոլիս նառնելովը իրենցմէ այս մասին հաշիւ պահանջուելու սարսափին ունէին, կ'որոշուի վարդապետին կորուստը եւ ծրագիրը կը պատրաստուի հայ աքսորեալներու, եւ երկու թուրք պաշտօնեաներու միջեւ, Դանիէլ վարդապետի յիշատակներուն մէջ՝ քանի չափ էջեր կը գրուեն մանրամասն նկարագրութիւնը այն գազանային արարքներուն որ Տրիպոլսէն վերադարձին, ծովեզերին մէջ թուրք զինուորականութիւնը կրել տուած է իրեն, եւ որ գրիչս առաջ չերթար գրելու. Ծեծ, անարգանք, թուք, մուր, 15 ակռաները քաշել—վարդապետին բառերովը—«մարանկօզի քէլբէթին»ով եւայլն ինչ որ մարդկային գազանութիւնը կրնայ երեւակայել, ոչինչ պակաս չէ հոն. ու այդ էջերը կարդալէ յետոյ անկարելի է չհիանալ, պաշտամունք մը չունենալ հայ ազատագրումի այս մեծ Մարտիրոսին համար, Դանիէլ Վարդապետ Բարոեղեան պիտի մնայ հայ յեղափոխութեան Տիտաններէն մին, թերեւս ամենէն մեծը եւ միեւնոյն ժամանակ ամէնէն համեստը...

Աքսորէ վերադարձի՛ն ազատ արձակուելէ առաջ, երկու ամսոյ չափ դեռ Զապթիէի բանտը կը պահեն զինք. հոն կը ճանչնայ Պարտիզակցի Վահան վարդապետը. եւ Մալկարացի Աբրահամ եպիսկոպոս մատնիչները, Նազըմի գլխաւոր ժուռնայնիներէն, տարիի մը չափ Պոլիս աստանդական կեանք կ'անցընէ, եւ Պոլսոյ մէկէ աւելի բարեծանիկ եւ բարեխիղճ կրօնականները, ըստ իր բարի սովորութեան շահագործուելէ յե-



digitised by A.R.A.R.@

տոյ, Գուզկունեանցի քարոզչութեան միջոցին, նորէն կը վտանգ-ուի. Ոստիկանութիւնը կը պաշարէ եկեղեցին. Վարդապետը երէք օր առաջ արդէն վերցուցած է ամէն ինչ, զէնք, գիրք, եւայլն. բան չեն գտներ բայց իր Պոլիս մնալը այլ եւս ան-կարելի դարձած է, Երկաթեայ Պատրիարքը ոչ եւս է, Բարթո-ղիմէոսի Տեղապահութեան աղտոտ շրջանն է. Դանիէլ Վար-դապետին եւ Տեղապահին միջեւ ծանր բախում մը տեղի կ'ու-նենայ. վերջաւորութիւնը նոյնութեամբ կ'ընդօրինակեմ հոս։

Տեղապահը.—Դուն պէտք է Ռումէլի Հիսար երթաս, եւ հոն եկեղեցւոյ մէջ երբ ատեան ելլես. պէտք է բերանդ բաց-ուի Սուլթանին վրայ բարեմաղթութիւններ ընելու:

Դանիէլ վարդապետ.—Սուլթանին վրայ այդ բարեմաղթու-թիւնները դուք ըրէք, վասն զի դեռ եւս շատ ապրի որ քիչ խմեց հայու արիւնը, պակասը լեցնէ, ես ընեմ նէ անէծքի տեղ կ'անցնի եւ շուտ կը մեռնի:

Վարդապետը նոյն օրն իսկ Ազգ. Հիւանդանոց կը դրկուի եւ է մէկու մը հետ հաղորդակցութիւն չունենալու հրամա-նագրով, եւ քանի մը շաբաթ ետքը շոգենաւ կը դրուի Երու-սաղէմի վանքը երթալու համար—«Ելանք նաւ մէկ մը խոշոր «շունչ առի, ես դարձայ դէպի Պոլիս—Պոլիս եթէ մէկ մ'ալ «ես դառնամ նայիմ նէ քեզի երկուք թող ըլլայ»—ինք Պոլիսը կը ձգէր, բայց Պոլսոյ կառավարութիւնը իր օձիքը չէր ձգեր, լրտես մը յատկապէս կը ճամբորդէ միեւնոյն նաւուն մէջ, արդապետը կը կռահէ, Աղեքսանդրիա հասնելուն ցամաք կ'ել-լայ, կը գտնէ իր մօրեղբօրորդին Գիրգոր աղա Աշըգեանը եւ եր-կար ժամանակ կը հիւրասիրուի անոր տունը. գաղթականու-թիւնը վրայ կը հասնի Հայկ Էֆիզլէր Ատենապետ Թաղ. ժո-ղովոյ գաղթականաց վերատեսուչ կը կարգէ զինք:

Այդ թուականին մինչեւ իր մահը Աղեքսանդրիոյ աղքատ-ներու իբր երկրորդ Նախախնամութեան դերը, այնչափ ծանօթ է ամէնուն, որ իմ կողմէս բառ մը աւելցնել իր անբաղդա-տելի գեղեցկութենէն բան մը պակսեցնել պիտի ըլլար:

*Ձերդ*
*Խորին յարգանօք*
*ԲԱՐՍԵՂ ՕՀԱՆԵԱՆ*



digitised by A.R.A.R.@

*Թովմաս Անէմեանի անտիպ գրութիւններէն*

## ՄԱՐԴ

*Իր ձիրքերով հրեշտակ,*
*Ու կիրքերով անասուն,*
*Լոկ կամքն ունի զօրութիւն*
*Գոյութիւնը՝ նպատակ:*

*Երազներու մէջ պիտակ*
*Կուզէ ապրիլ կեանք մ'անհուն*
*Ըզգացումով մ'անանուն,*
*Բայց փոս մը կայ ոտքին տակ:*

*Մարդ՝ բնութեան հպատակ՝*
*Կը պայքարի անոր դէմ.*
*Ճակատագրին անգիտակ.*

*Եւ մինչ գիտէ կեանքն անշէջ*
*Երկինք՝ Երկիր համընդդէմ*
*Զինք կը բաժնեն իրենց մէջ:*

## ԻՒՍԿԻՒՏԱՐ

*Իւսկիւտար, վայրի վարդը Վոսփորին.*
*Որ նուրբ նուազով կը շարէ շեզուն*
*Թռչունին, աղջկան ու քերթողներուն*
*Ուր կանաչն է բարձր, կապոյտը խորին:*

*Իւսկիւտար կեանքիս որրանն է՝ օծուն*
*Թոյրով ու ցողով, շողովն Եթերին.*
*Իր խանձարուրքը Վոսփորի զօտին՝*
*Աստղի ու ծաղկի ցոլքերով նախշուն:*

*Իւսկիւտարն է բոյն սըրտիս անուրջին,*
*Սիրոյս՝ տենչանքիս՝ յոյսիս յակուրջին՝*
*Ուր կերկնէի մերթ երազ մը յամառ.*

*Այսքան տարի ետք՝ կեանքիս մէջ ամառ.*
*Կապոյտ ու կանանչ այդ բոյրերն անխօս*
*Կը հեղնեն հիմա իմ երազս, աւա՜ղ:*



digitised by A.R.A.R.@

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՀՐԱՊԵԱՆ

*— Երաժշտագէտ —*

Ծնած է Թիֆլիս 1887 ին Սկզբնական երաժշտական կրթութիւնը ստացած է Երաժշտագէտ Մակար Եքմալեանի մօտ. ապա աշակերտած է Ռուսիոյ նշանաւոր բրօֆէսօրներու՝ Սօլօտարկօ, Մարգիկ եւ Սօկօլօվի մօտ: 1908 ին համերգած է եւ կազմակերպած է մի շարք երգչախմբեր. Կովկասի եւ Ռուսիոյ զանազան քաղաքներու մէջ (Բաթում, Վլատիկովկաս, Արգաւէտ, Պրատիգորսկ, Կրասնովոտակ, Ռաստով, Եկատերինոտա եւն.) Եկատերինոտարի հայ համայնքին կողմէ մասնաւորապէս հրաւիրուած է իբրեւ վարիչ երգչախմբի եւ ուսուցիչ Երաժշտութեան զորս վարած է միօրինակ հինգ տարի:1915ի եղած է բուն հիմնադիրը եւ ընդհ. ղեկավար Եկատերինոտարի հայ երաշտահան միութեան: Ռուսական եւ հայկական մամուլը գնահատական յօդուածներ նուիրած են իր համերգներու մասին:



Տեար Յարութիւն Մէհրապեան ճարտարօրէն եղանակած է Տաբեցոյցիս մէջ երեւցած Սարկաւագի հեղինակութիւնը եղող Հայրենի Ռազմերգ ը զոր պէտք է ամեն հայ անհատ՝ երիտասարդ եւ ծեր, մանուկ թէ պատանի, կին թէ օրիորդ բերնուց ուսանին եւ սերունդէ սերունդ կտակեն զայն:



digitised by A.R.A.R.@



ԿԱՐԻՆ
1917 Օգոստոսի վերջերը:



Կարնոյ հայոց Եկեղեցին 1 Սեպտ. 1917 ին այժմ կիսաքանդ.



digitised by A.R.A.R.@

ԳՐԱԿԱՆ ՃԱՇԱԿ

# ՄԻԼՏՈՆԻ

# ԿՈՐՈՒՍՏԻ ԴՐԱԽՏԻՆ

## Գիրք Առաջին

Թարգմանեց բնագրէն
Յ. Մրմրեան

Տաղաչափուած
Յրդ. Սրկզ. Մանաւեանէ

*Երգէ՛ մուսայդ երկնային նախամարդուն առջի մեղք,*
*Որով կերաւ արգիլեալ ծառին պտուղն եղկ ու մեղկ,*
*Մահուանիթն այն՝ աշխարհի թշուառութեանց մ՛ն, պատճառ*
*Եւ կորուստ դրախտին արեւելեան անդանձառ.*
*Մինչեւ եկաւ վերստին կանգնեց մեզ Մարդ գերակայ,*
*Վերստացուց մեզի նոյն երջանկութեանը՝ խաչին գահ,*
*Երգէ ծածկեալ գագաթէն դու Քորեբի, Սինայի*
*Ներշնչող հովիւին մարգարէանալ յանայի*
*Ժողովուրդին Իսրայէլ՝ թէ սկիզբէն ի՞նչպէս բա՛ն,*
*Երկինք, երկիր քաոսէն ըստեղծուեցան աներկբայ,*
*Կամ թէ բարձունք Սիոնի եւ կամ գետակ Սեղովի,*
*Որ պատգամաց դաբերին քով արընթաց հողովի,*
*Հեշտ եւս է քեզ, այն տեղէն ես կը հայցեմ անձկաւէտ,*
*Արկածալից քերթուածիս քու օգնութիւնդ անէթ,*
*Որ թռիչքով մը մեղմիկ չէ որ այսօր սաւառնի՝*
*Տաղաչափեալ կամ արձակ.ընտան վերերն Աւոնի*
*Եւ մանաւանդ ո՛վ Հոգի, ուղիղ եւ սուրբ սիրտը որ*
*Տաճարներէ գեր ի վեր կը համարես դու բոլոր...*
*Լուսէ դու զիս վասն զի, ամենայնի դու գիտակ*
*Սկզբէնի վայրկեանէն աղաւնահերպ թեւիդ տակ,*
*Վերեւն անհուն անդունդին դու միշտ ներկայ ու արթուն*
*Կը գրգայիր եւ իսկ զայն ազատաւոր ըրիր դուն.*
*Լուսաւորէ իմ ներսը՝ խաւարամած է ինչ որ*
*Ու բարձրացուր, կանգնէ՛ վեր ինչ որ ցածուն է տոր...*



digitised by A.R.A.R.@

Որպէս զի մեծ ձեռնարկին բարձութենէն կարեմ արդ
Հաստեղ անհունն նախախնամանն փառաստեղ էին գործն առ մարդ.
Ըսէ՛ դու նախ, է՛ր, երկինք ոչինչ աչքէդ կը ծածկեն,
Անդնդախոր լայնութիւնն ոչ դժոխքին ապաքէն
Է՞ր ըսէ նախ նախածնողք մեր մէջն իրենց սուրբ կեանքին,
Որուն այնքան հովանի, պատսպարան էր Երկին
Հեռացան շուտ Արարչէն, կոխոտեցին կամքն Անոր,
Չը յարգելով միմիայն պատուիրանը նախկին օր.
Թէպէտ էին գերագոյն տէր եւ իշխան բուն արհի,
Իսկ բովանդակ բնութեան եւ արարած աշխահի,
Ամօթալի ընդվզման ո՛վ հրապուրեց զանոնք, ո՞վ,
Նա՛, նա՛ վիշապն անդունդին զինուած վրիժառու նախանձով.
Պատրեց մարդոց նախամայրն նենգութեամբն իր չարաքէն
Ամբարհաւան ընթացքով վտարուած դուրս Երկնքէն
Հրեշտակներու ապստամբ զունդերովն իր բովանդակ,
Վեր բարձրանալ կը ցանկար անոնք իրենց օժանդակ,
Նմաններն իր իսկ վե՛ր, մեծութեամբ մը դարձեալ,
Յաւակնեցաւ լրբօրէն գերազանցել Տէ՛ր բարձրեալ,
Աստուածպետական գահին դէմ փառքի տենչովն ա՛ն իր
Երկնքի մէջ բորբոքեց մարտ մ՚անբարիշտ ու նանի՛ր.
Ամենակալն իսկոյն զայն հրաբորբոք վար գլտորեց
Վար եթերի երկնքէն խոյանքով մը կիզիչ մեծ.
Այն անյատակ կորստի խորխորատն հո՛ն վար, վա՛ր,
Ադամանդի շղթայով մէջ բոցերու պատժարար,
Չի ժպրհեցաւ բարձեալին կարդալ մարտի հրաւէր,
Իննանգամը միջոցին չափող մարդուն տիւ, գիշեր
Կործանեցաւ, վա՛ր տապաս՝ ինքն ու իրեն գումարտակ,
Այլախոռոված, հրաբաւալ անդունդին մէջ անյատակ.
Թէպէտ նոյն ինքն էր անմահ բայց դատակնիքն իրեն դեռ
Տաս բարկութիւն եւ ցասում իրեն համար կը դարբնէր.
Վասն զի նոյն ինքն հիմա, տանջուեր հին դրախտին
Ու երկային հիքութեան մտածումով անհագին.
Արդ բաւակ շուրջ չարակն ցոլացնելով սարսափ, միշտ.
Սառ վեհութեամբ եւ անուր ատելութեամբ խառն միշտ.



digitised by A.R.A.R.@

Մէկ ակնարկով նոյն հետայն ո՛րքան զօրէ աչքն արթնոյն
Խաբարուած ու ամայի տեսնէ վայր մը հոն՝ հեռուն
Բոցրաձոյլ դղեակ մը, փռան նման բոցավառ,
Այդ բոցերէն ո՛չ մէկ լոյս չէր արձակուէր հոն պայծառ,
Այլ խաւար մը զգալի լոկ պատկերող մի՛շտ. վայե՛ր,
Թախիծներու ինք գաւառ հեծութեան մութ եւ ստուեր.
Խաղաղութիւն եւ հանգիստ չը կան երբէք հոն համբուն,
Չը կայ բնաւ հո՛ն յոյս ալ, որ կը հասնի անկենուն.
Այլ անվախճան հոն տանջանք, հոն հեծեծ ահեղ լոկ,
Որուն նման է ծծումբ անծախապէս վառ բորբոք,
Արդարութեան անփոփոխ պատրաստած էր ա՛ն այսպէս
Զարհուրելի մէկ կայան, ապստամբաց համար վէս
Խաւարի մէջ արտաքին տնօրինած էր բանտ, քաոս ,
Երիցս հեռու Արարչէն բաժինն եղաւ ասոնց հո՛ս,
Այո՛, հեռու եւ նոյնքան եւ այն լոյսէն երկնաւոր
Երկրի կեդրոն բեւեռէն որչափ որ էր հեռաւոր,
Բանտն այս վայրըն է անզուգական չքնաղ վա՛ն.
Անոնց ինկած երեսէն իսկ արարչին նոյն անման.
Ընկերները կորուստի հոն նշմարէ ինք նոյն օր·
Յորձանքի մէջ բոցերու, հեղեղներու խորախո՛ր.
Անոնցմէ մին բաւական հրայորձանքին մէջ իր մօտ.
Նախ իշխան մը իրմէ վերջ հանգոյն իրեն անմանօթ,
Պաղեստինի մէջ վերջերս Բէեղզեբուղն կոչուածն ա՛ն
Մեծ թշնամին եւ երկնի մէջ յորջորջուածն իսկ Աստուած·
Ուղղելով խօսքն իր անոր խրոխտ շրթունքովն իր տե՛ս,
Գծեց լռութիւն սոսկալի եւ սկսաւ բանն այսպէս.
—Է՛, միթէ ա՞յն ես դո՛ւ, ա՞ն, անչքացած բայց քանի՛,
Այլակերպեալ եւ անկէ որով լուսոյն մէջ երկնի,
Պճնազարդուած՝ գերարփի պայծառութեամբ լուսաւոր,
Շքեղութեամբ գէհիր ոգիները փառաւոր.
Միթէ դու ա՛ն ես դու ա՛ն, որ դաշինքով փոխադարձ,
Միախորհուրդ, միախոհ եւ նոյն յոյսով յեղակարծ,



digitised by A.R.A.R.@

Բայց խիթալով դու առաջ մեծ վտանգով հաւասար
Ձեռնարկին մէջ այն շքեղ երբեմն ինձ հետ միացար,
Եւ նոյն աղէտը հիմա անկումին մէջ մեզ զուգեց.
Կը տեսնե՞ս արդ, ապաքէն, բարձրութենէն որքան մեծ
Որքան խորը ինկած ենք նոյն անդունդին խորախոր
Եւ նա ինքն երեւցաւ շանթերովն իր մեծազօր
Մինչեւ ցայնժամ ո՞վ գիտէր իր ահաւոր զինուց զօր
Պատուհասն իր ամէն եւ շանթերն վերջ բոլոր:
Զոր կրնայ վրայ ջոկ թափել կատաղութեամբն իր յաղթող
Բնա՛ւ ոչինչ չեմ զղջար, երբէք միտքս չէ իմ փոփոխ. . .:

1919 Կ· Պոլիս



«ՍԱՐԿԱՒԱԳ»

ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԱՆԱՎԵԱՆ

Ծնայ Պոլիս Սամաթիա, սնայ Խասգիւղ, չարչարուեցայ Չարչարանքի քաղաքին մէջ՝ Երուսաղէմ. չորս տարի մնալով ժառ. վարժարանի մէջ. 1897ին ղրկուեցայ իբրեւ ուսուցիչ, Պէյրութ եւ 1899ին Շամ, 1905ին ձեռնադրուեցայ սարկաւագ Երուսաղէմի Սրբ. Պտրքի հրամանաւ Տերունեան Սրբազանէ 1914ին եղայ զինուոր շնորհիւ մեր Երուսաղէմի բարեխիղճ մէկ քանի վարդապետներուն եւ կամքովն Օսմանեանի, ցամաքէն երեսունըութ օրէն թուրք կառավարութեան կողմէ տարագրուեցայ Պոլիս. 1918ին ազատ արձակուեցայ. փառք Աստուծոյ դեռ կ՚ապրիմ ու պիտի ապրիմ եւ այժմ աշխարհիկ:



digitised by A.R.A.R.@

# ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՍԵՐԸ

*Հայ ժողովուրդին*

*Երկնային ոգի՛ սիրո՜ւն հրեշտակ*
*Փայլուն աչքերդ, դէմքդ սպիտակ,*
*Սիրտս հրահրեցին, դարձուցին հնոց*
*Կը վառի մէջս անշէջ հու՜ր ու բոց*

*Կնքեալ աղբիւրին, ո՜չ ջուրն անապակ*
*Կրնան անցնել հոգիիս պապակ,*
*Ո՛չ Սողոմոնի աւազաններն ա՜ն,*
*Սրտիս կրակը, ա՜հ, մարիլ կրնան...:*

*Ե՛րբէք այդ հուրը. ա՜հ մարիլ կրնան,*
*Աշխարհի ծովերն, անհո՜ւն ովկեան.*
*Քու մէկ նայուածքդ ա՜հ վառեց հոգիս*
*Կրակներու մէջ ձգեցիր դու՛ զիս...*

*Հիմա որ այդ հուրն կը վառի անշէջ*
*Ըսէ՜ ո՜վ պիտի մարէ սրտիս մէջ,*
*Միակ նայուածքդ չը քաւէր, սիրու՜ն*
*Խնայէ՛ ինծի, Աստուծոյ սիրուն...:* [*]

---

[*] Հոգ մի՛ ըներ, հայ ժողովուրդը պիտի կարգէ Ձեզի.



digitised by A.R.A.R.@

# ԱՌԹԻՍՏԸ

ԱՄԱԹԷՕՐ
Օր. Է Բարունակեանի

Կ՚ուզեմ որ գծես ինծի մէկ նկար
Բայց ո՛չ թէ անձ մը տժգոյն կամ տկար.
Ո՛չ ալ գառնուկ մը, գայլ առիւծ կամ ինծ,
Ո՛չ իսկ սիրամարգ կուզեմ գծես ինծ.
Չեմ ուզեր որ դու գծես ինծ երբե՛ք
Ծովեր ովկէան անհո՛ւն անհաբեկ,
Ոչ իսկ ալիքներ կըսեմ անոնց խեռ՝
Մի գծեր չուզեմ, բնա՛ւ դա՛շտ, ծո՛ր, լե՛ռ.
Ճարտար վրծինովդ ո՛չ իսկ կուզեմ դուն՝
Որ չը գծես ինծ պալար դղեակ դուն՝
Կամ սաղարթազեղ անտառներ պուրակ,
Շանթեր, կայլակներ իսկ անօրինակ:
Ո՛չ ալ պարտէզներ բուրող ծաղկաւէտ.
Ո՛չ գետ, առուակներ սահող հո՛ն յաւէտ:
Խնդրեմ մի՛ գծեր, նաեւ ինծ բնա՛ւ՝
Ո՛չ երկաթուղի, շոգենաւ կամ նաւ:
Զըլլայ որ երբէք նոյնպէս դուք խորհիք,
Գծել հեղեղներ ծիւն, բուք, փոթորիկ,
Կամ թէ թլփայորդ ամպերով Երկին՝
Ո՛չ ալ իր ներքեւ պճնազարդուած կին:
Աշուն կամ ձմեռ, գարուն կամ ամառ
Պէս պէս պտուղներ որ չե՛ն ինծ համար,
Ի՛նչպէս բացատրեմ գաղափարս ա՛հ,
Ո՛չ կեանք կուզեմ որ գծես եւ ոչ մա՛հ.
Ոչ դժոխք բաղձամ եւ ոչ իսկ դրախտ
Զուզեմ նոյն իսկ որ ժպտի ինծ ի բաղդ
Հաւատա՛ ինծի այո՛, արդարեւ,
Զուզեմ ես աստղեր Լուսին արդ Արեւ
Ասոնցմէ ո՛չ մէկն աչքիս չերեւար,
Զի աշխարհ ինծի գլխովին խաւ՛ար
Անկեղծ ժէստով մը իրաւ քեզ կըսեմ,
Գծէ դու ինծի պատկեր մը վսեմ



digitised by A.R.A.R.@

Բուն խորհրդաւոր լռին անմեկին,
Որուն լոյս, փայլ գեղ չունենայ երկին.
Գծէ դու ինծի դէմք մը հրեշտակի.
Աչքերը թո՛ղ ինձ նայի շեշտակի՝
Խոհուն, մտածկոտ, դիւթիչ. հմայիչ՝
Արցունքը աչքին տամկացած մի քիչ
Ու ծորէ անկէ միայն գութ ու սէր,
Անքարբառ լեզուով սրտիս հետ խօսէր.
Ինքը միշտ տրտում, մերթ ընդ մերթ զուա՛րթ
Այտերուն վրայ փթթէր մէյմէկ վարդ,
Անայիսի պէս ըլլայ գեղանի...
Ծիրան շուրթներէն մեղր հեղանի,
Մազերը գանգուր ցրուած միշտ հովին.
Խելայեղ երգէ անունս գլխովին:

Ցէնէր Եօլու ՍԱՐԿԱՒԱԳ

# Ի՞ՆՉ ՇԱՀ

Ի՜նչ շահ թէ գայ երփներփ ծաղկով ինձ գարուն
Երբ սուգի մէջ սրտէս հոսի միշտ արուն
Սոխակն ի՛նչ շահ թէ միշտ սիրուն դայլայլէ
Քանի սրտիս սիրած երգեր միշտ այլ է...
Ի՜նչ շահ թէ զով փչէ սիւքը եղեմին
Ո՜հ, երբ սիրտս է բոցերու մէջ անմեկին...
Լճակն ի՛նչ շահ թէ միշտ խաղաղ ու հանդարտ՝
Նայուածքն է իր երբ միշտ սառած ու անթարթ
Ի՞նչ շահ թէ ինձ ժպտուն հայի ջինջ լուսին,
Քանի սրտէս դառն հառաչներ կը խուսին,
Ի՛նչ շահ թէ բիւր աստղեր ջահեն իմ վրայ՝
Հոգիս քանի սրտիս մէջ կը պլպլայ.
Ես տակաւին ի՛նչ շահ թէ եմ պատանի.
Մօտ է քանի փարխն ինձ ցուրտ ապանի.
Ի՞նչ շահ թէ վերջ վրաս ձգեն մէկ մեծ քար
Երբ լացող մ'իսկ վրաս երբեք ո՛հ չը գար...:



digitised by A.R.A.R.@



# ԾՈՎՈՒՆ ԱՂՋԻԿԸ

*—Էնուարքօրին մէջ—*

ՎԱՐԴԱՆՈՒՇ

*Լեւոն Բարունակեանին*

*Ծովու աղջիկ մը տիպար.*
*Ոգիներ շուրջ բռնեն պար.*
*Գոգցես պակսին զոյգ թեւեր*
*Որ նէ թռչի դէպ՚ ի վե՛ր...:*

*Շուրջն է համակ ծո՜վ Երկի՛ն.*
*Ինք յանձնուած փոթորկին՝*
*Միտքն երազկոտ, սեւեռուն...*
*Նէ, կը թռչի յոյսերուն....*

*Դէմքին շղարշ մը կապոյտ.*
*Յոյզերու դէմ սա անփոյթ,*
*Վէսուվի պէս սիրտն, հոգին*
*Անհունին մէջ բորբոքին.*

*Մելամաղձոտ մ՚է ինք յոյժ,*
*Կեանք չը թուիր բնաւ անոյշ.*
*Հայեացք՝ խոհուն, ինք խիստ լուրջ*
*Սիրէ գիշերն ու անուրջ.*

*Յուզուած են, բայց, ծովն, ալիք*
*Չ՚ուզեր անոնց սա՛ լալիք,*
*Քանզի իրեն բուն իտէալ՝*
*Խուլ հառաչել, ներքուստ լալ:*

1914 Միջերկրականի վրայ

ՅՐԹ. Տ. ՄԱՆԱՎԵԱՆ
*Սարկաւագ*

# ԻՐԸ ՉԵ՛Ն…

—

Մերթ գիշերուան մէջ լռին,
Արտես հառաչք երբ բռին,
Միշտ կը դիտեմ ջինջ լուսին,
Բայց չեն գեղ, փայլն այն կուսին..:

Անթիւ աստղեր պսպղուն,
Հոգիիս խոր յո՜յս գեղուն,
Ա՜հ, չեմ գիտեր բայց ի՞նչէն,
Այդ ցոլքերը իրը չե՜ն...

Սիւք մը թեթեւ շղարշէ,
Թուփ ու տերեւ կը շարժէ,
Գոգցես հպում մ'անուրջէն,
Բայց ո՜չ. շունչն, հեւքն իրը չեն։

Քնքուշ շուշան, յասմիկ, վարդ,
Փթթին շուրջս բարդ ի բարդ,
Խնկեն դրախտին իսկ մէջէն,
Բայց խունկն ու բոյրն իրը չեն...

Թռչուններն երբ դայլայլեն,
Սիրտս, հոգիս այլայլեն,
Որքան անուշ ալ հնչեն...
Բայց մեղեդիքը իրը չեն...

Ջինջ ու յստակ մէկ վտակ,
Կը սողոսկիմ մարգին տակ.
Կը հմայուիմ կարկաչէն.
Բայց վազքն ու ձայն իրը չկն:



digitised by A.R.A.R.@

Ասդին հանդարտ մէկ լճակ,
Ունի տխո՛ւր իմ վիճակ,
Երկինք փայլին իր մէջէն,
Բայց իր ծաւի աչքեր չե՛ն...

Ո՛հ, յուզուած են ծովն ալիք,
Լսեմ իրենց բիւր յալիք.
Յաճախ անոնք շառաչեն,
Բայց իր ողբն ու հառաչ չե՛ն:

Ծողայ հրաբուն միշտ արեւ,
Սփռէ նա կեանք արդարեւ,
Բարդ ամպերուն իսկ մէջէն,
Բայց ո՛չ հրայքն իրը չե՛ն...

Կը մարմրի հորիզո՛ն,
Վերջալոյսն է խորհիս հո՛ն,
Տակաւ թախիծք յառաջեն,
Բայց իր նուագ հայեացք չե՛ն:

Տիրած է կուռ խոր գիշեր,
Այլ եւս ոչինչ չեմ յիշեր,
Այլ կ'երազեմ ես անյո՛ւշ...
Ու հոտոտեմ վարդ անոյշ...:

ՀԱՅ ԳՈՒՍԱՆ



digitised by A.R.A.R.@

# ԶՔՆԱՂՈՒՀԻՆ

Զքնաղ կուսին՝
Դէմք նիւտ լուսին.
Ներա նայիս՝
Ծիւտ Անայիս

Աչկունք՝ մեղու,
Ձայնն իր՝ աղու.
Մազեր՝ դեղձա՛ն...
Միւտ ցիր ու ցան...

Շրթներ՝ ծիրա՛ն
Առոյգ իրան.
Լանչքն վր համակ
Ուռած կոհակ.

Սիրտ սիրավառ՝
Ձերդ մի բուրվառ.
Իրմէ հեղուն
Գեղ, փայլ, զեղուն.

1910 Եաֆա ***



digitised by A.R.A.R.@

# ԹԱԽԻԾ

## — Ի՛ՆՉ ՓՈՅԹ —

Ի՞նչ փոյթ թէ լուրթ երկինք համակ ամպամած,
Մինչ, ո՛հ, սիրտս է դժոխքի պէս տխրամած.
Արեւն ի՞նչ փոյթ թէ կորուսած իր փայլ, լոյս,
Մինչ նուաղին աչքերս զերդ մի վերջալոյս
Ծով նի՞նչ փոյթ թէ անհուն ծփայ յոյզերով,
Մինչ սիրտս, հոգիս միշտ ալետանց ու խռով,
Շուրջս ի՞նչ փոյթ թէ հնոցք ս՚փռեն թանձր ծուխ,
Դարձած է մինչ ներսըս Վեսուվ հրաքուխ,
Ինչ փոյթ թէ մերթ յորդի զետն այն Նեղոսի
Մինչ իմ սրտէս միշտ յորդ արիւն կը հոսի.
Ի՞նչ փոյթ թէ եմ բանտին մէկ խորշն անհանգիստ
Մինչ, ո՛հ, արդէն ճակատագիրս է դառն, խիստ.
Ի՞նչ փոյթ թէ եմ ծնած անբաղդ իմ մօրէն,
Մինչ տառապանք եղած է կեանքս համօրէն
Որդերն ի՞նչ փոյթ թէ զիս ուտեն երբ մեռնիմ,
Մինչ ո՛հ արդէն կրծեն ուտեն թոքերն իմ...:

Պէյրութ — Գուսան



digitised by A.R.A.R.@

# ԻՄ ԲԱՂՁԱՆՔՍ

*Ինչու օր մը չեմ բաղձար*
*Մտնել սրահ մը լուսավառ*
*Կամ դղեակ մը գեղազարդ,*
*Ուր հուրիներ վխտան յորդ:*

*Չունին երբե՛ք իսկ հրապոյր*
*Ինծ համար գանձ ոսկի, խոյր.*
*Պերճ հանդէսներն արտակարգ.*
*Ոչ զգուանուշ պատիւ, փա՛ռք:*

*Ո՛չ, չեն դիւթեր իմ հոգին*
*Ձայներն աղու նուագին...*
*Դայլայլիկներ թռչնոց բիւր*
*Սար, ձոր. պարտէզ ծաղկափիւռ:*

*Ես կը սիրեմ մշտօրէն*
*Կեանքի խառնակ ժխորէն*
*Հեռո՛ւ՝ խուցիս մէջ անպերճ*
*Փակուիլ, խոկալ հոն անվերջ:*

*Թո՛ղ հոն բնա՛ւ չերեւին*
*Լոյս ճաճանչներն արեւին,*
*Ոչ լուսնակին փաղփուն շո՛ղ,*
*Ոչ իսկ լոյս մը առկայծող...*

*Յօլայ աչքիս թո՛ղ մի խո՛ւն*
*Անդրաշխարհ մը փողփողուն,*
*Ուր միշտ գարուն կենսալիր,*
*Հոգիք ալ չե՛ն թառամիր...:*

ՍԱՐԿԱՒԱԳ



digitised by A.R.A.R.@



Տօք. Գ. Շահնազարեան եւ իր գործակիցները.
Խնուսի գետին մէջ, 1917ին



Արածանի եւ Օսլուխի կամուրջը



digitised by A.R.A.R.@

## ՋՂԱՅԻՆ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ

## — Neurasthénie —

Սոյն հիւանդութիւնը յաճախադէպ եւ գրեթէ սովորական դարձած է եւ արդիւնք է ջղային դրութեան տկարանալուն, որուն կ'ընկերանայ ընդհանուր թուլութիւն եւ տկարութիւն:

Ժառանգականութիւնը, որպէս պատճառ գլխաւոր դեր կը կատարէ այս հիւանդութեան, թէեւ մտային եւ բարոյական մտածմունքը եւ յոգնութիւնը սովորական պատճառներէն կարելի է համարել. ալքոլամոլութիւնը, շատ ծխել եւ շատ սուրճ կամ թէյ խմել, սնդիկի, հաշիշի եւ կապարի թունաւորումներ, անարիւնութիւն եւ զանազան հիւանդութիւններ, օրինակի համար, ճահճային տենդ, (paludisme) որովայնային թիֆ (fièvre thyphoide) ֆրանկախտ, ինֆլիւէնցա, ստամոքսի եւ աղիքներու տկարութիւն եւլն· եւլն·:

Գլխաւոր ախտանշաններն են, գլխու ցաւեր, որոնք կը տեւեն ընդհանրապէս ցերեկ ատեն եւ կը հանդարտին գիշերը:

Անքնութիւն, որոնք յաճախադէպ եւ տաժանելի են, ենթական կը քնանայ, բայց շուտով կ'արթննայ եւ աւելի յոգնած կ'զգայ ինքզինքն քան հանգստացած:

Մարսողութեան խանգարում եւ պնդութիւն, սրտի բաբախում, քրտինք, ոտքերու եւ ձեռքերու պաղիլ:

Ականջներու մէջ ձայներու խժլտուք եւ աչքերու արցունքոտիլ յառաջ կուգայ:

Պատճառներու եւ ախտանշաններու մասին այսպէս համառօտ ծանօթութիւն մը տալէ վերջ անցնինք դարմանումի եղանակին։

Դարմանում.—Առաջին տեղը կը գրաւէ մասաժը (massage) ջրաբուժութիւն (hydrothérapie) եւ ելեքտրաբուժութիւն (éléctrothérapie), միաժամանակ հիւանդները պէտք է լաւ եւ կանոնաւոր սնունդ ստանան, դեղերով դարմանումը երկրորդա-



digitised by A.R.A.R.@

կան նշանակութիւն ունի, բայց եւ այնպէս դեղերը կարող են յաճախ կարեւոր օգուտներ յառաջ բերել, գլխաւոր դեղերը՝ որոնք կարելի է գործածել սոյն հիւանդութեան մէջ Ֆօսֆօռի, արսէնիքի, ստրիքնինի բաղադրութիւններն են, norcotique դեղեր գործածել օրինակ opiumի բաղադրութիւններ sulfoual, véronal եյն.ի չափազանց վնասակար ազդեցութիւն ի գործ կը դնեն ջղային դրութեան վրայ:

Մարսողութեան հոգ տանելու է եւ պէտք չէ բեռնաւորել ստամոքսը, դիւրամարս սննդեղէններ գործածել անհրաժեշտ է, որը 2—3 հաւկիթ մի ջուրի հետ միասին խառնել եւ խմել յաւ եփուած կանաչեղէններ կարելի է ուտել:

Ժամանակ մը յետաձգել մտային եւ Ֆիզիքական բոլոր աշխատութիւնք, գիշերը երկար չնստիլ եւ խոյս տալ աղմկալի երեկոյթներէն եւ խնդումներէ:

Գիւղական կեանքը նախընտրելի է, այսպէսով հնարաւոր կ'ըլլայ քաղաքի աղմկալի կեանքէն հեռու մնալ:

Մէկ խօսքով հանգստանալ ամէն կերպով, այսինքն լաւ ուտել, խմել եւ քնանալ, ոչ մէկ բանի մասին մտածել եւ առողջապահական կանոններուն հոգ տանիլ:

Եթէ մեզ հնարաւոր է հանդարտ պահել մեր մարմինը եւ միտքը, այն ատեն քիչ ժամանակ վերջ կ'ազատուինք ջղային տկարութենէն:

ՏՕՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

*23 Նոյ. 1920 Կեսիկ-Փաշա*

---

*Ապանեօշի դեղ*

Alcool. *(Ալգօօլ)* 100 grm.
Menthol 1 »
Eucalyptol

*Օրը վեց հեղ առնել* la peine
*կաթեցնել թաշկինակին վեց կուք:*

---



digitised by A.R.A.R.@

*Կրթական գործիչ Յակոբ Աղասէրի նամակներէն մին, Մկր Թէոփիլեանի ուղղուած:*

*Կ. Պոլիս 12 Սեպտ. 1912*

Սիրելի Թէոփիլ

Շաբաթէն աւելի է որ, Պոլիս եմ եւ տասը օր եւս պիտի մնամ. որովհետեւ գործերս չկրցայ վերջացնել, ինծի յանձնուելիք շրջանակը վերջնականապէս որոշուեցաւ, այսինքն Քղի, Բալու, Չմշկածագ. կեդրոնատեղիս պիտի ըլլայ Քղի եւ պիտի ունենամ մօտ 20 վարժարան տեսչութեանս տակ: Գործը բաւական դժուար կ'երեւայ, գլխաւորապէս այն պատճառով, որ յեղափոխական կուսակցութիւնները իրենց մարդիկը կրցած են մինչեւ այդ կողմերը հասցնել եւ կռիւներ սարքել դպրոցներու շուրջը: Ձեր գիւղի վարժարանին նախկին Տնօրէնը տեսայ երէկ եւ այն տեսակ պատմութիւններ լսեցի իրմէն դպրոցներու շուրջ տարրական կռիւներու մասին, որոնք Աղեքսանդրիոյ յեղափոխականներու գործունէութիւնը կը յիշեցնեն (*):

Հայկական նահանգներէն հասած լուրերու մասին տեղեկութիւն ունիս անշուշտ արդէն, հոս շատ մեծ յուզում կայ, որովհետեւ ամէն հաւատք վերցած է կառավարութեան բարի կամեցողութեան մասին, պաշտօնի վրայ գտնուողները ոչ մէկ վստահութիւն չի ներշնչեր, եպարքոսին խորհրդականը Ատանայի կոտորածը սարքողն է, ներքին գործերու նախարարը Տանիշ պէյ ժամանակին անդամակցած է Շաքիր փաշայի համբաւաւոր յանձնախմբին, եւ մեծ կոտորածներու հեղինակներէն մէկն է, Վանի նոր կուսակալը հակառակ գրուածներուն ոչ մէկ վստահութիւն չի ներշնչեր, վերջապէս կառավա-

(*) *Կարժէ յիշատակել հոս, թէ այս շրջանին, Մուշեղ Եպիսկոպոս Ալեքսանդրիա գտնուած ըլլալով, բաւական վատ դեր մը կատարած է Լուսաբերի մէջ տեսնուած իր դիմակաւոր յօդուածներով, որով կրթական այս գործիչը վարկաբեկելով ուզած է ինքզինքը գանտիտա ներկայացնել անոր տեղ:*



digitised by A.R.A.R.@

րական շրջանակներու մէջ, ոչ մէկ նպաստաւոր նշան չերեւար, մասնակի այս կոտորածները կրնան աւելի ծաւալով մըն ալ կատարուիլ, ինչպէս ըսի յուզումը շատ մեծ է եւ մթնոլորտը այնչափ լեցուած է որ արդէն սկսած է խօսուիլ: Ցոյցի, տէրօրի եւ նմանօրինակ միջոցներու մասին կացութիւնը ճիշտ այն է ինչ որ էր Գում Գաբուի ցոյցէն անմիջապէս առաջ եւ մի զարմանար երբեք եթէ օր մը հեռագիրներու մէջ կարդաս որ հայերը նորէն սկսած են իրենց նախկին գործունէութեան: Խմորում մը կայ ժողովրդին, որ թէեւ յայրնի չէ թէ ինչով պիտի արտայայտուի, բայց վստահ եմ որ կառավարութեան այս ընթացքը եթէ շարունակուի, շատ հաճոյալի դէպքեր չեն որ պիտի պատահին- Դաշնակցութեան ինչպէս նաեւ միւս յեղափոխական (նախկին) կուսակցութիւններու մէջ իսկ բողոքի ձայներ սկսած են բարձրանալ եւ ընդհանուր պահանջ մը կայ որոշ եզրակացութեան մը հասնելու եւ մի անգամ ընդ միշտ որոշելու թէ ինչ պիտի ըլլայ այս վիճակին շարունակութիւնը եւ ինչ բան անհրաժեշտ է ընել, բողոքողները ինչպէս կերեւայ, յեղափոխական գործունէութեան վերսկսումին կողմնակից են, քանի որ հինգ տարուան բոլոր փորձերը համերաշխութեան հողին վրայ քաղաքականապէս ապարդիւն անցան: Յեղափոխական կազմակերպութիւնները սակայն այսօր legal հողի վրայ գտնուելով եւ բոլոր ..սուրք անունով ու մականունով ճանչցուած եւ քիչ մըն ալ տակերնին տաքցուցած ըլլալով, չեն ուզեր վտանգներու ենթարկուիլ (մանաւանդ որ փախչելիք երկիր ալ չմնաց Ռուս կառավարութեան պատճառով) եւ ես այնպէս կը կարծեմ թէ կազմակերպական շարքերէ ելած պահանջները նախկին գործունէութեան վերադառնալու համար, շատ շատ պիտի կրնան լռեցնել եթէ ուրիշ կողմնակի միջոցներու չի դիմեն monopoleը ձեռքէ չփախցնելու համար:

Հակառակ պայմաններու աննպաստ ըլլալուն՝ պիտի մեկնիմ: Հոս գալէ յետոյ մէկ քանի տեղերէ ալ առաջարկներ եղան, բայց չնայելով որ դեռ պայմանաւորուած չէի Սէրէզի



digitised by A.R.A.R.@

նես եւ առաջարկած պայմաններն ալ աւելի նպաստաւոր էին՝ մերժեցի, որովհետեւ արդէն խօսք տուած էի:

Երբ նամակն ստացայ՝ այսինքն երեքշաբթի գրես կստանամ. Հասցես նամակիս վրայ տպուած է, պէտք է աւելցնել միայն յանձնել Աղասերին: Հասցես սակայն քու սովորական գրովդ մի գրեր, այլ մաքուր որովհետեւ մեր Տանիկ փօսթաճիները շատ intellegene չեն Ֆրանսականով ալ կրնաս դրկել

ՔՈՅԴ ԱՂԱՍԷՐ

## ՅԱԿՈԲ ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

*Ճարտարագէտ, Ելեքտրագէտ, մեքենագէտ*
*Ծնած Պոլիս, ուսած Բարիզ, չի՛ք ու զօգէ՛ք.*

*Միշտ ինք զուարթ,*
*Կայտառ մէկ մարդ,*
*Ճարպի՛կ, արթո՛ւն,*
*Տես զայն առտուն*
*Կամ իրիկուն*
*Չունի նա քո՛ւն...*
*Գործէ արագ՝*
*Իբրեւ կըրակ,*
*Ձիրն իր՝ փարթա՛մ,*
*Անուն կարդա՛մ*
*Քէրէստէճեան*
*Վարպետն է ա՛ն:*





digitised by A.R.A.R.@



ՄԱՅՐ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

*Տնային զբաղումէն վերջ.*



digitised by A.R.A.R.@



Բրօֆիլ Վ. Մանավեանէ

—

Կրթական մեծ գործիչը զբաղման մէջ.

ՅԱԿՈԲ ԱՂԱՍԷՐ

—Տրապիզոնցի—

Բրօֆիլ Ե. Տէմիրճեանէ

—

Ճարտար նկարիչ

ՎԱՀՐԱՄ Տ. ՄԱՆԱՎԵԱՆ





digitised by A.R.A.R.@

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԲԱՆԱՍԱՆ
### Սաղիմական Քրոնիկ

**ԲԱՑ ՆԱՄԱԿ**

**ԽԻՂՃ ՀԱՍԱԿ**

Առ մեծայար եւ պատուական
Միւսիւ Աբիկ Մուպահեաճեան
Անուանակիր
Քրոնիկագիր

*Ազնիւ բարեկամ,*
*Ա՛հ, գէթ մի անգամ*
*Թէ այցելէիր*
*Դու հոս, Սուրբ Երկիր,*
*Եւ վանքն աննախանձ*
*Սրբոց Յակոբեանց,*
*Անշուշտ այդ քան շուշտ*
*Հեռուանց քու գլխուդ*
*Զիս չէիր դատէր,*
*—Ինչպէս կան շատեր—*
*Թէ ինչքա՞ն եմ ես*
*Միթէ՞ չը գիտես...*
*Դուն լաւ գիտես ան*
*Թէ չ՚եմ Ղեւոնդեան*
*Բայց ո՛վ քան զայն չար*
*Դատեմ չարաչար:*
*Լսէ՛ ուրեմն արդ,*
*Կարդալով հանդարտ*
*Յուշարձանն իմ աս*
*Որ զերդ մի Թովմաս*
*Ալ չը կասկածիս*
*Վրայ իմ անձիս,*
*Որ թէեւ հիւանդ*
*Գրեմ անկաշկանդ*
*Թափով մը ներքին,*
*Վկայ արդ երկին:*
*Ծ՞ն դու անձանձիր*
*Հաւատքիս դարձիր*
*Ու համոզուէ լա՛ւ,*
*Թէ վանքն ա՛լ փլաւ*
*Կարգ մը աներես*
*—Այս բառիս ներես—*
*Արարածներէն*
*Որ լոկ ծներ են*
*Գործելու համար*
*Զարիք անհամար:*
*Այսօր մեր վանքն հոս*
*Անյատ ․կ քաոս*
*Մտի՛ր պահ մը հո՛ն,*
*Տես ինչ բարեկրօն*
*Վանականներ կան,*
*Թուով բաւական (՛.)*
*Անդին կարգ մը փուճ*
*Մարդիկ են տեսուչ,*
*Ասդին մէկ կարիճ՝*
*Դպրոցին վարիչ.*
*Երբեմն Պապական.*
*Վարքը ապական.*
*Աչքին միշտ ակնոց*
*Օրն ի բուն փողոց*
*Լքելով տղոց*
*Դասերն ու դպրոց...*
*Իր գլուխ գործոց*
*Մի փակ որբանոց:*
*Մէկ հիւր վարդապետ*
*Ծայրահեղ տգէտ.*



digitised by A.R.A.R.@

Կասուցանէ կրօն
Մինչ ինքն անկրօն.

Ու յարգէ սիրուն
Պատանիներուն

Եւ չոյէ նոյն մեր
Տղոցը կիրքեր.

Իսկ մէկ Եօզղատցի
Լաւ վարող էշ, ձի

Եւ խաբեբայ օձ
Կրթիչ է տղոց

Հրէա մ'ալ նոր
Շաբաթն երեք օր

Տայ ֆրանսերէն դաս՝
Տղոց ի վնաս.

Արապ մ'ալ կրկին
Լեզուվ մը խրթին

Կուտայ թուրքերէն,
Եւ անխղճօրէն

Դրամ վճարեն
Դեռ վանքի արկղէն.

Հատ մ'ալ տիրացու՝
Հոն նուագածու.

Դպրոց նմանի
Քաֆէ շանթանի.

Ապա մտիր ան
Դու մեր դեղարան,

Ափերով դեղին
Վատնուի դեղին,

Հոն կեցած է դեռ
Դեղագործ մը գէր,

Ծոյլ անկարեկիր.
Մինչ վկայագիր

Չունի ձեռքն իսկ ան
Բոլոր միաբան

Դարձած իր գերին.
Ո՜հ, միշտ դեղերին

Օտար դեղարան.
Եւ ոչ որ վրան

Կրնայ խօսիլ բան
Չի ունի պաշտպան:

Ո՛վ որ ունի փող
Կանցնի ջերմն ու դող.

Իսկ զայն չունեցող՝
Պէտք է մեռնէ հող:

Կուզե՞ս դեռ շիպակ.
Լաբէ մի դիտակ.

Կայ մի մասնախումբ:
Աւազակաց խումբ

Վանք շորթողներէն,
Որոնք ելեր են

Հիմա շարունակ
«Վանքն է պարտքի տակ»

Ըսելով ասդին
Խեղճ միաբանին

Բերնէն կը զրկեն,
Միշտ անխղճօրէն

Մինչդեռ առաջ կար
Մէկ մատակարար

Զոր կը ճանչես լաւ,
Խեղճն յանկարծ մեռաւ

Աս վանքի տէրտէն,
Զոր շատեր գիտեն.

Միաբաններն արդ
Կը փնտռեն այդ մարդ.

Չի ինքն էր կարի
Ողորմած բարի

Կուզե՞ս աւելին,
Դիմէ աւելին.

Արդ բուն իսկ համայ
Փոխանորդ է ա՛լ

Ծոյլ քիթ մ'ահագին
Թարգման մեր վանքին.

Իսկ տխմարն ադամ
Ժողովքի անդամ:

Շատ քիչերն են կիրթ,
Տքնող թափող քիրտ.

Մինչ մեծ մասը, մի՛շտ,
Անկի՛րթ, անբարի՛շտ,

Գլուխնին վեղար
Վանքն առնեն յաւար

Շարունակաբար
Հիմա հասկցա՞ր,

Բացառաբար ծեր
Քանի մը անձեր,

Փարած Սաղմոսին՝
Միշտ սապէս խօսին

—«Վանքիս, Տէ՛ր տեսցէ
Եւ այց արասցէ»



digitised by A.R.A.R.@

Ես կըսեմ, ափսո՛ս.
Որ վանքին մէջ հոս
Զր կայ խորհող արդ
Ա՛խ գոնէ մէկ մարդ.
Պատճառն ալ ասոր
Ըսե՛մ քեզ այսօր
—Եթէ հաճիս դուն—
Սահակ, Ղեւոնդ բուն...
Բայց նորա գացին
Գործերն մնացին
Մեր աղաներուն,
Որոնք եռանդուն
Կը գործեն արագ,
Իրարու ներհակ.
Չի են խայտառակ.
—«Է՛հ, հաց ու բարակ
«Կըսեն ազգ մէկ գին,
«Վա՛յ նորը քանողին»
Բայց զգացի ցաւ
—Չի ա՛լ չափն անցաւ—
Որ զիս չես կրցեր
Լաւ ըմբռնել դեռ.
Թէ ես իսկ եմ արդ
—Թէեւ ո՛չ մեծ մարդ՝
Նկարագրի տէր,
Բայց չէի գիտեր,
Մոռցայ իրաւ որ
Թէ եմ պարտաւոր
Խնկարկել յաճախ
Շուրջս աջ ու ձախ
Ասոր ու անոր
Կիրքերուն բոլոր
Ու ասոր համար
Քննադատուիմ յար
Ո՛չ, բարեկամ, ո՛չ
Կըսեմ մեծագոչ
Ես բնաւ չեմ կրնար
Տափահարել յար.
Ու կարդալ ներբող
Կարգ մը նենգ ու գող
Հասուեխայզերուն
Թերութեանց զեռուն
Բռնի անպատճառ.
—Չի չեմ ես ախմար...
Մնամ այդ որքան
Հակաղեւոնդեան
Եւ բարեկամ լաւ
Ես միշտ քոյդ Մանավ

Յ. Գ.—Սոյն դիրէն հիմակ
Քանի մ' օրինակ
Այո՛, դուք կրնաք
Տպել ու շիտակ
Ղրկել անյապաղ
Անոնց որ, աւ՛աղ,
Զունին իրենց մօտ
Երբէք խիպ, ամօթ,
Եւ զամ քան զգամ
Դառնան անզգամ
Իմ ճակատս է բաց
Իսկ Տէրս Աստուած...:

1905
Երուսաղէմ

Արդ նոյնպէս
սա՛ իսկ ես



digitised by A.R.A.R.@

**ՕՐՄԱՆԵԱՆԻՆ ՆԱՄԱԿԸ**(*)

# Ինչ կ'ըսէ Օրմանեան Սրբազան

## Երուսաղէմին վիճակը

—

...Ես քաջառողջ եմ, օդափոխութենէ զգացած օգուտս կը յառաջ գլուխ, ստամոքս, աղիքս լաւ վիճակ ունին: Քունս երբեմն կարճ ալ եղած ատեն, ամենեւին գլուխի ծանրութիւն չեմ զգար, ժիր շարժում ունիմ եւ աշխատութենէ չեմ նեղուիր: Ուտելիքս կանոնաւոր կը պահեմ, բայց խիստ արգելքներ չեմ յարգեր եւ նորէն աղէկ եմ: Գանք վանքին, ներքը խաղաղութիւն է. ըսի-ըսաւ քիչցած կամ լմնցած են, գործերը կանոնաւոր կ'երթան, բայց խառնելու չգար: Երկու մեծ խնդիր կայ. Պատրիարքի ընտրութիւն, կանոնագրի գործադրութիւն: Եթէ ընտրութիւնը խառնենք կիրքերը պիտի յուզուին, թեկնածուները կամ թեկնածուներու գործիքներ մէջտեղ պիտի ելնան. հիմա կը լռեն վասն զի մեծաւորութեան ամէն գործերը իմ վրաս դարձան, ես ալ օտար եմ, ընտրութեան չեմ խառնուիր: Եթէ երբէք ընտրելեաց ցուցակ կազմելու ելլեմ, վախ կայ որ չյաջողիմ, վասն զի մէկու մը վրայ մեծամասնութիւն չկայ: Այս տարուան շրջանաւարտներէն, Արմաշի սարկաւագներուն պէս դասարան մը զատեցի եւ ձեւի կը դնեմ, միայն ուսուցիչ չեմ գտներ. կը վախնամ որ իմ վրաս պիտի մնայ, մանաւանդ ներկայ շփոթներու ատեն: Պարտքի խնդիրին համար ընդարձակ տեղեկագիր մը կը պատրաստեմ: Վանքը դրամ չունի, պաշար չունի, ոչ ուխտաւորք առնէ եւ ոչ ալ վարձքերը նորոգելու ատեն:

Օրմանեան Սրբազան սոյն նամակով ուզած էր ազգին աչքին փոշի փչել՝ ցոյց տալու համար թէ այսպէսով վանքը բարեկարգած էր, մինչ Ազգ. վարչութենէն իր ձեռք տրուած հրահանգը ոտնահարած էր:

---

(*) Սոյն հակասական նամակը Օրմանեան Սրբազան 1914 Օգս.10/23ին Երուսաղէմէն ղրկած է Տեար Տորք. Թորգոմեանի, եւ իբրեւ կարեւորքան մը հրատարակութեան իսկ տրուած:



digitised by A.R.A.R.@

# ՄԵՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԸ

## Ի՞նչ կընէ Երուսաղէմի մէջ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍՊԷՏԻՆ
—Զիֆտէ Սարաֆ—

Տեսնենք ազգային շիտակ վարիչ՝
Ի՞նչ գործ կը տեսնէ ձեռք առած գրիչ՝
Սա «պիտի վընի» կոչուող Սրբազան,
Առջեւն իր առած այն խոշոր մասա՛ն,
Վրան շեղջեցուն տոմարներ ու թուղթ՝
Զանոնք բառնալու պէտք է խանի մ՚ուղտ։
Առաւօտուընէ մինչեւ իրիկուն
Կը գրէ անդո՜ւլ, անխոնջ, անքուն,
Կըպէն, պատրաստէ Ս. Յակոբ վանքին
Տեղեկագիրը հաշիւներուն հի՛ն...
Հոգ չէ թէ սակայն անդին հիւանդ դեռ.
Փութով յառաջեն անթիւ գենդուլներ,
Մեր «Պիտի վընի» Սրբազան արի
Իր սիրտն է մաքուր ու միտքը բարի
Տուած է մինչ ցարդ մեծ գործեր կարի
Եկածէն ի վեր նա՛ կը բարբառի
Բռնած իր ձեռքը հովուական մական
Ահա իր գործերն ընտիր պատմական...
Սա կենդանացուց մեր վանքին պարտէզ
Չես հաւատար նէ եկո՛ւր աչքով տե՛ս·
Լճակ արձաններ այր, կին մարմարէ
—Կուզես նէ դուն ալ առնեց յարմարէ
Մերկ անխողղութեամբ բուն Ադամեանին՝
Սուրբ աչքեր յաճախ անոնց կը նային.
Զորս եղանակներ տարւոյն յիշեցնող՝
Կանգնեց հոն վանքին առագանին կող



digitised by A.R.A.R.@

Ասոնց շուրջ ցանեց ծաղիկ զանազան՝
Ամէն բրիկուն հոն է Սրբազան.
Հո՛ն աւազանին շուրջն ալ ուր գաւիթ՝
Աջ կողմը Մեսրոպ, ձախ նստած Դաւիթ՝
Մեր պիէն վընիւ Սրբազան գիտուն.
—Մեծ Աստուածաբան կրնաս ըսել դո՛ւն
Կամ մեծ տիպլօմաթն ըսենք այն տարեց՝
Թէփին ուզածին պէս վանքը լարե՛ց.
Իր շուրջն առնելով կարգ մը պօշ անձեր
Որոնց ա՛լ չափն ու սահմանն է անցեր.
Եւ որոնք կոչուին այսօր տնօրէն՝
Որը անկրօն, որը՝ անօրէն,
Եւ որոնք ծանօթ ազգին համօրէն՝
Յաճախ վճիռներ կուտան ապօրէն.
Եւ պիէն վընիւ ազգին լիազօր՝
Գործադրէ զանոնք, ի՛նչ ըսիք ասոր...:
Մեր «պիէն վընիւ» Սրբազան բանգէտ,
Մարդիկ շահելու մէջ վարպետ է գէթ.
Ամենուն տե՛ս, սա՛ կարկառէ իր մէ՛ջ,
Բայց ասոնց զեղծմանց միշտ կը գոցէ ա՛չք...
Ո՛չ, չէ՛ ինք դահիճ, երբե՛ք անողոք.
Չուզեր օր մ՚իսկ բայց ըսել ցա՛ւ բողոք
Բարեկարգութիւնք իր օրով ներքին՝
Այսօր բարձրացած է մինչեւ երկի՛ն
Տես միաբան մը, աշխատաւոր ծեր,
Որուն տարիքն ալ ութսունն է անցեր,
Լքուած երեսի վրայ անխնամ
Իր աղբին հետը խաղայ շա՛տ անգամ՝
Իսկ երբ միաբան մ՚է հիւանդ անտեղ.
Ոչ չը կայ անոր տանող դարման դեղ,..
Ո՛վ որ ունի փող, կանցնի ջերմն ու դող
Իսկ զայն չունեցող՝ պէտք է մնէ հող:
Վարժարանն ըսէք մեր ժառանգաւոր,
Համալսարան մը դարձուց իրաւոր



digitised by A.R.A.R.@

Հազար ոսկի մինչև վատնուի հո՛ն փող
Չիկայ ժամուն մէջ ըսող շիտակ փոխ:
Փոքրիկ ու անմեղ տղաքներ ճամբեց,
Մնացին միայն, տասը տղայ մեծ,
Ասոնց համար ալ կըրնամ ապաքէն
Քանի հոգի ալ հաց կուտեն վանքին...
Խնայողութիւն կընեն մէջ վանքին,
Եփելով ոսպն ու տօլմաքս փշաքին.
Պէտք է որ այլ եւս ամէն միաբան
Վարէ բո՛ւն կեանք մը խի՛ստ ճգնողական.
Աղին ալ ամսայն, հինգ տղոց համար,
Կընէ մեծամեծ ծախսեր անհամար.
Նորոգել տուաւ հին հիւանդանոց,
Նոր դասընթացք մը բացաւ հո՛ն տղոց.
Պատրաստելու գէթ ջուխ Աստուածաբան.
Թո՛ղ որ սորված են անոնք ամէն բան.
Կը դատափետէ իրենց Սրբազան,
Տղայք շատ գիտեն խաղեր զանազան,
Ասոնց վրայ ալ յաւել մէկ «ութիւն»,
Որով կը սորվին խաղ «Տատայութիւն»:
Տղայք խոնարհեն այսօր խաղ հայհա՛յ
Զերդ զարգացեալներ յանկարծ «Սիրեմ բայ».
Ու կը մագլցին մինչև պատերէն վեր,
Նոյն խաղ գիշերներն հո՛ս հո՛ն անվեներ,
Ախոռնէն փախած զերդ երիվարներ,
Ազգն ալ ասոնցմէ թո՛ղ սպասէ խե՛ր...
Մեր «սպիկն վըլնիւ» ազնիւ սրբազան
Չուզեր գիտնալ թէ գործերն ո՛ւր հասան.
Երբ նա ամէնէն տեսնէ յարգանք փառք
Կը կարծէ այսպէս վանքն է բարեկարգ,
Ըսի բաներ կըլլայ վերջ գտան.
Որպէս զի անդին եփէ իր «չոր թան»
Չուզեր գումարել Ընդհանուր ժողով
Միտքն է վանք ծածկել մոխիրով հողով:



digitised by A.R.A.R.@

Ինչո՞ւ գործադրէ ա՛ն վանքի կանոն,
Երբ ինքն է օրէնք ու ամէն բան հո՛ն.
«Պէտք չը կայ ընտրել վանքին պատրիարք»
Վերջ մէջտեղ մնան ինքն ու պատրի-արք։

* * *

Երկինքէն հրեշտակ թէ իջնէ իսկ հո՛ս
Ո՛չ, չը շտկուիր կըսեմ վանքն ախո՛ս.
Վանքը շտկելու միջոցն անարգել,
Պէտք է Հայր սուրբներ մեր կարգաւ կարգել,
Այո՛ անոնց քով պէտք է մէկ մէկ կին՝
Որ ազնուացնէ անոնց սիրտն, հոգի՛ն.
Քիչ օրէն ահա պիտ՚տեսնենք կըսեմ·
Որ պիտ՚ունենայ ա՛ն միտք մը վսեմ.
Սրտէն պիտի վանէ ամէն կեղծ ու աղտ
Հաւատքին մէջ ալ պիտ մնայ անխախտ.
Ի բաց պիտ վանէ ատելութիւն, ո՛խ,
Պիտի արբանեակն գողն ու շնացող.
Ա՛լ չըլլայ պիտի անխիղճ, ծոյլ, անկիրթ,
Այլ թափէ պիտի ամէն ջանք ու քիրտ.
Խօսքով ու գործքով այո՛ անպատճառ,
Փառաւորելու Աստուծոյ Տաճար.
Այն ատեն իրմէ խորշող հայ Ազգին,
Հայր սուրբ կոչելով պիտի յարգեն զինք: (*)

1914 Նոյմ. 2 Երուսաղէմ

---

(*) Սոյն ոտանաւոր նամակը Օրմանեանի կեղծ ու-պատիր նամակէն վերջ ուղղուածէր Տեար Յովհաննէս Ասպետի, որ իվերջոյ Կալուօշի մէջ երեւցած ըլլալուն համար՝ Սարկաւագ ի ներկայութեան հայ ուխտաւորութեան կը խոշտանգուի Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մէջ Եկեղեցւոյ կարգապահութեան նախանձայոյզ վեղարաւորի մը կողմէ. եւ հակառակ իր բողոքներուն՝ առանց քննութեան եւ դատաստանի կը յանձնուի Ահաւոր պատերազմի ճիշտ սկիզբը, 1915 Յունվար 9ին Երուսաղէ-



digitised by A.R.A.R.@

## ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԻՏԷԱԼԸ

*Երուանդ Օտեանին*

Թէ իշխանութիւն օր մը ինծ տային,
Բուն իսկ լիազօր քննիչ դառնայի,
Կաղ էշ մ'իսկ նստած, այլ եւ զայրացած,
Ձեռքս ՍԻԵԼ մ'առած, ես վանք կ'երթայի.
Ես վանք կերթայի՛, վա՛նք Ս. Յակոբեանց՝
Լեցուած, որջացած աւազակներով,
Ա՜յ խե՜ղճ Վարչութիւն դու Կեդրոնական,
Տե՛ս, վանքն ես ի՛նչպէս մաքրագործէի...:
Կասէի վանքի անամօթներին,
Հանեցէ՛ք տեսնեմ Ձեր սա՛ վեղարը,
Շուտով կռնակի ալ վերարկուն ձեր.
Բա՛ւ է որքան որ սոքսեցիք վանքը.
Տուէ՛ք ձեր վանքէն դրամներ շորթած.
Որ անով մաքրեմ ձերին աղտերը,
Դուք ալ՝ դու՛րս վանքէն չըրած քար ու քանդ,
Գացէ՛ք, կարգուեցէ՛ք, շատցուցէ՛ք Ազգը:
Թէ ես ըլլէի մի Երեսփոխան,
Քանիս լեցուն, հայ արիւն կրող,
Ես ժամանակաւ շատերու նման,
Ո՛չ, չէի ըլլար ունայն խօսքերով...
Փոխանակ կռուի, սի՛ն խօսքերի տեղ՝
Կանչէի հետս խումբ մը կամաւոր...
Ազատ համարձակ կերթայի Սաղիմ,
Շուտ դու՛րս թափելու հերկչներ բոլոր.
Թէ ես ըլլէի ժողովն Ազգային,
Կուտայի սաստիկ հրաման հային
Երթալ տիրանալ Ս. Յակոբ վանքին,
Դուրս թափել անոնց, մարդիկներն անկին:

---

մի Թուրք զինուորական իշխանութեան ձեռք եւ ցամաքի ճամբով Երուսաղէմէն կը տարագրուի Պոլիս եւ ուր օրուան Պատրիարք Զաւէն Արք. պաճէ զինքը ցաւէն խուլ ու անտարբեր կը մնայ եւ իր հօգեւոր հօր Օրմանեանի այս ապօրէն որոշումը կը նու-իրագործէ: Կեցցէ 20րդ. դարու Հայ եկեղեցականութիւնը:



digitised by A.R.A.R.@

*Բայց եթէ մի օր, մի ժամ մի րոպէ,*
*Լինէի վանքին հրօք պատրիարք.*
*Ի՜նչ մեծ պատուհաս պիտի դառնայի,*
***Մ**եր վեղարաւոր անամօթ խմբին:*

*Ո՜վ դուք մողեքնած, մեծ ամբարիշտներ,*
*Վանքին ցեցերը կըսեմ ամենքդ ալ,*
*Հաշուեխոյսերով. հաշուեխոյզերով,*
*Գիտցի՜ք ազատում չունիք ձեռքէս...:*

*1920 Յունվար 20* ՍԱՐԿԱՒԱԳ
*Աղեքսանդրիա*

**ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ.**

## ՀԱՅՈՒՆ ԳԱՆԳԱՏԸ

*— Կարգենք —*

Կղե՜ր... մարդ մը որ անհոգ ու անցաւ,
Անոր ալ հիմա ա՛լ մօտան անցաւ.
Մէկն որ չէ երբէք ընտանիքի տէր,
Անշուշտ մարդուպես ապրիլ չը գիտեր..:
Մարդ մը որ անգութ, անխիղճ ու չար է,
Ինչպես Աստուծոյ վրայ կը ճառէ.
Ու մեծ մեծ կելնէ դեռ կը քարքառի,
Ջեւանալով Սուրբ, արդար ու բարի.
Թէեւ զառամած ու երիտասարդ
Բայց կրնայ քեզ տալ լաւ սիրոյ դաս արդ.
Քանի որ ան ալ է մեզի պես մարդ,
Անշուշտ կը սիրէ գեղ, փայլ, արդ ու զարդ.
Հազնի վերարկու աղուոր կերպասէ,
Իւղոտ պաստառի միայն կ'ոպասէ.
Կը դնէ նաեւ քուիշէ բակեղ,
Օդափոխութեան ալ կերթայ միշտ գեղ.



digitised by A.R.A.R.@

Կուզէ որ տածես իրեն յարգանք, փառք,
Քէֆին համար ալ կը նստի ինք կառք.
Կրէ մետաքսէ միայն հովանոց.
Ակնոցն ալ պէտք է ըլլայ ոսկեզօծ,
Մարդ չէ՞, կը սիրէ անշուշտ յաւ խնջոյք,
Ամէն քանի իսկ կ'զգայ ինք հաճոյք.
Կուտայ մօրուքին ալ յաւ թուալէթ,
Հոգ չէ թէ չուզեր գիտնալ քու հալէթ.
Ձեռք պէտք է պագնէք երբ որ զինք տեսնաք
Պէտք է միշտ լեցուն ըլլայ իր քսակ.
Որպէս զի ուտէ խմէ փառաւոր,
Ու պարարտանայ այսպէս վիզն ու փոր.
Երբ ներկայանայ իրեն մէկ աղքատ,
Կելնէ իր բերնէն բիւր անէծք, գանգատ.
—«Կորսուէ սըկէ կըսէ անամօթ,
«Փախցուցիր այլ եւս իրաւ դուն համ հոտ..:
Ո՛չ, մի մեղադրէ՛ք, ինքն է չղային,
Քանի մը տօքթօր զինքը կը նային.
Ի՛նչ ճակատագիր, կըսես ի՛նչ բաղդ է,
Կը կասկածիս թէ արդեօք թոքա՞խտ է.
Ալպիւմին ունի՞ թէ արդեօք շաքար,
Միզարգելութի՞ւն ունի՞ կամ թէ քար.
Հիւանդ է խեղճը կ'ըսեմ, միշտ հիւանդ,
Մարմին եղած է այլ եւս քար ու քանդ.
Սիֆիլթէկ է կամ թէ մորթային,
Խանգարմունք ունի անշուշտ մտային...
Կը սիրէ կեանքը միշտ առանձնական,
Ամիսն անգամ մը տեսնել դէմք կնկան.
Ամէն անգամին կը ջղայնոտի,
Քիրտն ու իր շունչը շա՛տ գէշ կը հոտի.
Ո՛հ, դիմանալու համար պէտք է քիթ,
Կուտէ միս, կարագ իւղ կաթ ու հաւկիթ.
Միշտ տեսնէ երազ գիշերէ գիշեր,
Առտուն կը պատմէ իրեն յաւ յուշեր.



digitised by A.R.A.R.@

Ապա զանգատի վրայ իր կեանքին,
Որ պէքեարի պէս կապէր թէք անկին.
Միշտ թափառական անտուն, աներազ,
Ու վրան կուգայ ջերմութիւն, կրակ...
Իսկ սովորական բան մ'է ապաքէն,
Տատերու դէմ ալ պահել ոխ ու քէն...
Ապա ամէն օր ժամ մտնէ արագ,
Իր կարգին կընէ՝ աղօթք, պատարագ.
Ոչ ծոմ գիտէ ան եւ ո՛չ պահք ուտիք,
Մամոնան է իր առաջին բուն դիք.
Կատէ կեանքին մէջ հանճարեղ մարդիկ,
Կը սիրէ աղուոր գինի ու խորտիկ.
Փակուած սենեկին մէջ իր կամ վանքին,
Կը փառաբանէ մանչ, աղջիկ ու կին.
Ի՞նչ վանքեր գիտենք եւ դեռ ի՛նչ տեղե՛ր,
Ուր ապիկարներ եղած են կղեր...
Իբր թէ սոնք քաշուած աշխարհէ՛ն՝
Ամուրիութիւն նստած կ'աշխարեն,
Սուրբ մը կը կարծես նոյն ինքն դա՛ չար,
Երբ որ կը մտնէ Աստուծոյ տաճար.
Ծաղկեայ երբ առնէ վրան ալ փիլոն,
Սաղայէլ մը ճիշտ կը դառնայ ան հո՛ն.
Բռնած ձեռքին ալ գաւազան ու խաչ,
Ա՞լ հրամաններ կարձակէ ձախ աջ...
Կարծես թէ ինքն է ժամուն բուն իսկ տէր,
Ու միշտ կը չեխէ ժամկոչն ու տէրտէր...
Երբ դառնայ աչքը՝ ոչ ոք կը ճանչնայ,
Ոչ օրէնք ունի եւ ոչ Աստուած 'Նա՛.
Պէտք է ձեռք ձեռքի տանք հայերս մենք,
Մեր հայ կղերը այլ եւս կարգենք.

Թերեւս ասով բուժենք ցաւն անո՛ր,
Լաւ գործ մ'ալ բրած պիտ ըլլանք ա՛ն օր,

ԳՈՒՍԱՆ



digitised by A.R.A.R.@

# ՋԻՆՈՒՈՐԻ ԿԵԱՆՔԷՆ
# ԽՈՎՈՒՇԸ

Գիտնական եղիր, կուզես նէ ապուշ,
Պէտք է քի մտնաս մէջ մը մեր խօվուշ·
Քի գիտնաս ի՛նչ է մեր աշխարհը հայ,
Հո՛ն հէմ խնդալ կայ. հէմ ալ նստիլ լալ.
Ախըր չէ անի, նէ ալ կիւլիւպէ,
Հազար խաթ աղէկ է ան գլիւպէ.
Էս կըսեմ ան է մէկ մեծ դպրատուն,
Զը գիտցած բանդ կը սորվիս հոն դո՛ւն.
Տակդ տէօշէմէ, վրադ մէկ թավան,
Ամէն թարաֆէն կը փչէ հավան.
Հոն պիչիմ պիչիմ սրայով մարդիկ,
Որ շապիկ ծախէ, որ մէկը վարտիկ.
Որը ձեռք բռնած է աւել ֆարաշ,
Որ մէկն ալ կընէ գլուխ մը թրաշ·
Դուն անդին նստած՝ կը կոտրես ոջիլդ,
Հիռշ մըն ես եախուտ դու մէկ մեծ Ռոչիլտ.
Մէկն ալ կը կարէ բանթօլին եաման ,
Կըսես թէրզի մ'է ասի ալ եաման.
Որ մէկն ալ նստած շինէ սիկառնիկ,
Անդին կը կռուին Մէհմէտն ու Գառնիկ.
Տասեր կարգուած, որ մէկ նշանուած,
Նստած մտածեն կէս մէջքէն հանուած.
Կամ մինչեւ վերջը գլուխնին քերեն,
Որ մէկն ալ մաքրէ փաչային «փիրէ»ն.
Ո՞ր մէկը կուզես, աղա՞ն մի հաճին,
Պալըխճի՞ն կուզես, մի թուլումպաճին.
Մէխանաճի՞ն մի, խախուտ հայ պախալ,
Արթի՞նը, Նուտա՞ն, Մէհմէտը, Միխա՞լ,



digitised by A.R.A.R.@

Պէրպէ՞րը, բէրգի՞ն, խունտրանի՞ն, աճնի՞ն.
Խասգեղցի Յակոբ, փէրուճան բաճնի՞ն.
Ջավուշ իւզիւմճի՞ն. մի յէպլէպիճին,
Մի սախան կրսեմ յեցնող Ֆրչին.
Ամենքն այ հոս են մէջն այս խօվուճին,
Ու ճաշ խավի է էրեսնուն կաճին.
Երբ պագի ցաշկէ բէփէնին կրակ,
Կը քանան արքըխ քիւֆիւրին տետրակ.
Գործի վրայ են այ, կըռեմ պիւթիւն,
Որը չայ ծախէ որ մէկը թիւթիւն.
Որը սոխ, սըխտոր, որ մէկն այ զէյթին,
Տասերը փռուած, պառկած են գետին.
Որը մուխայլիթ, որը լաֆազան,
Պագին այ տակէն չալէ պօռազան.
Մէկ մաւը խուռնազ, ճաշերը «խախայ»,
Ջօպանի Սեդրակ նստած թուղթ խաղայ.
Ինծի պէս չունի նէպը մէթալիկ,
Կուզէ քի աղուոր ըլլայ ուտելիք.
Պազխին ծախէ իրեն չիֆթ թային,
—Բէճկէ ամէն օր հինծի այ տային.—
Պագի չըքաւոր ճա՛տ խելօք մարդիկ,
Կը ծախեն իրենց ճապիկն ու վարտիկ.
Քի խաթրխ առնեն, նօրէն անօթի,
Կրնաս քովերնին նստէ ճունջն հոտի.
Ջամաճիր կընեն ճաքաթը մէկ օր,
Պագի կը գողնան Ֆանէյադ նոք նոր
Խովուշին մէջ կայ ամէն օր օր քէսաշ,
Կը ծախես սաքօթ «եա՛ հառէչ մէզա՛տ...»
Նախոս քանթայօն մ'աղուոր խումաշէն.
Խալթ կերած է հո՛ն կըսես պօմարշէն,
Սրայով կախուած է գլխուդ վրան.
Խարավանան ու ջուրի մարթառան.
Երպըրխ, մաշրապա, շիշէ մ'այ եաղի,
Ջէ՛ անանկ ամա դեդ մը պայադի.



digitised by A.R.A.R.@

Ի՞նչ պիչիմ նիզամ կուզես եա՛ քանոն,
Պիւթիւնն ալ տեսնաս քի՝ իրաւ կան նո՞ն.
Իշտարքի խովուշն ես դուն էյէտի,
Գիշերէ գիշեր կեյնես նէօպէթի.
Ասանկ ամեն օր իշթէ քու փային,
Տիխաթ պիտ ընես ջուրի տուպային,
Հովին անձրեւին, արեւին, տաքին,
Կայնած քովն իսթիֆ եղած տախտակին.
Եա դառնաս նորի մ՚էթրաֆի վիրա,
Կայնած սահաթ մը դո՛ւն ոտքի վրայ.
Կեյնես շաֆախին, ամէն օր առտուն,
Խազմա եա քիւրէկ ձեռքդ առնես դուն.
Պօշ տեղը անանկ սուտէն մի տքար,
Քշէ տէքօվիլ եախոտ, կոտրէ քար,
Էկէր քի օր մը աստեղ հիւանդ ես,
Գիտցիր քի ձեռքովդ տունդ կը քանդես.
Կառնես մէկ «շէրպէթ», մէկ իսթիրահաթ.
Տախտակին վրայ պառկիս րահաթ
Խազմանով կեփուի իշտէ քու չորպան,
Պագի առուու ալ կուտես դուն չոր պան.
Ձէթին եա չիրօզ, եա՛ խաշէր պանիր,
Կալէթան ալ կեր, կուզես միր բանիր.
Քեզ տէքօվիլի կընէն խօշտըրմիշ,
Էտեւէն կուտան քիչ մ՚ալ չոր եէմիշ.
Պագի ցորեկ ալ կը խմես խոշաֆ.
Դադիկթ օրն ալ ըրէ ա՛լ պօշ լաֆ.
Ջամաշիր լուաս ուրբաթէ ուրբաթ,
Խազան վառելու պէտք է գողնաս փաս.
Եա չէ նէ լաթերդ կը մնան աղտոտ,
Վրայէդ կուգայ ձէնապէդ մէկ հո՞տ.
Փարչան տասն փարա, լուա չամաշիր,
Ասիկա սորվի՛ա արթըխ չես մաշիր.
Աղտոտներ ջուա՛ դու տուր անո՛ր,
Ձուներու կտոր, նեփնէրմակ նօփ նոր.
Գիշերէ գիշեր ալ կայ եօխլամա,
Ֆիրար ընես նէ կուտես ֆալախա.



digitised by A.R.A.R.@

Պագի՛ քու ոռին կը զարնեն չուպուխ,
Հեյպէտ կը մարի հոգիներնուդ մուխ.
Անկէ կը դնեն քեզի ալ զնտան,
Արկատաշներդ ալ պիւթիւն կը խնդան.
Իշթէ աս պիչիմ օրէնք կայ անտեղ,
Գիշերն ալ վառի մարած մէկ կանթեղ,
Գլխուդ վրայ կայ օնպաշի. չավուշ,
Անանկ գօշերներ չիկայ պառկիլ ուշ.
Ամէն իրիկուն թէնպիհ կայ՝ նորէն,
Ուզածնին պօլ պօլ կը խօսին փորէն.
Ասանկով կըլլայ օրը իրիկուն
Քուկին ալ աչքէդ կը վազէ ա՜լ քուն.
Նայէ երազդ չուլերուն վրան,
Սրայով պառկած զօրքեր կը խռան.
Ամա, ես, կըսեմ, բան մը չէ դեռ ա՛ս,
Մինչեւ յուս՝ պօլպօլ ալ տեսնեն երազ.
Առտուն կարթնան ճիտերնին է կախ,
Գործի չսկսած՝ յետ իրե՛նց... «Ա՜խ...»:

5 օգոստ. 1915 — Գրեց
Կ. Պոլիս, Սանճագ Թէփէ, — ՋԻՆՈՒՈՐ ՍԱՐԿԱՒԱԳ

---

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԻԿԵԱՆ

*ԾԱՆՕԹ ԳՐԱՎԱՃԱՌ*



*Ծնած է Թօգաթ 1865 ին. Աշակերտած է Պօլսոյ Ազգ. Հիւանդանոցի Որբանոցը հանգուցեալ Տիգրան Մանավեանի. ուսուցչութեամբ պարապած է՝ յԱտաբազար 1896 ի Պօլսոյ դէպքին հաստատուած է Աղեքսանդրիա եւ հիմնած է Ղազիկեան գրատունը. զոր կը վարէ այժմ իր որդին Ներսէս Յ. Ղազիկեան, ամենայն հաւատարմութեամբ եւ ճշտապահութեամբ:*



digitised by A.R.A.R.@

# ՓԵՍԱՑՈՒՆ

Օր մ'երբ բաղդս բացուի իմ,
Առօք փառօք կարգուիմ,
Ես, չեմ երթար տուն փեսայ,
Կարգուողներ շա՜տ տեսայ:
Զի չեմ ըլլար հո՜ն ազատ.
Պիտ'հրամայեն քեզ ա՛ս, աս.
Ու ամեն օր զոքանչ, նէր,
Պիտ'արձակեն հրամաններ...
Այս բանան ծախսի դուռ,
Ունի՞ս դրամ ա՛լ միշտ տուր.
Մեծ մեծ բանան դեռ դռներ,
Սա նա ըրէ այս մըներ.
Իսկ ամեն օր մէջն ալ տան՝
Վրադ պիտի յոխորտան.
Դուք ալ, անտեղ՝ միս մինակ՝
Խայտառակուիք ու մնաք...
Դեռ չը նստած դու սեղան՝
Գլխուդ անէծք պիտ տեղան.
Դնեն առջեւդ մէկ ոսկոր,
Նստած կրծես գլխիկոր...
Մինչ զոքանչդ ապուր, գէ՛ր,
Կուզէ ըլլաս դու՛ն պանքէր.
Կամ թէ թժիշկ, փաստաբան,
Որ տուն տանիս ամեն բան...
Դըրամ ունի՞ս դուն թէ ո՛չ,
Չը հարցներ, շարժէ պոչ...
Կուզէ թռնես իրեն կառք,
Ու ընծայես պատիւ յարգ:



digitised by A.R.A.R.@

Առողջ ըլլայ ինք, տկար՝
Կուզէ խմել միշտ սիկար.
Նեղ օրերուդ ալ միշտ սուրճ,
Դուն ալ ասդին հագիր քո՛ւրչ:

Չէ՛, չէ՛, բնաւ գործ չէ սա՛,
Տուն փեսա՞յ ես՝ շա՜ն փեսայ,
Ես չեմ երթար տուն փեսայ,
Օրինակներ շատ տեսայ...

Առած աղջիկս, պէտք է, նա՛խ.
Ըլլայ ինձ պէս պարզ, անկախ,
Ու չունենայ ինք ո՛չ, ոք:
Որ հետն ապրիմ ես անհոգ...

Ինքը ըլլայ զարգացած,
Ինձ պէս խելօք, սրտով ցած,
Ոչ սակայն այն մայրերէն,
Որոնք տուներ այրեր են...

Վնաս չըներ թող անի,
Չըլլայ այնքան գեղանի.
Գիտնայ մաքուր հայերէն,
Բայց չը թըռի ինք վերէն:

Ճարպիկ ըլլայ ոչ թէ կոյր,
Պէտք չէ քսուի շատ անզոյր,
Եւ ունենայ սիրտ բարի,
Հոգւով մարմնով ինձ փարի:

Կուզեմ իրմէ լոկ սէր, գութ,
Տուն մ'ունենայ բռնէ կուս,
Աստուած չընէ, երբ մէկտեղ,
Հիւանդանանք, կառնենք դեղ...



digitised by A.R.A.R.@

Այո՛, ուշիմ ու արթուն,
Գործին նայի միշտ առտուն,
Երբ ունենայ մէկ տղայ,
Մինակ անոր հետ խաղայ․․

Իսկ երբ խաղայ ինքը լաող,
Վրդովէ կեանքն իմ խաղաղ՝
Այն՚ատեն ալ ես խելոյն,
Մէջտեղ դնեմ իմ խակ գոյն․․

Բայց ես որ եմ խոնարհ՝ հեզ,
Խրատեմ զինք նախապէս,
Կըսեմ ո՜վ իմ սիրունիս,
Վշտացուցիր այսօր զիս:

Երկրորդ անգամ ալ կրկին,
Կըսեմ «Համբառ շատ չէ կին,
«Ասանկ բաներ չեմ ուզեր,
«Խնդրեմ մ՚ը զիս մի յուզեր...

Իսկ երրորդին եմ բարի
Համբերութիւն ապառի...
Կորիր ասկէ կըսեմ կին,
Մտնեցիր տուն դժոխքին...

ՍԱՐԳԱՒԱԳ

Спецотдел



digitised by A.R.A.R.@

# ՄԵԾ ԳՈՄԻՍԻՈՆԷՐ
## ԺՈԶԷՖ ՃԻԶՄԷՃԵԱՆ
## ՆԵՐԱԾՄԱՆ ԵՒ ԱՐՏԱԾՄԱՆ

*ՍԵԼԱՆԻԿ ԽԱՆ 32 ՂԱԼԱԹԻԱ Կ. ՊՈԼԻՍ*

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

***Մ**օրիս Պէրթէնի Օճառի եւ Անուշահոտութեանց Անանուն Ընկ.եան*

*Դրամագլուխ 2,000,000 ֆրք·*

Կեդրոնատեղի ՆԱՆԹ քաղաք (Ֆրանսա)




**MAURICE BERTIN & C°**

*Société Anonyme*

*des*

*Parfumeries et Savonneries*

Au Capital de 2,000,000

**SIÈGE SOCIAL A NANTES**

*Agent à Constantinople*

**JOSEPH DJISMÉDJIAN**

Sélanik—Camondo Han 2me. Etage 32—GALATA


digitised by A.R.A.R.@

# ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
# ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ՑԱՄԱՔԱՅԻՆ
# ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ
# Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ



**Ներկայացուցիչ Շոգենաւային ընկերութեանց**

*Արտածում, Ներածում, Ապահովագրութիւն*
*Մաքսային Գործողութիւն.*

*Ճամբորդական կանոնաւոր երթեւեկ*

**Մ. Նահանգներու, Քանատայի եւ Հար. Ամերիկայի**
**Երկաթուղով տոմսակ Ամերիկայի եւ Քանատայի**

*Կեդրոնատեղի՝ Մոհամէտ Ալի հրապարակ*
*Մթեռանց. Անաստասի փողոց թիւ 80*

Հեռաձայն թիւ 46—27 Փոստարկղ թիւ 397

Հեռագրական հասցէ՝ **LENOKO**

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ – ԵԳԻՊՏՈՍ
Спец. Отдел
Гос. Публичная

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

ԳԻՆ 110 ԴԱՀԵԿԱՆ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

12001

digitised by A.R.A.R.@

0022473
2013
5246
digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@